

# Հորդուքալ

հեղինակ՝ [Կարել Զապել](#)  
թարգմանիչ՝ Խաչիկ Հրաչյան ռուսերենից

Չնայած այս պատմությունը իր բոլոր մանրամասնություններում արտացոլում է իրական եղելություն, սակայն ամբողջությամբ առած մտածածին է: Հեղինակը չի կամեցել կոնկրետ մարդկանց ու անցքեր պատկերել:

## Քոմիանդակություն

- [1 Առաջին մաս](#)
  - [1.1 I](#)
  - [1.2 II](#)
  - [1.3 III](#)
  - [1.4 IV](#)
  - [1.5 V](#)
  - [1.6 VI](#)
  - [1.7 VII](#)
  - [1.8 VIII](#)
  - [1.9 IX](#)
  - [1.10 X](#)
  - [1.11 XI](#)
  - [1.12 XII](#)
  - [1.13 XIII](#)
  - [1.14 XIV](#)
  - [1.15 XV](#)
  - [1.16 XVI](#)

- [1.17 XVII](#)
- [1.18 XIII](#)
- [1.19 XIX](#)
- [1.20 XX](#)
- [1.21 XXI](#)
- [1.22 XXII](#)
- [1.23 XXIII](#)
- [1.24 XXIV](#)
- [2 Երկրորդ մաս](#)
  - [2.1 I](#)
  - [2.2 II](#)
  - [2.3 III](#)
  - [2.4 IV](#)
  - [2.5 V](#)
  - [2.6 VI](#)
- [3 Երրորդ մաս](#)

## ***Առաջին մաս***

### ***I***

Ահա այն ուղևորը, պատուհանից երկրորդը, ճանաչված կոստյումով, դե ո՞վ կասի, թե նա Ամերիկայից է գալիս: Իսկապես էլ, երբեք չէի հավատա: Ամերիկացիները մարդատարով չեն ուղևորվում, այլ միայն ճեպընթացով, այն էլ մի գլուխ փնթփնթում են: Իբրև Ամերիկայում գնացքները մերոնց թայը չեն, վագոնները ավելի երկար են, այնտեղ ճեփ-ճեփմակ ուեյթն<sup>[2]</sup> սառույցով ջուր է ման ածում ու այսկրիմ:<sup>[2]</sup> Լսե՛լ եք: «Ալլո, բոյ, — մոնչում է այդպիսի ամերիկացին: — Գարեջուր բեր այստեղ, մի մեծ աման զարեջուր, բոլորին մեկական գավաթ, թեկուզ հինգ դոլար լինի՝ կվճարեմ, դեմ»:<sup>[3]</sup> Է՛հ, եղբայրներ, անտեղի ինչ խոսես, իսկական ապրուստը Ամերիկայում է որ կա:

Պատուհանի կողմից երկրորդ ուղևորը հոգնած, քրտնած ննջում է բերանը բաց, իսկ գլուխը ճոճվում է, ասես անկենդան լինի: Աստված իմ, անցել է տասնմեկ, տասներեք, տասնչորս, տասնհինգ օր: Տասնհինգ օր ու զիշեր նստել ճամպուրակին, քնել հատակին կամ նստարանին, ջուր կտրել մինչև շապիկը, փայտանալ, ցնդել մեքենաների աղմուկից, արդեն տասնհինգերորդ օրն է: Է՛հ, գոնե ճար լինեք ոտքերը պարզելու, մի խուրձ խոտ դներ գլխի տակ ու քնե՛ր, քնե՛ր, քնե՛ր:

Պատուհանի մոտ նստած հաստ հրեուհին զզվանքով քաշվում է անկյուն: «Մեկ էլ տեսար քնեց ու պարկի պես ընկավ վրաս. ով գիտի, թե ինչ է պատահել սրան. ամբողջովին

նմրթված է, ոնց որ թավալ տված լինի գետնին: Մի տեսակ տարօրինակ ուղեկից է, հեռու չքաշվե՛մ: Ա՛խ, տեր աստված, ե՛րբ տեղ կհասնենք»:

Պատուհանի կողմից երկրորդ ուղևորը թեքվում է առաջ և, ցնցվելով, արթնանում:

— Այ թե շոգ է, հը՞, — գգուշությամբ փորձում է խոսակցություն սկսել խանութպանի նման ծերուկը: — Հեռո՞ւ եք գնում:

— Կրիվոյ, — դժվարությամբ արտասանում է «տարօրինակ» ուղեկիցը:

— Այդպես, այդպես, Կրիվոյ, — գլխով է անում խանութպանը, ընկած-ելած մի մարդ: — Իսկ հեռվի՞ց: Հեռո՞ւ տեղից եք գալիս:

Պատուհանի կողմից երկրորդ ուղևորը չի պատասխանում, խոշոր, կեղտոտ ձեռքով սրբելով քրտնած ճակատը. երևում է, թուլությունից գլուխը պտտվում է: Խանութպանը ֆսֆսացնում է նեղացած ու շուռ գալիս դեպի պատուհանը: Իսկ հարևանը վախենում է նույնիսկ աչքերը վեր բարձրացնել, հայացքը հառել է թքոտած հատակին ու սպասում է՝ հո նորից իրեն չեն դիմելու: Այն ժամանակ ինքը կրացատրի՝ այո, հեռվից է գալիս: Ասեմ ձեզ, հենց բուն Ամերիկայից: — Ահա թե ի՛նչ, բուն Ամերիկայից: Եվ այդքան հեռու տեղից հյո՛ւր եք գալիս: — Ոչ, ես տուն եմ գնում: Կրիվոյ: Այնտեղ ես կին ունեմ ու աղջիկ: Անունը Հաֆյա է, Հաֆյա: Երբ մեկնում էի, երեք տարեկան էր: — Այդպես, ուրեմն, Ամերիկայից: Եվ երկա՛ր եք ապրել այնտեղ: — Ութ տարի: Այո, արդեն ութ տարին լրացավ: Եվ այդ ամբողջ ժամանակ ես մի տեղ ջոբ<sup>[4]</sup> ունեի: Աշխատում էի իբրև մայներ:<sup>[5]</sup> Ջոնսթոնում: Այնտեղ ինձ հետ մի հայրենակից էր աշխատում, անունը Միխայ Հոբոկ: Տալամազցի Միխայ Բոբոկը: Գերանը նրան տակով արեց, հինգ տարի եղավ արդեն: Այդ օրվանից մարդ էլ չկար, հետը խոսեի, ասեմ ձեզ. դե, ամերիկացիների հետ ինչ խոսես... Բոբոկն ուրիշ, Բոբոկը սովորել էր նրանց լեզուն. բայց գիտեք, երբ մարդ կին ունի, խելք ու միտքը հենց էն է, թե ոնց ամեն բան տեղը տեղին պատմի նրան: Իսկ մի՞թե օտար լեզվով կարող ես պատմել: Իսկ նրա անունը Պոլանա է: — Հապա ո՞նց էիք աշխատում, թե որ նրանց լեզուն չգիտեք: — Բա՛ն ասաց՝ ո՛նց: Ձե՛ն էին տալիս ինձ՝ ա՛յլո, էհե՛յ: Հորդուբայ: Ու ցույց էին տալիս իմ ջոբը. Օրը յոթ դոլար էի գցում, էն աստված, սևեն:<sup>[6]</sup> Մենակ թե Ամերիկայում ամեն ինչ թանկ է, պարոններ: Ապրուստի համար օրական երկու դոլարն էլ չի հերիքում: Իսկ գիշերելու համար՝ շաբաթը հինգ դոլար:

Այստեղ խոսքի մեջ է մտնում դիմացի ուղևորը: — Մակայն, Հարդուբայ, դուք կարող էիք կարգին փող կուտակել: — Դե իհարկե, կուտակել կարելի էր: Միայն թե ես ուղարկում էի տուն, կնոջս: Ասացի՞, որ նրա անունը Պոլանա է: Ամեն ամիս հիսուն, վաթսուն դոլար, պարոնայք, պատահում էր նույնիսկ իննսուն: Բայց այդ միայն այն ժամանակ, երբ Բոբոկը դեռ ողջ էր. գրագիտություն ուներ նա: Աչքաբաց տղա էր այդ Բոբոկը, միայն թե արդեն հինգ տարի եղավ, ինչ գերանը տակով արեց նրան: Այդ օրվանից ես էլ չէի կարողանում փողը տուն ուղարկել ու գնում էի բենկ: Կհավատա՞ք, երեք հազարից ավելի հավաքվեց, իսկ հետո ինձ թալանեցին, փողերս կորան: — Ի՛նչ եք ասում, Հորդուբայ: Իես, սեր,<sup>[7]</sup> երեք հազար ու մի բան էլ ավելի: — Եվ դուք նրան դատի չտվի՞ք: — Է՛հ, մի խոսեք: Որտե՞ղ տաս: Նա թփթփացրեց ուսիս՝ օքեյ հա օքեյ, միայն թե պետք է էղվանս վճարես: Ֆորմենը ասաց նրան՝ յու ար էսվայն,<sup>[8]</sup> ու ինձ ետ բերեց: Այ թե ինչպիսի բաներ են պատահում Ամերիկայում, ասեմ ձեզ: Ախր դա ահագին գումար է, ամբողջ մի կարողություն: Երկնային տեր, ինչպիսի՞ դժբախտություն: Երեք հազար դոլար, մեր փողով ինչքա՛ն կանի:

Յուրայ Հորդուբայը լիովին բավարարված է. հենց որ սկսեցի պատմել, բոլորդ աչքներդ տնկեցիք ինձ վրա: Ամբողջ թրեյնից<sup>191</sup> կթափվեն մտիկ տալու այն մարդուն, որի երեք հազար դոլարը գողացել են Ամերիկայում: Իես, սեր: Այո, այդ ես եմ... Յուրայ Հորդուբայը բարձրացնում է աչքերն ու դիտում հարևաններին. հաստիկ հրեուհին սեղմվում է անկյունին, խանութպանը նեղացած նայում է պատուհանից դուրս ու անձայն ինչ-որ բան ծամում, զամբյուղը ծնկներին դրած մորաքույրը նայում է Հորդուբային հանդիմանական հայացքով:

Յուրայ Հորդուբայը նորից է փակվում ինքն իր մեջ: Դե լավ, չեմ խցկվի. հինգ տարի ոչ որի հետ չեմ խոսել, ու ոչինչ: — Հորդուբայ, ուրեմն ինչպես, դուք Ամերիակայից վերադառնում եք առանց մի գրոշի՞: — Չէ, ինչ եք ասում, իմ ջոքը լավ էր, միայն թե էլ փողերս բենկ չէի դնում, յու բերթ:<sup>192</sup> Մնդուկի մեջ էի պահում, պարոն, բանալին էլ շապիկիս տակ, և ուրիշ ոչինչ: Տուն եմ տանում յոթ հարյուր դոլար: Vell,<sup>193</sup> սեր, էլի կապրեի այնտեղ, միայն թե մնացի առանց էմփոյմենթի:<sup>194</sup> Եվ այն էլ ութ տարի հետո: Լոկաուտ էր, սեր: Ածուխը շատ շատ էր, թե ինչ: Մեր փիթից<sup>195</sup> վեց հարյուր մարդ լիվ<sup>196</sup> ստացան, պարոն: Ամեն տեղից մի գլուխ ազատում էին: Ոչ մի տեղ աշխատանք չկար: Դրա համար էլ ես վերադառնում եմ: Տուն, հասկանո՞ւմ եք: Ինձ մոտ, Կրիվոյ: Ես այնտեղ կին ունեմ ու մի հողակտոր: Այն ժամանակ Հաֆյան երեք տարեկան էր: Յոթ հարյուր դոլար եմ տանում թեխ տակ, նորից կսկսեմ տնտեսությամբ զբաղվել... Կամ կվարձվեմ ֆեքթորիում,<sup>197</sup> կամ կգնամ անտառ կտրելու: — Հորդուբայ, իսկ ձեր կնոջն ու աղջկան չէի՞ք կարոտում: — Կարոտում էի, աստված վկա: Բայց դե գիտեք, փող էի ճամփում նրանց ու մտածում՝ այ սա կովի համար է, սա՝ մի կտոր հողի, սա՝ Պոլանային՝ որևէ բանի համար, ինքն ավելի լավ կիմանա: Ամեն մի դոլարը հաշվված էր, իսկ երբ փողը պահ էի տալիս բենկ, մտածում էի՝ ահա և ամբողջ մի նախիր կով: Իես, սեր, հենց այդ փողերն էլ գողացան: — Իսկ ձեր կինը գրո՞ւմ էր ձեզ: — Չէ, չէր գրում: Նա անգրագետ է: — Իսկ դո՞ւք նրան: — No, sir. Can't wrife, sir,<sup>198</sup> Այն օրից, ինչ Միխայ Բորոկը մեռավ, ես ոչ մի բան չեմ ուղարկել կնոջս: Միայն փող եմ ետ գցել: — Բայց գոնե հեռագիր տվե՞լ եք նրան, որ գալիս էք: — Դե, ի՞նչ եք ասում, ափսոս չի դրա վրա փող ծախսել: Հետո, փոստատարին տեսներ, կվախենար, իսկ ինձանից չի վախենա: Հա՛-հա՛: Ինչ ասել կուզի: — Իսկ գուցե մտածի, որ դուք մեռել եք, Հորդուբայ. ախր այդքան տարի լուր չի ստացել ձեզանից: — Մեռե՞լ եմ: Ինձ պես մուժիկը մեռնի՞:

Յուրայ Հորդուբայը տնտղում է իր հանգուցավոր ձեռքերը:

Իր նման մուժիկը: Բան՝ սաին... Պոլանան խելոք է, Պոլանան գիտի, որ ես կվերադառնամ: — Աստված բոլորիս տերն է: Իսկ ինչ, եթե Պոլանան ողջ չի: — Shut up, sir:<sup>199</sup> Երբ ես գնացի, նա քսաներեք տարեկան էր, և ամուր էր, սեր, ոնց որ պարան: Դուք Պոլանային չգիտեք: Այդպիսի փողերով, ուզում եմ ասել՝ այն դոլարներով, որ ես ուղարկում էի նրան, ու Պոլանան չապրի՞... No, thank you.<sup>200</sup> Ջղայնացած խանութպանը պատուհանի մոտ կապույտ թաշկինակով քրտինքն է սրբում: Գուցե նորից ասի՝ համա՛ թե շոգ է:

Ի՞նչ եք ասում, սեր: Դուք սա շո՞գ եք համարում: Այ, թե որ լոուերդերում<sup>201</sup> լինեիք: Կամ անտրացիոսի հանքահորում: Այնտեղ նիզգերներին են ուղարկում, բայց ես դիմացա, իես, սեր: Յոթ դոլարով: Ա՛յո, Հորդուբայ: Ա՛յո, you niggers:<sup>202</sup> Այո, պարոն, մարդ կարող է շատ բանի դիմանալ: Ձին՝ չէ: Ձիերին չէր կարելի իջեցնել այնտեղ ներքև՝ վագոնիկները քաշելու: Շատ շոգ էր, պարոն: Կամ լոուերդեքը նավում... Մարդը շատ բանի կդիմանա, միայն թե

համաձայնության գաս: Քեզնից պահանջում են, իսկ թե ինչ՝ գլուխ չես հանի. դե, նրանք էլ բղավում են, չարանում, ձեռքերը տարածում... Իսկ փորձեք Համբուրգում իմանալ, թե ոնց գնաս Կրիվոյ: Նրանք կարող են ինձ վրա բղավել, իսկ ես՝ ոչ: Ամերիկա ես ուզում գնալ՝ բանը հեշտից էլ հեշտ է. մեկը ձեզ կնստեցնի շոգենավ, մյուսը կդիմավորի, իսկ ահա ետ գալ, պարոն, ետ գալ ոչ ոք չի օգնի: No, sir. Տուն հասնելը դժվար է, պարոն:

Եվ Յուրայ Հորդուբարը գլուխն է օրորում: Եվ ահա նա ինքն էլ է օրորվում, ճոճվում է մի կողմից մյուսը, ծանր, անկենդան: Յուրայը նիրհում է: Հաստիկ հրեուհին պատուհանի մոտ դժգոհությամբ շուրթերն է սեղմում, զամբյուղը ծնկներից դրած մորաքույրն ու խանութպանը արտահայտիչ հայացքներ են փոխանակում: Այո, այո. այ թե ժողովուրդ է լույս ընկել: Տավար:

## II

Այդ ո՛վ է քայլում այնտեղ, հովտի մյուս կողմով: Տես, տես, կարճ ճաքավոր կոշիկներով: Մեխանիկ է արդյոք: Ձեռքին սև ճամպուկ ունի. անձանոթը բարձրանում է բլրակն ի վեր. այդքան հեռու չլինել, կարելի էր ձեռքերը դնել բերանին ու ձայն տալ՝ փա՛ռք տեր մեր Հիսուս Քրիստոսին, անցորդ, ժամը քանի՞սն է: — Երկուսն անց է, հովիվ: Այդքան հեռու չլինելի, ես էլ կհարցնեի՝ ո՞ւմ կովերն ես պահում: — Իսկ դու կբացատրեիր՝ ահա սրանք, Կնտակը, Չալոն, Աստղիկը, Շեկոն ու այդ հորթը Պոլանա Հորդուբարովայինն են: — Այդպես, այդպես, տղա, լավ կովեր են, մարդու քեֆը գալիս է, միայն թե մի թողնի իջնեն Սև առվի կողմը, այնտեղ խոտը թթվահամ է ու ջուրը դառը: Այդպես, ուրեմն, նա միայն երկու կով ուներ: Իսկ ինչ է, տղա, միգուցե նա եզնե՛ր էլ ունի: — Տեր իմ աստված, էն էլ ինչպիսի՛ եզներ: Պողոպյան, եղջույրները ոնց որ պարզած ձեռքեր: Երկու եզ, պարոն: — Դե, իսկ ոչխարներ: — Ոչխարներ էլ, խոզեր էլ, պարոն. դրանք արածում են հրեն վերևը, Գեշ Պոլոնիևում: Պոլանան խելոք է ու հարուստ: — Իսկ ամուսին ունի՞: Ի՞նչ ես ձեռքդ թափ տալիս, մի՞թե նա գլխավոր չունի: Է՛հ, տղա, յուրախններին չե՛ս ճանաչում՝ ձեռքը տարել է աչքերին ու կանգնել մնացել, ոնց որ քոթուկ:

Յուրայի սիրտը խփում էր արագ-արագ. նա կանգ է առնում շունչը ետ բերելու. «օ՛ֆ-օ՛ֆ... օ՛ֆ-օ՛ֆ»: Դե նրա ուժերից վեր է ու այնպես անակնկալ. Հորդուբարը շնչասպառ է լինում, ինչպես ջուրն ընկած մարդը. հանկարծ նա հայտնվում է իր տանը: Տա՛նը: Մի երկու քայլ էլ չէր արել քարքարոտ հեղեղատով, որ հիշողությունները վրա տվին. այո, այո, այս հեղեղատը հնուց ի վեր այստեղ է, ինչպես և հովիվների կրակներից խանձված այդ փշաթփերը. առաջվա պես քարքարոտ փլվածքում ծաղկում է խոնդատը, արահետը կորչում է ուրցի ու չոր խոտերի մեջ... ահա և մամռապատ քարը, օձափստորը, գիհու ծառը, ահա անտառի եզրը, կովի չորացած կեղտը, հովվական լքված քողտիկը. չկա այլևս Ամերիկյան և չկան ութ տարիները. ամեն, ամեն ինչ այնպես է, ինչպես եղել էր. ուղտափշի տերևներին նստած փայլուն բզեզը, լարծուն խոտերը, հեռավոր զանգերի դողանջը, Կրիվոյի վերևի թամբարդը, բոշիսի մուգ-դարչնագույն մացառուտներից և տան ճանապարհը... Ճանապարհ, որով անաղմուկ քայլում է երբեք Ամերիկայում չեղած լեռնցին, ճանապարհ, որից կովերի ու անտառի հոտ է գալիս, որը տաքացել է արևից, ինչպես հացի փուռ. ճանապարհ, որ ձգվում է ներքև, դեպի հովիտը, անասունների ոտքերի

տակ, ճահճուտը՝ չմփում, և կածանը գնում կորչում է անտառի թավուտում. չէ, սեր, սա ձեզ համար Ջոնսթոնի խարամաբետոնե մայթը չի, որ ճոճում է ներբանիդ տակ: Ոչ ռեյինգներ<sup>[21]</sup> կան, ոչ դեպի մայնե<sup>[22]</sup> քայլող անբոխներ՝ չորս կողմ ոչ մի շունչ, ոչ մի հոգի, միայն ներքև ձգվող արահետ, առվակ ու բոժոժները ծլնագացնող հոտեր... Տուն տանող ճանապարհ, վերադարձ, գառների վզերին կապած զանգակներ և առվակի ափին կապույտ ծաղիկներ...

Յուրայ Հորդուբալը քայլում է լայն-լայն քայլերով — ի՛նչ է նրա համար ճամպուկը, ի՛նչ է ութ տարին. չէ որ սա տան ճանապարհին է, ոտքերն իրենք են քեզ թոցնում: Այսպես աղջամուղջին արտոներից նախիրն է վերադառնում. լիքը կուրծերով կովերը զանգակներն են զնգացնում՝ բի՛մ-բա՛մ, բի՛մ-բա՛մ, ծլնգում են հորթերի բոժոժները... Իսկ ինչ, եթե նստի այստեղ ու սպասի մութն ընկնելուն: Մտնի գյուղ զանգերի դողանջի տակ, երբ կանայք դուրս են գալիս արտասանողոք, իսկ տղամարդիկ կանգնած են լինում ցանկապատների մոտ. մտիկ արեք, մտիկ, այդ ո՛վ է գալիս մեր կողմը: Իսկ ես, ոնց որ նախիրը արոտատեղից, ուղիղ քշում եմ դեպի բաց դարբասը, բարի երեկո, Պոլանա: Ահա և ես, այն էլ ոչ ծակ գրպանով:

Կամ ոչ, ավելի լավ է սպասեմ գիշերվան, մինչև տավարը անցնի, բոլորը քուն մտնեն, ու նոր պատուհանը թակեմ. Պոլանա, Պոլանա: — Օ՛, Հիսուս Քրիստոս, ո՛վ է այնտեղ: — Ես եմ, Պոլանա: Ուղիղ քեզ մոտ եմ եկել: — Օ, փառք աստծու: — Իսկ որտե՞ղ է Հաֆյան: — Հաֆյան քնած է: Արթնացնե՛մ: — Չէ, չէ, թող քնի: — Դե, փա՛ռք, աստծու:

Հարդուբալը քայլում է ավելի արագ: Էն աստված, մարդ թեթև է քայլում, եթե մտքերը շտապում-անապարում են: Այո, որքան էլ վազես, ետևից չես հասնի: Մտքերը քեզնից առաջ են անցնում, մտքումդ դու արդեն արոսենու մոտ ես, որ կանգնած է գյուղի եզրին. քը՛շ, քը՛շ սագեր... Ահա և դու տանն ես: Մարդ ուզում է կոկորդով մեկ բղավել՝ էե՛ն՛, մարդիկ, ինչքան կաք-չկաք, տեսեք ո՛վ է գալիս, ի՛նչ ամերիկացի, պա՛հ-պա՛հ-պա՛հ, զարմացեք, boys<sup>[23]</sup> — ա՛յլո: Իսկ հիմա լու՛ռ՝ ահա նա, քո տունը: Պոլոնան բակում վուշ է ձեռնում: Մոտենա ստևից ու աչքերը փակես: — Յուրայ: — Ինչպե՛ս իմացար, Պոլանա: — Փառք աստծու, Յուրայ, ես ու չճանաչեմ քո ձեռքերը...

Հարդուբալը վազում է հովտի միջով, չզգալով ձեռքի ճամպուկը, որի մեջ ամփոփված է ողջ Ամերիկան. կապույտ շապիկներ, մանչեստրե կոստյում և թեղդի—բեր<sup>[24]</sup> Հաֆյայի համար. Պոլանա, ահա քեզ համար էլ զգեստի կտոր, Ամերիկայում են այսպիսի շոր հագնում. ահա հոտավետ օճառ ու շղթայով handbag<sup>[25]</sup> Իսկ սա flashlight<sup>[26]</sup> է, Հաֆյա, սեղմում ես կոճակը՝ և լույս է տալիս. իսկ այստեղ թերթերից հանած նկարներ են, քեզ համար եմ կտրել պահել: Գիտե՛ս ինչքան շատ էին, աղջիկս, ութ տարի հավաքում էի, բայց ստիպված էի թողնել, այութթեյսում<sup>[27]</sup> չտեղավորվեց: Մաասիր, այստեղ ինձ մոտ էլի ինչ-որ բան կա:

Փառք աստծու, ահա և առուն: Ոչ մի երկաթե կամուրջ, միայն ջրի մեջ շարված քարեր. պետք է ձեռքերդ թափահարելով մեկից մյուսի վրա ցատկես: Է՛, եղբայր, իսկ ահա այստեղ, լաստենու մացառուտում, մենք դեռևս երեխա ժամանակ ոտից-գլուխ ջուր կտրած, վարտիքներս քշած, խեցգետին էինք որսում. իսկ տեսնես մնո՛ւմ է այն խաչը, որ տնկած էր ճամփի ոլորանում: Փառք աստծու, ահա նա, թեքվել է կողքի, բայց դեռ կանգնած է այնտեղ, փոշուց տաք ու փափուկ գյուղական ճամփի եզրին, որից անասունի, խոտի ու հաճարի հոտ է գալիս: Հիմա կերևա Միհալչուկովի պարտեզի ցանկապատը. ահա, իսկույն

էլ հայտնվեց. ծածկվել է ընկուզենիներով ու յասամանով, էլի այնպես երեսի վրա թողած, ինչպես որ կար: Փառք քեզ, աստված, ահա և ես գյուղում եմ: Բարի գալուստ, Յուրայ Հորդուբայ: Եվ Յուրայ Հորդուբայը կանգ է առնում. սատանան գիտե, թե ինչու հանկարծ ճամպրուկն այդպես ծանրացավ: Պետք էր քրտինքը սրբել: Է՛իս, աստված իմ, ինչո՞ւ առվում չվացվեցի. հարկավոր է հանել ածելին ու հայելին և ջրի մոտ սափրվել: Թե չէ իսկապես գնչու եմ դարձել, թափառաշրջիկ, ավագակ: Ետ չդառնա՞մ ու լվացվեմ, քանի դեռ Պոլանայի աչքին չեմ երևացել: Չէ, կարիք չկա, Հորդուբայ, արդեն տեսել եմ քեզ: Միհալչուկովի ցանկապատի ետևի կռատուկով ծածկված խրավանդից զարմացած մի մանչուկ աչքերը չռել է քեզ վրա: Ձայն տուր նրան, Հորդուբայ, հարցրու. «Ո՞ւմ տղան ես, հո Միհալչուկովինը չե՞ս»: Եվ մանչուկը փախչում-ծլկում է, ջմփացնելով բոբիկ տոտիկներով:

Իսկ ի՞նչ կլինի, եթե գյուղը շրջանցի և տուն հասնի ետևի կողմից, մտածում է Հորդուբայը: Այդպես կարելի է, բայց մեկ էլ տեսար հարձակվեցին վրաս. «Է՛յ դու, այդպես ո՞ւր ես խցկվում: Բեղիդ շուռ տուր, թե չէ մի լավ կղաղեմ մտրակով»: Ճար չկա, ստիպված է անցնել գյուղի միջով. օ՛հ, տեր աստված, գոնե ճամպրուկն այսպես ձեռքը ցած չքաշեր:

Խորդենիով պատուհանի ետևում կնոջ դեմք, դեղնաչք արևածաղիկներ. մի պառավ ինչ-որ բան է թափում բակում, երեխաները կանգ են առնում ու աչքերը տնկում նրա վրա. է՛յ, էհե՛յ, մի օտար մարդ է գալիս: Կիրիլ պապիկը շրթունքներն է ծամում և նույնիսկ աչքը չի բարձրացնում վերև. սրտի մի հարված ևս, — և աստված հետներս — Յուրայը, գլուխը կռացնելով, ներս է մտնում իր տան դռնից:

Իր տա՛ն: Ախր դու սխալվեցիր, խելառ: Մի՞թե սա Հորդուբայի փայտե խրճիթն է, փայտե գոմն ու գերանակապ ամբարը: Ախր սա ամբողջ մի կավածատուն է. քարաշեն տունը ծածկված է կղմինդրով, բակում ջրհորն է՝ երկաթյա պոմպով, երկաթե գուրթանն ու փոցխը, — կավածք և ուրիշ ոչինչ. շուտ, Հորդուբայ, շուտ հեռացիր այստեղից քո փոքրիկ սև ճամպրուկով, քանի դեռ տան տերը դուրս չի եկել ու ասել. «Դե, ի՞նչ ես հոտվտում այստեղ»: — «Բարի օր, տան տեր, արդյոք Պալանա Հորդուբայովան այստեղ չի՞ ապրում... Ներողություն եմ խնդրում, ինչպես երևում է, ես մի փոքր սխալվել եմ»:

Արտասանողուդ է դուրս գալիս Պոլանան ու կանգ առնում՝ տեղում քար կտրած: Ձեռքերը ջղածգորեն սեղմելով կրծքին, նա շնչում է ծանր ու ընդհատ, առանց վախեցած աչքերը ամուսնուց հեռացնելու:

### III

Եվ հիմա, Յուրայ Հորդուբայը չգիտի ինչ ասի. քանի՛-քանի անգամ էր պատկերացրել այս հանդիպումը, և ինչո՞ւ սա ոչ մեկին նման չի: Ետևից թաքուն մոտենալով Պոլանայի աչքերը չփակեց, գիշերով չթակեց պատուհանը, չեկավ օրհնանքի խոսքերով երեկոյան ժամին, երբ հոտը զանգերն է հնչեցնում. ո՛չ, ահա ինքը՝ ներս ընկավ կոշտամազ ու անվա: Եվ ինչո՞ւ զարմանալ, որ կինը վախեցավ: Եվ Հորդուբայի ձայնն էլ մի տեսակ օտարոտի է, խոպոտ... Տե՛ր, խրատի՛ր, հասկացրու, թե ինչ կարելի է ասել այսպիսի անմարդկային ձայնով:

Պոլանան ետ է քաշվում, անչափ ետ, թույլ տալով, որ նա ներս անցնի, — ախ, Պոլանա, ես այնպես էլ ներս կմտնեի, — և արտաբերում է համարյա անլսելի ու մի տեսակ ոչ իր ձայնով.

— Ներս գնա, ես Հաֆյային կկանչեմ:

Ախ, Հաֆյայի՞ն: Բայց ես նախ կուզենայի գրկել քո ուսերը, Պոլանա, ու ասել. «Դե, անուշա, ինքս էլ ուրախ չեմ, որ քեզ վախեցրի: Փառք աստծու, ահա և ես տանն եմ: Մի տես, ո՞նց ես դու այստեղ ամեն բան կարգի բերել: Նոր մահճակալ, բարձերի սար, սեղանն էլ նոր ու ամուր. պատին սրբապատկերներ: Ամերիկայում էլ դրանց նմանը չես գտնի: Հատակը տախտակից, պատուհաններին էլ ծաղիկներ: Կեցցես, Պոլանա, դու լավ տանտիրուհի ես:

Յուրայ Հորդուբայը կամացուկ նստում է իր ճամպուռակին: Խելոք կին է Պոլանան, իր գործը գիտե: Ամեն ինչից երևում է, որ մի դյուժինից ոչ պակաս կովեր ունի, գուցե և ավելի: Փառք աստծու, ես իզուր չեմ աշխատել: Օ՛հ, անուշա, համա թե շոգ է հանքահորում: Թե իմանաս՝ ի՞նչ դժոխք է այնտեղ:

Պոլանան չի վերադառնում: Եվ Յուրայ Հորդուբայն իրեն անհարմար է զգում, ասես երկար ժամանակով նրան մենակ են թողել օտար խրճիթում: Կսպասեմ բակում, որոշում է նա, համ էլ կվազցվեմ: Է՛խ, մարդ շապիկը հաներ, սառը ջրի հոսանքը բաց թողներ ուսերին, գլխին, մազերը թրջեր, ջուր շաղ տար չորս կողմ, բավականությունից քրքշար: Չէ, չէ — չի կարելի: Ժամանակը չի դեռ, ժամանակը չի: Առայժմ կարելի է միայն պոմպով մի քիչ ջուր հանել: Առաջ այստեղ մի հորափայտվածք կար և կռունկ դույլի հետ. կռանում էիր ցած, իսկ ներքևում մո՛րթ-մուրթ էր ու խոնավության հոտ էր փչում, իսկ հիմա ճիշտ ոնց որ Ամերիկայում. այնտեղ ֆերմերները ճիշտ այսպիսի պոմպեր ունեն: Չվերցնի՞ դույլն ու գնա գոմ, անասուններին ջուր տա, որպեսզի կովերը փնչացնեն, որպեսզի նրանց թաց ռունգերը փայլեն... Յուրայը յուղոտված թաշկինակը թրջում է ու սրբում դեմքը, ճակատը, ձեռքերն ու ծոծրակը: Ա-ախ, ինչ հաճելի է սառեցնում: Հորդուբայը քամում է թաշկինակն ու աչք ածում, թե որտեղ փռի չորանալու: Բայց ոչ, մենք դեռ տանը չենք, և նա թաց թաշկինակը խցկում է գրպանը:

— Նա քո հայրն է, Հաֆյա, — լսում է Հորդուբայը, և Պոլանան տասնմեկամյա աղջնակին հրում է նրա կողմը: Երեխան վախեցած կապույտ աչքեր ունի:

— Այ թե դու ինչպիսին ես, Հաֆյա, — շփոթված մրթմրթում է Հորդուբայը (իսկապես որ, այսպիսի մեծ երեխային ու թեղդի-բե՛ր) և ուզում է շոյել նրա գլուխը: Միայն մի մատով, Հաֆյա:

Բայց աղջնակը խույս է տալիս ու սեղմվում է մորը, առանց աչքը անձանոթից կտրելու:

— Դե բարևիր, Հաֆյա, — խստությամբ ասում է Պոլանան ու շմփացնում աղջկա մեջքին:

— Թող նրան, Պոլանա: Ինչ վատ բան կա այստեղ, որ երեխան քաշվում է:

— Բարի օր, — շնչում է Հաֆյան ու շուռ գալիս:

Հանկարծ Յուրայն իրեն վատ է զգում, արցունքները պատում են աչքերը, երեխայի կերպարանքը թրթռում է աչքին ու ճապաղվում: «Դե, դե, այս ինչ բան է. է՛, ոչինչ կանցնի: Բոլորը նրանից է, որ այսքան տարի չէի լսել այդ խոսքը՝ «բարի օր»:



— Հայֆա, մոտ արի, — իրար է անցնում Հորդուբալը, — նայիր՝ քեզ համար ինչ եմ բերել:

— Գնա, հիմար, — առաջ է հրում աղջկան Պոլանան:

Հորդուբալը կռանում է ճամպրուկի վրա: Սուրբ աստվածածին, ինչպե՞ս է ամեն ինչ ճմրթվել: Ո՞ւր է կորել էլեկտրական լապտերը: Այ թե Հաֆյան կգարմանա:

— Նայիր, Հաֆյա, սեղմում ես այս կոճակը, և սա լույս է տալիս: Այս ինչ բան է, չի ուզում վառվել: — Հորդուբալը սեղմում է կոճակը, լապտերը ձեռքերի մեջ շուռումնուռ է տալիս ու մռայլվում:

— Ի՞նչ պատահեց սրան: Ա-ա՛, երևի մարտկոցը չորացել է: Նավի վրա այնպիսի դժոխք էր որ: Գիտես, ներքևի տախտակամածում... Հաֆյա, սա լույս էր տալիս: Պայծառ լույս էր տալիս, ոնց որ արև: Մպասիր, ես քեզ նկարներ տամ, կնայես:

Հորդուբալը հանում է լրագրերի ու ամսագրերի թերթերը, որոնց մեջ հագուստ է փաթաթված:

— Հաֆյա, մոտ արի: Տես, ահա սա Ամերիկյան է:

Աղջնակը շփոթված տատանվում է ու նայում մորը: Պոլանան չոր-չոր ու խստությամբ գլխով է անում. «Գնա»: Հաֆյան քաշվելով, տհաճությամբ մոտենում է այդ օտար, լողող մարդուն: Ո՛ւի, հիմա ոնց նետի պես դուրս կթռչեր դռնից ու կվազեր, առանց ետ նայելու կվազեր Մարիլկայի ու Ժոֆկայի մոտ, աղջիկների մոտ, որոնք այնտեղ, կալերի ետևում, փոքրիկ, ծիծաղելի շան լակոտին բարուրում են վերմակի մեջ...

— Մտիկ, Հաֆյա, ինչպիսի՛ կանայք են: Իսկ այստեղ, նայիր, կռվում են, հը՞: Սա ֆուտբոլ է, մի տեսակ խաղ է Ամերիկայում, հասկանում ես: Իսկ ահա այս բարձր տները...

Հաֆյան արդեն ուսով դիպչում է նրան ու վեհերոտությամբ շշնջում.

— Իսկ էնտեղ ի՞նչ է:

Ուրախ խանդաղատանքը համակում է Հորդուբալին՝ դե ահա, երեխան արդեն ընտելանում է:

— Այդ... այդ Felix the Cat:<sup>[28]</sup>

— Ախր եդ փիսիկ է, — բողոքում է Հաֆյան:

— Հա՛-հա՛, իհարկե, փիսիկ է: Դու խելոք աղջիկ ես, Հաֆյա: Սա մի տեսակ... ամերիկյան կատու է, օլ-ռայթ:<sup>[29]</sup>

— Իսկ նա ի՞նչ է անում:

— Նա... նա լիզում է tin,<sup>[30]</sup> հասկանում ես էդվերտիսմենտ<sup>[31]</sup> է, այ թե ինչ:

— Իսկ էստեղ ի՞նչ է գրած:

— Սա... սա ամերիկերեն է, Հաֆյա, դու չես հասկանա: Իսկ հիմա նայիր՝ շոգենավեր, — թեման շտապով փոխում է Հորդուբալը, — ես եկա մի այսպիսի նավով:

— Իսկ էս ի՞նչ է:

— Դրանք ծխնելույզներ են, հասկանում ես: Նավի ներսում շոգեմեքենա կա, իսկ ետևից այսպիսի... այսպիսի պտուտակ...

— Իսկ էստեղ ի՞նչ է գրած:

— Այդ դու կկարդաս ժամանակին, մի ուրիշ անգամ: Դու հո կարդալ գիտես, — ճողոպրում է Հորդուբալը: — Իսկ ահա այստեղ նայիր՝ երկու կար<sup>[32]</sup> իրար են զարկվել...

Պոլանան կանգնել է շեմին, ձեռքերը կրծքին խաչած, ու չոր, սևեռուն հայացքով նայում է դեպի բակ: Նրա ետևը, խրճիթում, երկու գլուխ թեքվել են իրար: Տղամարդկային ձայնը կմկմոցով պատմում է Ամերիկայի մասին, աշխատելով ինչ-որ բան հասկացնել:

— Այ թե Ամերիկայում ոնց են անում, Հայֆա: Իսկ ահա սա էլ մի անգամ ես ինքս իմ աչքով տեսա... — Հետո Հորդուբալի լեզուն բոլորովին շաղվում է, և նա մոմում է, — Հաֆյա, մի տես մայրիկդ ո՞ւր է:

Ասես գերությունից ազատվելով, Հաֆյան դուրս է թռչում արտասանողով:

— Սպասիր, — կանգնեցնում է նրան Պոլանան, — հարցրու, միգուցե նա ուտել է ուզում... կամ խմել:

— Հարկավոր չի, աղավնյակս, հարկավոր չի, — հրաժարվում է Հորդուբալն ու շտապում դեպի շեմը: — Ծնորհակալ եմ, որ հոգացիր, սրտանց շնորհակալ եմ, հարկ չկա շտապելու. դու, անշուշտ, ուրիշ գործեր էլ կունենաս...

— Գործը միշտ էլ անպակաս է, — անորոշ կերպով արձագանքում է Պոլանան:

— Դե, այ տեսնում ես, Պոլանա, այ տեսնում ես: Ես քեզ չեմ անհանգստացնի, զբաղեցնելով իմ գործերով, ես հետո... ես ինչ...

Պոլանան աչքերը բարձրացնում է նրա վրա, ասես ուզում է ասել, ուզում է ամեն ինչ միանգամից ասել, բայց շրթունքներն սկսում են դողալ, և նա լուռ գնում է իր գործերին. չէ՞ որ դրանք միշտ էլ անպակաս են:

Կանգնած դռների մեջ, Հորդուբալը նայում է նրա ետևից. չգնա՞ նրա ետևից սարայ: Չէ, առայժմ չէ. սարայում մութ է, լավ չի լինի այդ...

Ութ տարի, եղբայրներ, ո՛ւր տարի: Խելամիտ կին է Պոլանան, ջահել աղջկա պես չի փաթաթվում վզիդ: Վատ չի լինի նրան հարձուվորձել այս ու այն բանի, դաշտի, անասունների մասին: Դե, աստված իր հետ, նրա գործերն անպակաս են: Պոլանան առաջ էլ այդպես էր՝ աշխատող, ծանրաբարո, խելամիտ:

Հորդուբալը մտախոհ դիտում է բակը: Բակը մաքուր է, ծածկված աղպատով ու հարսնմատով, ոչ մի տեղ աղբահյուրի հետք անգամ չի նկատվում: Չգնա՞ տնտեսությանն աչք ածի: Չէ, պետք չի, առայժմ պետք չի: Պոլանան ինքը կասի. Յուրայ, գնա տես՝ ո՞նց եմ տնտեսությունը վարել: Ամեն ինչ աղյուսից է ու երկաթից, բոլորը նոր, այսքան ու այսքան է նստել: Եվ ես կասեմ՝ լավ է, Պոլանա: Ես էլ եմ որոշ բաներ բերել տնտեսություն: Պոլանա, դու տնտեսությունից լավ ես գլուխ հանել: Ու բարեկազմ ես դու, Պոլանա, բարեկազմ ես, ոնց որ նորապսակ աղջիկ: Աստված իմ, ի՞նչ ուղիղ է մեջքը: Պոլանան միշտ էլ այդպես է քայլել, դեռևս աղջիկ ժամանակ գլուխը բարձր էր պահում: Հորդուբալը հառաչեց ու ծոծրակը քորեց: Ինչ արած, թող քո ուզածի պես լինի, Պոլանա: Ութ տարի շարունակ ինքդ

ես եղել քո տիրուհին, մի անգամից կոտրել չես կարող: Ինքդ կխոստովանես՝ լավ է, որ հիմա տանը տղամարդ կա:

Հորդուբայը մտախոհ դիտում է իր բակը: Ամեն ինչ փոխված է, ամեն ինչ նոր ձևով: Պոլանան տնտեսության մեջ հաջողակ է: Իսկ ահա այդ աղբը, աղավնյակներս, այդ աղբը ինձ դուր չի գալիս: Դրանից ախոռի հոտ է փչում և ոչ թե գոմի: Ահա պատից կախված է երկու անուր, իսկ բակում ձիու թրիք կա: Պոլանան ձայն էլ չհանեց, որ ձիեր է պահում: Լսիր, Պոլանա, ձին կնկա բան չի: Ախոռում տղամարդ է հարկավոր, ահա թե ինչ:

Հորդուբայը մտահոգությամբ ճակատն է կնճռոտում՝ նա սմբակի հարվածներ է լսում տախտակե միջնապատին: Ձին դոփում է, ինչպես երևում է՝ ծարավ է: — Բրեզենտե դույլով ջուր տանեմ նրան: Չէ, չէ, Պոլանան ինքը կխնդրի. «Յուրայ, գնանք, այք ածիր մեր տնտեսությունը»: Ջոնաթոնում էլ ձիեր կային, այնտեղ ներքևում, բովանցքերում: Մոտենում էի դունչները շոյելու, — այնտեղ կովեր չկային, Պոլանա, այ թե ինչ: Իսկ որքան լավ է, երբ բռնում ես կովի եղջյուրից ու գլուխը ցնցում, օհի՜ հո՛, պառավա: Իսկ ձին... Դե, փառք աստծու, հիմա տանդ տղամարդ ունես:

Եվ հանկարծ հին, վաղուց ծանոթ մի հոտ է առնում: Հորդուբայը հոտոտում է երկար ու բավականությամբ: Փայտ: Փայտերի խեժոտ բուրմունքը, արևի տակ մնացած սոճու խղանների հոտը: Ցախանոցը հրապուրում է Յուրային: Ծղանները լավն են, մեծ-մեծ, հաստակեղև: Ահա և կոճղը՝ մեջը խրված կացնով, փայտե իշուկն ու սղոցը: Հին սղոցը: Հին սղոցը, որ հղկվել է նրա ափերի մեջ: Հորդուբայը շնչում է խորը — բարի գալու՛ստ — հանում է պիջակն ու խղանը դնում իշուկին:

Քրտնած ու երջանիկ, նա ձմռան փայտ է սղոցում:

## IV

Յուրայն ուղղում է մեջքը ու քրտինքը սրբում: Ինչ որ ճիշտ է, ճիշտ է: Այ, սա է աշխատանքը: Այն չի, ինչ պիթում: Հոտն էլ է ուրիշ: Պոլանայի փայտերը լավ փայտեր են, խեժոտ. մեջները ոչ ծուռ կոճղեր կան, ոչ չորուկներ:

Բադերը կոնչում են, սագերն աղմուկով դես ու դեն նետվում. մոտերքում լավում է սայլի դորդյուն, և սայլը սրընթաց թեքվում է տան կողմը: Պոլանան դուրս է թռչում սարայից ու վազում դարբասը բանալու: Ա՛խ, Պոլանա, դու վազում ես աղջկա նման:

Դե այդ ո՞վ է, ո՞վ է գալիս մեզ մոտ: Ծրիսկում է մտրակը, տաք, ոսկեգույն փոշին գալարվում է օդում, և գույգ ձի լծած սայլը ներս է ընկնում բակ. սայլը թխկթխկում է, իսկ նրա վրա հունգարական ձևով կանգնած է մի երիտասարդ. նա սանձերը բարձրացնում է վեր, բարձրաձայն բղավում՝ «թփը՛ռռ» և ցած թռչելով թփթփացնում է ձիերի խոնավ պարանոցներին:

Մոտենում է Պոլանան, գունատ ու վճռական:

— Յուրայ, սա Շտեպանն է: Շտեպան Մանյան:

Ձգափոկերի վրա կռացած մարդը կտրուկ ուղղվում է, դեմքով դառնում է Յուրային: «Այ քեզ սևամորթ, — մտքում զարմանում է Հորդուբալը: — Աստված իմ, իսկը ագռավ է»:

— Ինձ մոտ բատրակ է, — ամուր ու որոշակի ավելացնում է Պոլանան:

Երիտասարդն ինչ-որ փնթփնթում է, կռանալով լծասարքին և, ձգափոկերն արձակելով, մի ձեռքով պահում է երկու ձիերին, իսկ մյուսը առանց այլևայլության մեկնում է Հորդուբալին:

— Բարի եկար, պան:

Պանը ձեռքն շտապով քսում է տաբատին ու պարզում Շտեպանին. Հորդուբալը գլուխը կորցրել է, միաժամանակ հաճելի է նրան. նա շփոթվում է, քրթմնջում ինչ-որ ու նորից, ամերիկյան ձևով, թափ տալիս Շտեպանի ձեռքը:

Շտեպանը պստիկ-մստիկ, բայց բարեկազմ ջահել է: Հասակով հազիվ Յուրայի ուսերից լինի, բայց հանդուգն ու գրգռիչ կերպով նայում է ուղիղ նրա աչքերի մեջ:

— Հիանալի ձիեր են, — մոթմոթում է Հորդուբալն ու ձեռքը տանում՝ նրանց մոռութները շոյելու: Սակայն ձիերը խրտնում են ու ծառս լինում:

— Ձգույշ պան, — ասում է Մանյան, և նրա աչքերում ծաղր է նկատվում, — սրանք հունգարական ձիեր են:

Ախ դու, սևամոռ, կարծում ես ես ձիերից գլուխ չե՞մ հանում: Ճշմարիտ է, չեմ հանում, բայց ձիերը տիրոջը կվարժվեն:

Ձիերը ցնցում են գլուխները, ուր որ է տեղներից կպոկվեն: Հորդուբալ, ձեռքերդ դիր գրպաններիդ ու տեղիցդ մի շարժվիր, թող այդ սևամորթը չկարծի թե վախենում ես:

— Այ, էս երեք տարեկան ձին հեծելագորային հովատակից է, — պատմում է Մանյան: Նա բռնում է ձիու պոչից: — Յ-ց-ց... Է-է: Վայ, սատանա: Հայդե: — Ձին թափահարում է գլուխը, իսկ Շտեպանը ծիծաղում է միայն:

Պոլանան մոտենում է, մի կտոր հաց պարզում ձիուն: Շտեպանը, աչքերը փայլեցնելով նրա կողմը, բռնած ձիու լկամից, սեպերն է բացում...

— Է-է, հանգիստ:

Շտեպանը ներքին լարումից սեղմում է ատամները, ձին ասես քարացած կանգնում է տեղում և, պարանոցը գեղեցիկ ծռելով, տիրուհու ափից շրթունքներով վերցնում է հացը:

— Դե-ե՛, — բղավում է Մանյան և, ամուր բռնած ձիերի լկամներից, տանում է նրանց ախոռ:

Պոլանան նայում է նրանց ետևից:

— Հովատակին չորս հազար են տալիս, — աշխուժորեն հայտնում է նա, — իսկ ես չեմ ծախի: Շտեպանն ասում է, որ ուրիշ հազար էլ արժի: Իսկ գամբիկը աշնանը կգուգավորվի...

— Այ քեզ բան, ինչո՞ւ հանկարծ շփոթվեց և ասես լեզուն կծեց: — Հարկավոր է նրանց կեր տալ, ասում է նա անվստահորեն և պատրաստվում է հեռանալ:

— Այդպես, այդպես, կեր տալ, — համաձայնում է Յուրայը: — Լավ ձի է, Պոլանա. իսկ ինչ, լծած ժամանակ է՞լ այդպես լավ է:

— Լծա՞ծ: Ախր այդպիսի ձիուն լծելը մեղք է, — գրգռվում է Պոլանան: — Դա քեզ համար հո գյուղական լծկան ձի չի:

— Երևի այդպես է, — զսպում է իրեն Հորդուբալը: — Այդ ճիշտ է, մեղք է այդպիսի կտրիճ ձին: Լավ ձիեր են, աղավնյակս, նայում ես՝ հոգիդ փառավորվում է:

Մանյան արդեն դուրս է գալիս ախոռից՝ ձեռքերին երկու բրեզենտե դույլեր:

— Պան, նրա համար ութ հազար կվերցնենք, — վստահորեն ասում է նա: — Իսկ աշնանը հարկավոր է զամբիկին զուգավորել: Ես նրա համար էնպիսի մի հովատակ եմ ճարել, իսկը քաջք:

— Բրո՛ւտը, թե Հեյդուսը, — կես-ճամփից շուռ է գալիս Պոլանան:

— Հեյդուսը: Բրուտը ծանր կգա: — Մանյան սև բեղիկների տակ բացում է սեպերը: — Պան, չգիտեմ դուք ոնց, բայց ես ծանրաշարժ ձիուն գին չեմ տա: Ուժը տեղն է, իսկ ցեղը՝ հեչ: Ցեղ չունի, պան:

— Հըմ, ճիշտ է, — անվստահորեն արձագանքում է Հորդուբալը, — ցեղը հայտնի բան է... Դե, իսկ կովե՛րը, Շտեպան:

— Կովե՛րը, — զարմանում է Շտեպանը: — Դուք կովերի՞ մասին եք հարցնում: Այո, տիրուհին երկու կով ունի, ասում է՝ կաթ է հարկավոր: Իսկ մի՞թե դուք դեռ ախոռում չեք եղել, պան:

— Ուոչ: Գիտես, ես քիչ առաջ եմ եկել, — պատասխանում է Հորդուբալն ու մոլորվում. ախր ահա ամբողջ մի բլուր փայլտ է կտրել, չես կարող թաքցնել: Բայց և այնպես Հորդուբալը գոհ է, որ Շտեպանի հետ հեշտությամբ «դու»-ի անցավ: Տիրոջ և բատրակի միջև այդպես էլ պետք է լինի:

— Հա, — շարունակում է Հորդուբալը, — ես հենց պատրաստվում էի այնտեղ գնալ:

Շտեպանը, դույլերը լցելով, տիրոջն առաջնորդում է ախոռ:

— Մեզ մոտ, այնտեղ... տիրուհու մոտ, երեքշաբաթական քուռակն է ու ծանրացած մատակը: Երկու ամիս առաջ է բեղմնավորվել: Էս կողմ արի, պան: Իսկ այդ մալած ձին համարիք ծախած: Երկուսուկես հազար: Լավ ձի է, բայց ես երեք տարեկանին եմ լծում՝ հարկավոր է վարժեցնել: Իրասածի է: — Մանյան նորից է սեպերը բացում: — Այդ մալած ձին բանակի համար է: Մեր ձիերը միշտ էլ բանակի համար են վերցրել:

— Այդպես, այդպես, — համաձայնում է Յուրայը, — այստեղ քեզ մոտ մաքուր է, Շտեպան: Դե, իսկ ինքդ բանակում ծառայած կա՞ս:

— Հեծելագործում, պան, — քմծիծաղում է Մանյան ու ջրում եռամյա ձիուն: — Մտիկ միայն... ի՞նչ գլուխ է: Հապա զավակը: Է՛իս, ցը-ցը-ցը: Չգույշ, պան: — Եվ Շտեպանը բռունցքով թփթփացնում է ձիու պարանոցին: — Ա՛իս, ավագակ... Այ սա ձի՛ է:

Ախոռի սուր հոտից Հորդուբալն իրեն վատ է զգում: Ուրիշ բան է գոմը՝ կաթի, արոտի, գոմաղբի հարազատ բույրը:

— Իսկ ո՞ւր է քուռակը, — հարցնում է նա:

Քուռակը, դեռևս բոլորովին բրդոտ, ծծում է մորը: Նա ամբողջովին կազմված է ոտքերից: Չամբիկը թեքում է գլուխն ու խելացի ասքերը շում Հորդուբալի վրա: Դե, իսկ դո՛ւ ինչ ես անում այստեղ: Հուզված Յուրայը շոյում է նրա տաք, թավշյա կոնակը:

— Լավ մատակ է, — ասում է Շտեպանը, — միայն ծանրաշարժ է: Տիրուհին ուզում է ծախի: Միայն թե գիտեք, պան, մուժիկը ձի չի առնում, իսկ բանակի համար վերցնում են տաքարյուն ձիեր, ուղղակի կրակ: Հանգիստները նրանց պետք չեն: Այնտեղ բոլորը նման են իրար: Չգիտեմ, թե դուք ոնց եք նայում այդ բանին, պան...

— Դե, դրանից Պոլանան է լավ հասկանում, — անվստահորեն մոմոնում է Հորդուբալը: — Իսկ այ եզների բանը ոնց է: Պոլանան եզներ ո՞նի:

— Դե, ախր եզներն ինչի՞ համար են, պան, — քնծիծաղում է Մանյան: — Դաշտում մատակն ու մալածը հերիք են: Իսկ միսը հիմի գին չունի: Խոզի միսը էլի մի կերպ գնում է: Տեսե՛՛ր եք, տիրուհին ինչ վարագ ունի: Դրան ավելացրու վեց խոզերն ու տասնչորս խոճկորները: Խոճկորներն ուղղակի խլիպում են, դրանց համար հեռու տեղերից են մեզ մոտ գալիս, պան: Ու մեր խոզերն էլ ոնց որ փղեր լինեն՝ մորթները սև, կճղակները սև...

Հորդուբալը մտածկոտ օրորում է գլուխը:

— Դե, իսկ խոճկորների համար կաթը ո՞րտեղից եք ճարում:

— Պարզ է, մուժիկներից, — ծիծաղում է Մանյան: — «Է՛յ, չե՛ս ուզում մեր վարագը քո կեղտոտ խոզի վրա քաշել: Ամբողջ շրջանում էդպիսի վստահելի վարագ չես ճարի: Իսկ դրա դիմաց քանի՞ դույլ կաթ ու քանի՞ պարկ կարտոֆիլ կտաս: Ծիշտ եմ ասում, պան, էդպիսի բանի համար չարժի մեջք ծռել: Քաղաքն էստեղից հեռու է, առևտուրը՝ վատ: Հիմար ժողովուրդ է. պան: Ամեն ինչ մշակում են իրենց համար միայն, դե, ուրեմն, քանի որ ծախել չեն իմանում, թող տան մեզ:

Հորդուբալը անորոշությամբ գլխով է անում: Ծշմարիտ է, ճշմարիտ, մեզ մոտ միշտ էլ առևտուրը վատ է եղել, սագերն ու հավերը՝ էլի մի կերպ: Իսկ Պոլանայի մոտ ամեն ինչ տեղը-տեղին է: Այո, ինչ որ ճիշտ է, ճիշտ է, տանտիրուհիս գործերից լավ է գլուխ հանում:

— Ապրանքը պիտի ծախել հեռու տեղերում, — դատում է Շտեպանը, — ու էնպիսի ապրանք, որ օգուտ բերի: Դե, մի կճուճ յուղով ո՞վ շուկա կգնա: Իսկույն քթիցդ կիմանան, որ ունեցած-չունեցածդ էդ է. դե, ուրեմն, գինը իջեցրու կամ չքվիր գրողի ծոցը:

— Իսկ դու ինքդ որտեղի՞ց ես, — զարմանում է Հորդուբալը:

— Տափաստանից: Լսած կա՞ք՝ Ռիբարիի ճահճուտը. էստեղի ամբողջ շրջանը կտեղավորվի նրա մեջ, ոնց որ դանակը գրպանում: Իսկ խոտը, պան, հասնում է դոշիդ: — Մանյան ձեռքն է թափահարում: — Է՛հ, էստեղ զգվելի հողեր են: Վարում ես՝ մի գլուխ քարեր է, որ շուռ ես տալիս: Իսկ մեզ մոտ՝ ջրհոր ես փորում, դուրս է գալիս իսկական սևահող:

Հորդուբալը կնճռոտվում է: «Ի՛նչ գիտես դու, թաթա՛ր: Ես, ես եմ այստեղ վարել ու քարերը շուռ տվել: Դրա փոխարեն, ինչպիսի՞ անտառներ կան: Ի՛նչ ազատություն, աստված իմ: Ինչպիսի՞ արոտավայրեր»:

Սրտնեղած Յուրայը դուրս է գալիս ախոռից: Ասում ես՝ զգվելի հողե՛ր: Հապա ինչո՞ւ ես խցկվել մեզ մոտ: Եվ մի՞թե անասունների համար այստեղ վատ է: Դե, փառք ասածու, ահա և նրանք, արդեն ցրվում են դեպի տները: Հովտում ու ցանկապատից դենը զանգակներն

են զնգում՝ մեղմ, հավասարաչափ, ինչպես կովերի քայլերը: Հորթերի վզին կապած բռժոժները դողանջում են ասես հապշտապ: Դե-դե, դուք էլ կով կդառնաք, դուք էլ կքայլեք ծանրումեծ, ինչպես ամբողջ նախիրը: Չանգակների զնգոցը ավելի ու ավելի է մոտենում, և Յուրայը պատրաստ է գլխարկը հանել, ասես հանդիսավոր թափոր է անցնում: Հայր մեր, որ երկինս ես... Չնգոցը լողում է գետի պես, բաժանվում խոշոր վտակների, տարածվում ողջ գյուղով մեկ: Կովերն իրար ետևից անջատվում են նախրից և — տա՛ն-գո՛, ծը՛նգ-ծը՛նգ — ամեն մեկը դիմում է դեպի իր գամը: Կաթի ու փոշու համաձույլ բուրմունք, և ահա զանգակները զնգում են դռների մեջ, ու երկու կովեր, գլուխները հանդարտ օրորելով, ուղղվում են դեպի Հորդուբալովների գոմը: Յուրայը խորը հառաչում է. դե, փառք քեզ աստված, ահա և ես տանն եմ:

Նախրի զանգահարությունը տարածվում է գյուղով մեկ ու լռում. չղջիկը զիզզազանև թոչում է անասունների ետևից՝ ճանճեր է որսում: Բարի երեկո, տանտեր: Կովը երկար ու ձիգ բառաչում է գոմում: — Գալիս եմ, գալիս: Ձեռքերը մթության մեջ առաջ պարզած, Յուրայը մտնում է գոմ, շոշափում է կովի եղջյուրները, թավամազ, պինդ ճակատը, թաց շրթունքներն ու ռունգերը, պարանոցի կնճռոտ կաշին: Ապա, մթության մեջ ափսիսելով, գտնում է կովկիթն ու երեք ոտնանի աթոռակը, նստում կովի կուրծի մոտ ու սկսում իրար ետևից սեղմել պտուկները: Կաթը բարակ շիթերով, ֆշշոցով ցայտում է կովկիթի մեջ, և Յուրայն սկսում է կամացուկ, կիսաձայն երգել:

## V

Յուրայ Հորդուբալը նստում է սեղանի գլխին, ծալում ձեռքերն ու աղոթում: Այդպես է պետք, քանի որ այժմ տան տերը նա է: Պոլանան նստել է, շրթունքները սեղմած ու ձեռքերը ծալած: Հաֆյան աչքերը չռել ու չգիտի ինչ անի: Շտեպանը մռայլ աչքերը զցել է հատակին: Միգուցե Շտեպանն ուրիշ հավատի է, բայց սեղան նստելիս անհրաժեշտ է աղոթել: Ա՛յ թե քեֆները տեղը չի, հա՛...

Բոլորն ուտում են լուռ, շտապ-շտապ. միայն Հաֆյան է հագիվհագ փորփրում իր ափսեն:

— Կեր, Հաֆյա, — խստությամբ հրամայում է Պոլանան, սակայն ինքը համարյա ոչ մի բանի ձեռք չի տալիս: Միայն Շտեպանն է, ափսեի վրա թեքված, բարձրաձայն չփչփացնում:

Ընթրիքից հետո Մանյան շտապում է գնալ:

— Մի քիչ սպասիր, Շտեպան, — պահում է նրան Հորդուբալը. — ինչ էի ուզում ասել... Հա՛: Իսկ բերքը ո՞նց է այս տարի:

— Խոտհարքը լավ էր, — խուսափողաբար պատասխանում է Մանյան:

— Իսկ հաճա՞րը:

Պոլանան արագ մի հայացք է նետում Շտեպանի վրա:

— Հանարր... — ծամծմում է Շտեպանը, — ախր տիրուհին սարի արտը ծախել է: Իզուր աշխատանք էր, պան, միայն քար ու քոլեր:

Հորդուբալի սիրտը խփում է արագ-արագ:

— Միայն քար ու քոլեր, — մռմռում է նա: — Ճիշտ է, միայն քար ու քոլեր: Բայց ախր արտը ամենագլխավորն է, Պոլանա:

Շտեպանը ինքնավստահորեն ատամներն է բացում:

— Պան, նրանից ոչ մի գրոշի օգուտ չկար: Գետափի մարգագետինները շատ ավելի լավն են: Այնտեղ եգիպտացորենը մարդաբոյ է:

— Գետափի՞ն, — զարմանում է Հորդուբալը: — Պոլանա, դու հովտում հո՞ղ ես գնել:

Պոլանան կուլ է տալիս ինչ-որ բառեր, որոնք պատրաստվում էին պոկվել լեզվի ծայրից:

— Կավածատիրոջ մարգագետինները, պան, — բացատրում է Մանյան, — հողն այնտեղ ամուր է, խորը, կուզես ուղղակի ճակնդեղ ցանիք: Միայն թե ճակնդեղը գին չունի: Ամեն ինչի համար էլ վատ են վճարում, պան: Շատ ավելի շահավետ է ձի պահել: Եկամտաբեր գործ է: Մի ձի խնամես՝ ավելի շատ փող կստանաս, քան մի տարվա մուժիկային աշխատանքով: Լավ կլիներ հովտում մի կտոր հող էլ առնել ու ախտո շինել այնտեղ: — Շտեպանի աչքերը փայլում են: — Իսկ հովտում ձին իրեն ազատ է զգում, պան: Չին հո այժ չի:

— Կավածատերը մարգագետինները կգիջի, — մտմտում է Պոլանան ու բարձրաձայն հաշվում, թե դրանք ինչ կնստեն: Սակայն Հորդուբալը չի լսում, Հորդուբալը մտածում է հանարի ու կարտոֆիլի արտերի մասին, որ Պոլանան վաճառել է: Ճիշտ է, այնտեղ քարեր շատ կային, բայց ախր հնուց ի վեր դրանք եղել են ու եղել: Մեր գործն էլ այդ է, ախպերս: Մեկնելուց երկու տարի առաջ ես այնտեղ, սարալանջին, մի հողակտոր վարեցի: Է՛իս, և ի՞նչ ես հասկանում դու գյուղացու աշխատանքից:

Հաֆյան մոտենում է Շտեպանին ու արմունկով հենվում նրա ուսին:

— Բեռի Շտեպան, — շշնջում է նա:

— Դե, ինչ ես ուզում, — ծիծաղում է Մանյան:

Աղջնակը տատամսում է:

— Բան էլ չէ, հենց էնպես:

Շտեպանը նստեցնում է նրան իր ծնկներին ու ճոճում:

— Դե, ինչ էիր ասում, Հաֆյա:

— Բեռի Շտեպան, — շշնջում է Հաֆյան նրա ականջին, — ես այսօր մի շան ձագ տեսա: Էնպես սիրունիկն էր:

— Չէ՛ մի, — շինծու կերպով զարմանում է Մանյան: — Իսկ ես մի նապաստակ տեսա՝ իր երեք ձագերի հետ:

— Օ՛յ, — պոռթկում է Հաֆյան: — Իսկ որտե՞ղ:

— Առվույտի արտում:



— Իսկ աշնանը կորսա՞ս նրանց:

Շտեպանը խեթ նայում է Հորդուբալին:

— Տեսնենք:

«Լավ մարդ է, — թեթևությամբ հառաչում է Հորդուբալը: — Հաֆյան սիրում է նրան: Այ, ինձ այդպես չմոտեցավ: Դե, բան չկա, երեխան կտվորի: Իսկ Ամերիկայից բերած նկարների մասին նույնիսկ չհիշեց էլ: Պետք է Շտեպանին մի բան նվիրել»: Եվ Հորդուբալը աչքերով փնտրում է իր ճամպուկը:

— Հրեն քո իրերը, դարսված են նստարանին, — ցույց է տալիս Պոլանան: «Նա միշտ էլ հոգատար է եղել», — մտածում է Յուրայը և ծանրումեժ մոտենում նստարանին:

— Այ սա քեզ, Հաֆյա: Նկարներ: Սա էլ թեղդի-բեր:

— Էդ ի՞նչ է, քեռի, — հետաքրքրվում է Հաֆյան:

— Արջ է, — բացատրում է Մանյան: — Դու հեշ կենդանի արջ տեսե՞լ ես: Նրանք ապրում են վերևի սարերում:

— Իսկ դու տեսե՞լ ես, — կաչում է Հաֆյան:

— Տեսել եմ: Արջուկները մոթմոթում են, այ ասպես՝ մը՛ռռռ...

— Սա քեզ, Պոլանա, — անվճռականորեն առաջարկում է Հորդուբալը: — Բոլորը դատարկ բաներ են, ես չգիտեի, որ... Յուրայը շուռ է գալիս ու խառնշտում իրերը: Ինչ մի բան ընտրել Մանյայի համար: — Իսկ ահա սա էլ քեզ, Շտեպան, — շփոթված տատամսում է նա, — երևի պետք գա: Ամերիկյան դանակ ու ամերիկյան ծխամորժ:

— Ա՛խ դու, — խուլ կերպով դուրս է պրծնում Պոլանայի կրծքից, աչքերը լցվում են արցունքներով, և նա դուրս է թռչում:

— Ի՞նչ եղավ քեզ, Պոլանա:

— Խոնարհաբար շնորհակալ եմ, պան, — գլուխ է տալիս Մանյան և, ժպիտի մեջ ցուցադրելով բոլոր ատամները, ձեռք է տալիս Յուրային: — Օհո՛, — համա թե ուժեղ ձեռք ունես... Ուժներս չփորձե՞նք:

Փառք աստծու, — ինքն իրեն հառաչում է Հորդուբալը, — ահա և վերջացավ:

— Քեռի, դանակը ցույց տաս, — կաչում է Հաֆյան:

— Տես, — պարծենում է Շտեֆանը, — համա՛ թե դանակ է: Ամերիկայից: Ուզում ես, ես քեզ համար ամերիկյան տիկնիկ պատրաստեմ:

— Հա՛, քեռի, — ծվում է Հաֆյան: — Իսկ չե՞ս խաբում:

Յուրայը ժպտում է երանելի, լայն ժպիտով:

## VI

Սակայն այդ էլ դեռ բոլորը չէ: Յուրայը գիտի, թե ուրիշ ինչ է հարկավոր անել: Քանի որ մարդ Ամերիկայից վերադարձել է, պետք է երևա պանդոկում, բարևի հարևաններին, մի-մի գավաթ օղի հրամցնի նրանց: Թող բոլորը տեսնեն, որ Հորդուբայը դատարկ գրապնով չի ետ եկել: Է՛յ, պանդոկապետ, բոլորին մի-մի գավաթ, դե շուտ: Ինչ է, չե՞ս ճանաչում Հորդուբային, Ամերիկայից եկած մայներին: Թող լուրը ամբողջ գյուղով մեկ տարածվի. «Գիտե՞ք ով է վերադարձել: Գնանք տեսնենք Հորդուբային... «Կնիկ, արմյակս ու գլխարկս մի տաս»:

— Պուլանա, ես շուտով կվերադառնամ: Գնա քնիր ու ինձ չսպասես, — ասում է Յուրայը և խաղաղված, մութ գյուղի միջով կտրիճավարի քայլում է դեպի պանդոկ: Ի՞նչ անուշ հոտ է գալիս այստեղից՝ փայտի ու նախրի, խոտի ու դարմանի հոտ... Իսկ հիմա սագերի հոտ եկավ, հիմա էլ եղինջի ու իգաբոռի:

Ծերունի պանդոկապետ Սալով Բերկովիչն արդեն չկա. վաճառասեղանի ետևից վեր է կենում ինչ-որ շիկակարմիր հրեա:

— Ի՞նչ եք կամենում, պարոն, — անվստահորեն հարցնում է նա:

Անկյունում մենակ նստած է մշտական մի հաճախորդ: Այդ ո՞վ կարող է լինել: Ոնց որ թե Պյոսան լինի. դե, իհարկե, Անդրեյ Պյոսան է՝ «Հուսար» մականունով: Նա այքերը տնկել է Յուրայի վրա, ասես ուզում է բղավել՝ էդ դո՞ւ ես, Յուրայ: — Հա՛, ես եմ, Անդրեյ Հուսար, հո տեսնում ես, որ ես եմ:

Չէ, Պյոսան չբղավեց, ուշադիր նայում է:

— Պանդոկատեր, ծերուկ Բերկովիչը դեռ ո՞ղջ է, — հարցնում է Հորդուբայը, որպեսզի ցույց տա, թե այստեղացի է:

Պեպենոտ պանդոկապետը մի գավաթ օղի է դնում սեղանին:

— Վեց տարի եղավ, ինչ նրան թաղել ենք:

Վեց տարի՞: Օհ, Պյոսա, քիչ ժամանակ չի: Վեց տարի հետո մարդուց ի՞նչ է մնում: Իսկ ո՞ւր թաղի հետո: Պանդոկատեր, ուր թաղի եղավ, որ ես օղի չեմ խմել: Էն աստված, մեկ-մեկ ուզում էի խմել՝ օտարության մեջ դարդս օդուն տալ, միայն թե Ամերիկայում օղին արգելված է: Դրա փոխարեն ավելի շատ դոլարներ էի ճամփում Պուլանային. տեսնում ես՝ ձի է առել ու հողակտորը ծախել: Իբրև թե՛ քար ու քոլ է միայն: Իսկ դու, իհարկե, քո հողը չես ծախել, Անդրեյ: Ախր դու Ամերիկայում չես եղել:

Պանդոկապետը կանգնել է վաճառասեղանի մոտ ու դիտում է Յուրային: «Խոսե՛լ հյուրի հետ, թե ոչ, — մտմտում է նա: — Չէ, երևում է հյուրը խոսքասեր չի, նայում է մի տեսակ տարօրինակ ձևով, ավելի լավ է նրան հանգիստ թողնել: Ո՞վ կարող է լինել: Մաթեյ Պահուրկոյի տղան ինչ-որ օտարության մեջ է. միգուցե հենց Մաթեյի տղան է: Թե՛ Հորդուբայն է, Պուլանայի մարդը, որ Ամերիկայում է»:

Յուրայը այքերն է կկոցում: Պանդոկապետը շուռ է գալիս և սկսում բաժակները դասավորել վաճառասեղանի վրա:

Պյոսա, ի՞նչ ես ասքերդ թաքցնում: Ձե՞ն տամ քեզ, ինչ է: Այսպիսի բաներ, Անդրեյ Պյոսա: Ութ տարվա ընթացքում մարդը խոսելը մոռացել է, լեզուն բերանում չի դառնում: Բայց ախր նույնիսկ ձին ու կովը սիրում են, որ իրենց հետ խոսեն: Ճշմարիտ է, Պոլանան միշտ էլ սակավախոս է եղել, իսկ ութ տարիների բաժանությունը մարդուն մարդամոտ չի դարձնի, մենակությունը ասել-խոսել չի սովորեցնում: Ես ինքս էլ չգիտեմ՝ ոնց սկսեմ. նա չի հարցնում՝ ես սուս եմ կենում, նա սուս է կենում՝ ես հարցնել չեմ ուզում: Է՛հ, ինչ եմ ասում: Շտեպանը լավ աշխատող է, դե նա էլ խոսում է տիրուհու փոխարեն: Իսկ տիրուհին ինչ, ծախել է արտը, հող է գնել տավաաստանում, ահա և բոլորը...

Հորդուբալը խմում է օղին ու գլուխն օրորում: Վառում է, գրողի տարածը: Սակայն մարդ ամեն բանի էլ վարժվում է: Շտեպանը ոնց որ թե լավ ջահել լինի, ձիերից գլուխ է հանում ու Հաֆյային էլ սիրում է: Դե, իսկ Պոլանան կվարժվի, և ամեն ինչ իր կարգով կգնա: Է՛հ, Պյոսա: Իսկ ոնց է, մեկ-մեկ քո կնկա էձե՛րն էլ են բռնում... Դու նրան մի լավ տուր ես տալիս, և վերջ: Իսկ Պոլանան ոնց որ ազնվական լինի: Անդրեյ, այ թե բանն ինչ է: Խելոք է, աշխատող, մաքուր՝ փառք քեզ, աստված: Ծիշոտ որ, տարօրինակ է: Փոխարենը, եղբայր, նրա քայլվածքը տեսնես: Գյուղում ուրիշ ոչ մի կին այդպիսի քայլվածք չունի: Մեր բանը համերաշխ չի գնում, բարեկամս: Է՛իս, քամու պես ներս ընկնեի տուն, խտտեի նրան այնպես, որ շունչս կտրվեր: Այ թե ոնց էր պետք: Անդրեյ: Իսկ ինձ մոտ, հասկանում ես, չստացվեց: Նա սաստիկ վախեցավ, քաշվեց, ասես ես այն աշխարհից էի եկել: Հաֆյան էլ կարծես վախեցավ: Դու էլ, Անդրեյ: Բայց ինչ արած, եկել եմ: Սառույցը մեկից չկտրվեց. բան չկա, կամաց-կամաց կհալվի: Կենացդ, Անդրեյ:

Հուսար անունով Անդրեյ Պյոսան վեր է կենում տեղից ու գնում դեպի դուռը, ասես Հորդուբալին չի էլ տեսել: Դռան մեջ նա շուռ է գալիս ու խոպոտ ձայնով նետում.

— Բարի գալուստ, Յուրայ:

Խելառ ես դու, Հուսար: Եվ ինչու չես ուզում նստել իմ սեղանի մոտ: Չկարծես, թե ես վերադարձել եմ դափ-դատարկ: Ինձ մոտ դեռ մի հարյուր դոլար կգտնվի, դրանց մասին Պոլանային բան չեմ ասել: Բայց էլի Պյոսան լավ ճանաչեց ինձ: Այդպես էլ ամեն ինչ կամաց-կամաց կարգի կընկնի:

Հորդուբալն ուրախացավ:

— Է՛յ, պանդոկատեր, մի գավաթ էլ լցրու:

Դուռը թափով բացվում է կրկնկի վրա, և, ոնց որ զարնան հեղեղ, պանդոկ է ներխուժում ինչ-որ գեղեցիկ երիտասարդ: Դե ախր սա Վասիլ Հերիչն է: Վասիլ: Մրտակից ընկեր: Յուրային տեսավ թե չէ՝ իսկույն սեղանի մոտ: Վասիլ: Յուրայ: Ընկերական համբույրը ծակծկող է, թուրթունի հոտ է գալիս, բայց ի՞նչ ուրախություն:

— Բարև, Վասիլ:

— Բարև, Յուրայ, — մտահոգ արտասանում է Վասիլը: — Էս ո՞նց եկար:

— Հիմարի գլուխ, հո չեի մեռնելու այնտեղ, — ծիծաղում է Հորդուբալը:

— Դե հիմի գյուղում ապրուստը մի բանի նման չի, — խուսափողաբար ծամծմում է Հերիչը: — Ողջ-առողջ ես՝ ուրեմն փառք տուր աստծուն:

Տարօրինակ ես դու, Վասիլ: Նստել ես նստարանի ծայրին ու շտապում ես բաժակ դատարկել:

— Ի՞նչ կա-չկա:

— Դե, հրեն անցած շաբաթ, գատկից հետո, ծերուկ Կեկերչուկը մեռավ, աստված հոգին լուսավորի: Իսկ անցյալ կիրակի ջահել Հորդենկոն պսակվեց Միխայլուկովի աղջկա հետ: Ամառը տավարը դաբադով հիվանդացավ... Հա, Յուրայ, ինձ տանուտեր են ընտրել: Երևի, ինադու: Էնպես որ հիմի ես իշխանավոր եմ:

Խոսակցությունն ընդհատվում է: Վասիլը չգիտի՝ ուրիշ ինչի մասին պատմի, վեր է կենում տեղից ու ձեռքը խոթում Յուրայի ափի մեջ:

— Աստված քեզ հետ, Յուրայ: Ես պիտի գնամ:

Յուրայը քմծիծաղում է ու ծանրացած մատներով շուռումուռ տալիս բաժակը: Առաջվա Վասիլը չի: Ա՛խ, երկնային տեր, Վասիլը ո՞նց էր խմում. պատուհանները գնգում էին: Բայց էլի ներս եկավ ու իսկույն համբուրեց, այ դա ընկե՛ր է: «Աստված քեզ հետ, Յուրայ»: Ինչ է, ճակատիս գրա՞ծ է, թե բախտս ոնց չբերեց տանը: Դե, չբերեց՝ չբերեց, հետո կբերի, ամեն ինչ կարգի կընկնի: Մեկ էլ տեսար կամաց-կամաց տանը յուրային դարձա: Փող ունեմ, Վասիլ: Հող էլ կարող եմ առնել, կով էլ՝ որքան քեֆս տա, թեկուզ ամբողջ մի դյուժին: Կքշեմ արոտ, ուղիղ Եզան Կուզը... Իսկ իրիկունը տասներկու զանգերը կզնգան, և Պոլանան աղջկա պես կթոչի դարբասը բանալու...

Պանդուկում խաղաղ է, պանդուկապետը ննջում է վաճառասեղանի ետևում: Դե ինչ, մենակությունը մարդուն օգտակար է: Գլուխը պտտվում է, դառնում, դրանից էլ մտքերն ավելի լավ են տեղավորվում այնտեղ, սիրելիս: Տուն գնալու ժամն է: Արի շարժվեմ կամացուկ, դանդաղ, տոտիկ-տոտիկ, ոնց որ նախիրն է դաշտից վերադառնում: Իսկ ինչ, եթե սլանամ դեպի տուն, ոնց որ հրեղեն ձիեր լծած սայլով, քամու պես ներս ընկնեմ բակ, այնպես, որ չորս կողմ կայծեր շաղ գան, շտկվեմ, սանձերը հպարտորեն վեր բարձրացնելով ու ցած թոչեմ՝ ահա՛ ես, Պոլանա: Հիմա որ էլ քեզ բաց չեմ թողնի: Կբարձրացնեմ վեր, ձեռքերիս վրա ներս կտանեմ, կգրկեմ՝ շունչս կկտրվի: Ի՞նչ փափուկ ես դու, Պոլանա: Ութ տարի, ո՛ւթ տարի մտածել եմ կնոջս մասին ու հիմա այ գնում եմ նրա մոտ...

Հորդուբայը սեղմում է ատամները, մաշկի տակ ելունդներ են գլորվում: «Էհե՛յ, հրեղեն նժույզներ, էհե՛յ: Թող Պոլանան լսի մեզ, թող ցնցվի վախից և ուրախությունից, թող իմանա՝ ամուսինը վերադարձել է»:

## VII

Հորդուբայը հարբած տուն է վերադառնում: Իսկ չորս կողմ լուսնկա գիշեր է: Հարբել է, որովհետև օդուց ետ է վարժվել, ետ է վարժվել մտքերից, որովհետև գնում է կնոջ մոտ: Ի՞նչ ես մթնդում, լուսնյակ: Մի՞թե ես կամացուկ չեմ գնում, մի՞թե քայլերս այնպես թեթև չեմ փոխում, որ խոտերի վրայից ցողն անգամ ցած չընկնի: Օհո՛, շները գյուղում ոնց են իրար անցել՝ իբրև թե գալիս է Յուրայ Հորդուբայը, ութ տարվա բացակայությունից հետո վերադարձել է, տեսնում ես ձեռքերը ոնց է տարածել, ուզում է որքան կարելի է շուտով գրկել կնոջը: Ահա և դու իմ ձեռքերի մեջ ես, Պոլանա, բայց դա քիչ է, ես ուզում եմ զգալ քեզ ծնկներով, շրթունքներով, սեղմել մատներով... Պոլանա՛, Պոլանա՛... Ի՞նչ ես մոռայվում, լուսնյակ: Այո, ես հարբած եմ, որովհետև խմել եմ սրտապնդվելու համար, որովհետև

ուզում եմ ներս ընկնել տուն, կկոցել աչքերս, ձեռքերս թափահարել՝ ահա և ես, Պոլանա. ես ամեն տեղ եմ, որտեղ քո ձեռքերն են, քո ոտքերը, քո շրթունքները... Ի՛նչ խոշոր ես դու, լավը, ինչ լավ է քեզ գրկելը...

Գնում է Հորդուբայը լուսնյակ գիշերով և ամբողջ մարմնով դողում է: Ջայն չեմ տա, ոչ մի խոսք չեմ ասի, չեմ խոռվի նրա հանգիստը: Ներս կմտնեմ սուսիկ-փուսիկ: Ահա այն լուսավոր ստվերը՝ դո՛ւ ես... Անունս մի տուր, այդ ես եմ: Այնպես զգույշ կգրկեմ քեզ, որ ոչ մի բան տեղից չի շարժվի. չեմ խախտի լուսնի հանգիստը, չեմ ասի ոչ մի խոսք, չեմ շնչի... Ա՛խ, Պոլանա, այնպիսի լռություն կիջնի, որ լսելի կդառնա, թե ինչպես են ցած ընկնում աստղերը:

Չէ, չէ, լուսնյակը մեզ չի լույս տալիս, մեզ վրա չի մռայլվում: Նա լույս է տալիս սև անտառին, իսկ մեզ մոտ, տանը, մութ է, մեզ մոտ, տանը, միայն մթությունն է շնչում: Ձեռքով կփնտրես ու կգտնես կնոջդ: Չես տեսնի՝ քնած է, թե ոչ, բայց այստեղ ամեն ինչ լի է նրանով: Նա կամացուկ կծիծաղի ու կշարժվի տեղից, որպեսզի դու էլ կարողանաս պառկել: Բայց մի՞թե քեզ նման լողողին տեղ հերիք կանի, ստիպված պիտի խցկվես նրա ծոցը: Իսկ նա ինչ-որ բան է փափսում ականջիդ, թե ինչ՝ ինքդ էլ չես հասկանում, ախր խոսքերը սառն են, իսկ խուլ շշուկը՝ տաք. և խավարն ավելի է թանձրանում, այնպես թանձր է նա ու խիտ, որ կարելի է ձեռքը դիպցնել նրան, և դա արդեն ոչ թե խավարն է, այլ կինդ, նրա մազերն ու ուսերը, նրա ընդհատ շնչառությունը քո դեմքի վրա: «Ա՛խ, Պոլանա, — շնչում է Հորդուբայը, — Պոլա-նա»:

Նա կամացուկ բաց է անում դռնակն ու ցնցվում: Արտասանողուդքին, լուսնի լույսի տակ, նստած է Պոլանան ու սպասում է:

— Պոլանա, — մռմռում է Հորդուբայը, և սիրտը մարում է, — ինչո՞ւ չես քնել:

Պոլանան ցրտից դողում է:

— Սպասում էի քեզ: Ուզում էի հարցնել. մենք ամառը երկու ձիերի համար յոթ հազար ստացանք, էնպես որ... դու ի՞նչ ես մտածում...

— Ա՛խ, ահա թե ի՛նչ, — անվճռականորեն արձագանքում է Հորդուբայը: — Դե լավ, այդ մասին վաղը կխոսենք:

— Չէ, հիմի, — համառում է Պոլանան, — դրա համար էլ սպասում էի քեզ: Ես էլ չեմ ուզում հոգալ կովերի մասին... ու դաշտում աշխատել... չեմ ուզում:

— Դե, մի էլ աշխատիր, — ասում է Հորդուբայը, աչքերը հառելով նրա ձեռքերին, որոնք սպիտակին են տալիս լուսնի լույսով: — Հիմա ես այստեղ եմ: Ես կաշխատեմ:

— Իսկ Շտեպա՞նը:

Յուրայը լուռ հառաչում է: Ինչ հարկ կա հիմա այդ մասին խոսել:

— Դե, — փնթփնթում է նա, — երկուսիս համար աշխատանք չի բավականացնի:

— Հապա ձիե՛րը, — արագ առարկում է Պոլանան: — Մեկնումեկը պետք է հոգ տանի նրանց: Չէ՞ որ դու չես կարող...

— Ճիշտ է, — համաձայնում է Հորդուբայը, — դե լավ, հետո կտեսնենք:

— Ես հիմի եմ ուզում իմանալ, — պնդում է Պոլանան բռունցքները սեղմելով:

Մի տես, ի՛նչ անհամբերն է:

— Ինչպես ուզում ես, Պոլանա, ինչպես ուզում ես, — լսում է Հորդուբալն իր ձայնը: — Աղավնյակս, թող Շտեպանը մնա: Ես փողով եմ եկել, ամեն ինչ կանեմ քեզ համար:

— Շտեպանը կարողանում է ձիերին խնամել, — ասում է Պոլանան, — Էդախի աշխատող շուտով չես գտնի: Հինգ տարի է, ինչ նա ծառայում է ինձ մոտ: — Պոլանան վեր է կենում տեղից, լուսնի լույսի տակ գունատ ու տարօրինակ: — Բարի գիշեր, Յուրայ: Կամաց գնա, Հաֆյան քնած է:

— Իսկ դո՛ւ: Դու ո՞ւր ես գնում, — հարցնում է ապշած Հորդուբալը:

— Չարդախ, քնելու: Դու տան տերն ես, պիտի քնես խրճիթում: — Նրա դեմքին վայրկենաբար ինչ-որ համառ, չար արտահայտություն է երևում: — Շտեպանը քնել է ախոռում:

Հորդուբալը շենքին անշարժ նստած, նայում է լուսնկա գիշերին: Այդպես, այդպես: Գլուխը բոլորովին չի աշխատում, ոնց որ փայտից լինի: Ինչ-որ բան նստել է ուղեղում, հանգիստ չի տալիս: «Դու տան տերն ես, պիտի քնես խրճիթում»: Այդպես, այդպես:

Ինչ-որ հեռվում կլանչում է մի շնիկ, կովը գոմում զնգացնում է շղթան: «Պիտի քնես խրճիթում»: Է՛ի դու, դո՞ւմ գլուխ: Ինչքան կուզես թափ տուր, մեկ է՝ տրաքվում է: Կնշանակի՞ ուրեմն, տան տերը դու ես: Ամեն ինչ քոնն է՝ այս ճերմակ պատերը, բակը, չորս կողմ եղած տնտեսությունը, ամբողջ խրճիթը, այ՛ թե ինչ աղա ես դու, կարող ես մեն-մենակ փովել անկողնում: Տերը դու ես: Բայց ինչո՞ւ չի կարողանում ոչ մի կերպ տեղից վեր կենալ, ինչո՞ւ է գլուխն այսպես ծանրացել: Երևում է, անպետք օղի էր, երևում է, գրողի տարած պանդուկապանը փայտի սպիրտ էր խառել... Բայց ես տուն էի գալիս համարյա պարելով... Այդպես, ուրեմն, խրճիթում: Պոլանան ուզում է տան տիրոջը պատիվ տալ, որ նա քնի հյուրի նման... Անսահման մի հոգնածություն է պաշարում Հորդուբալին: Օհո՛: Պոլանան ուզում է, որ նա հանգստանա, ուժ հավաքի, երկար ճամփից հետո մի քիչ զրկանք վայելի: Ասենք, ճիշտ որ հոգնել է, ուժ չունի տեղից վեր կենալու, ոտքերը ոնց որ դոնդող լինեն... Իսկ լուսինն արդեն մտավ տանիքի ետևը:

— «Ժա-մը տասներ-մեկն է հը-րես, տեր աստ-ված պահպանիր դու մեզ», — երգեցիկ ձայնով ծոր է տալիս գիշերապահը: Ամերիակյում այդպես չեն կանչում: Տարօրինակ ես դու, Ամերիկա: Միայն թե գիշերապահը չտեսնի ինձ՝ լավ չի, — հանկարծ վախենում է Հորդուբալը և գողի նման նաշշուկ ներս է սողոսկում խրճիթ: Պիջակը հանելով, նա լսում է հանգիստ մի շնչառություն: Փառք աստծու, Պոլանան այստեղ է, նա կատակ արեց: Իսկ ես էլ, հիմարս, տնկվել եմ բակում: Յուրայը գաղտագողի, կամացո՛ւկ-կամացուկ մոտենում է անկողնուն, ձեռքերը պարզում առաջ: Փափուկ մագեր, բարակ, թույլ թաթիկներ՝ Հաֆյան: Երեխան ինչ-որ քրթմնջաց քնի մեջ ու դեմքով սեղմվեց բարձին: Այո, Հաֆյան է: Յուրայը կամացուկ նստում է անկողնու ծայրին, ուղղում է աղջկա վերմակը: Ա՛խ, աստված իմ, այստեղ ո՞նց պառկես, ախր կարթնացնես երեխային: Երևի, Պոլանան ուզում է, որ աղջիկը վարժվի հորը: Այդպես, այդպես: Հայրն ու աղջիկը խրճիթում, իսկ նա՝ չարդախում:

Հանկարծ Յուրայի գլխում մի նոր միտք է ծագում ու նրան հանգիստ չի տալիս: «Գնում եմ չարդախ», — ասաց Պոլանան: Իսկ եթե նա այդ դիտմամբ ասա՛ց: Այսինքն, հիմար, կարող ես գալ ինձ մոտ: Հո գիտես որտեղ եմ՝ զնացի չարդախ քնելու: Չարդախում

Հաֆյան չկա: Հորդուբալը կանգնել է մթության մեջ, ոնց որ արձան, իսկ սիրտը խփում է, խփում: Պոլանան հպարտ է, նա չի ասի՝ վերցրու ինձ: Հարկավոր է նրան նվաճել, ինչպես աղջկան, հարկավոր է փնտրել խավարում, իսկ նա անձայն կծիծաղի. «Ա՛խ, Յուրայ, դու հիմար ես, ութ տարի քեզ էի սպասում...»:

Յուրայը կամացուկ, գողեգող բարձրանում է չարդախ: Այ թե մութն է: Պոլանա, որտե՞ղ ես դու, լսում եմ, թե սիրտդ ոնց է զարկում:

— Պոլա՛նա, Պոլա՛նա, — շնչում է Հորդուբալը և ձեռքերով որոնում խավարի մեջ:

— Գնա՛, գնա՛, — աղիողորմ, համարյա տնքոցի պես լավում է մթության միջից: — Ես քեզ չեմ ուզում, աղաչում եմ, Յուրայ, աղաչում եմ քեզ, աղաչում եմ...

— Ես ոչինչ, Պոլանա, — սաստիկ վախենում է Հորդուբալը, — ես միայն... ուզում էի հարցնել... Քեզ համար այստեղ հարմա՞ր է:

— Աղաչում եմ քեզ, գնա: Գնա՛, — խավարի մեջ կնոջ ձայնը սարսափից դողում է:

— Ես ուզում էի ասել... — կակազում է Հորդուբալը, — ամեն ինչ քո ուզածով կլինի, աղավնյակա: Հովտի մարգագետինն էլ կարող ես առնել...

— Հեռացի՛ր, հեռացի՛ր, — իրեն կորցրած, բղավում է Պոլանան, և Յուրայը գլխիվայր գլորվում է ցած, ասես անդունդի մեջ: Ոչ, անդունդը չի ընկել, այլ նստել է ներքևի աստիճանին... բայց և այնպես, ընկել է անդունդ: Այսպես նվաստանալ, աստված իմ, այսպես ահավոր կերպով նվաստանալ: Այդ ո՞վ է տնքում այստեղ, հը՞: Այդ դո՛ւ ես, դո՛ւ: Ե՛ս: Ոչ, այդ ես չեմ, ես հազիվհազ շնչում եմ: Ես մեղավոր չեմ, որ բարձրաձայն տնքացի... Եվ էի՛, էլի՛... Դե, էլ մի ամաչիր, ազատություն տուր քեզ, դու տանն ես, տան տե՛ր:

Հորդուբալը նստել է աստիճանին ու բութ հայացքով նայում է առջևը: «Դու խրճիթում պիտի քնես, — ասաց նա, — դու տան տերն ես»: Ահա թե ինչ: Պոլանա, ութ տարի դու քո գլխի տերն էիր ու հիմա բարկանում ես, որ ուրիշ տեր ունես: Է՛խ, աղավնյակա, տեսնեիր, թե այդ ինչ տեր է նստել աստիճանին ու նվնվում է, ոնց որ ծծկեր երեխա: Հարկավոր է գոզնոցով քիթը սրբել: Այ քեզ տե՛ր... Հորդուբալն անսպասելիորեն զգում է, որ շրթունքներին ժպիտ կա: Այո, այո, նա ծիծաղում է՝ տե՛ր: Ի՞նչ տեր: Ծառա՛: Տիրուհիս, ծառան եկել է կովերի մոտ, իսկ դու, Պոլանա, դու կլինես տիրուհի: Կապրես խանումի պես, կովեր կունենաս ու ձիեր, Ծտեպան և Յուրայ: Պոլանա, կովերդ այնպես պահեմ, ոնց որ պատկե՛րք: Ոչխարներդ էլ: Ամեն ինչ քոնը կլինի, ամենքի գլխին կառավարիչ կլինես:

Ահա և սիրտը հանդարտվեց, կուրծքն էլ այլևս չի խռխռում: Հորդուբալն օդը ներս է քաշում, լցնում է թոքերը, ինչպես դարբնի փուքսը: Դե ինչ, տիրուհի, խրճիթը ծառայի տեղը չի: Ծառան կգնա քնելու գոմում՝ ահա թե որն է նրա տեղը: Այնտեղ մարդ ավելի լավ է քնում, այնտեղ նա մենակ չի, կողքին կենդանի շունչ է լավում: Երբ մենակ ես, բարձրաձայն խոսելը վախենալու է, իսկ կովի հետ կարելի է խոսել, նա գլուխը շուռ կտա քեզ ու ականջ կդնի: Կովանոցում մարդ ավելի լավ է քնում:

Յուրայը կամաց-կամաց քարշ է գալիս դեպի գոմ: Ահա և անասունների տաք հոտը. շղթայիկը գնգում է ցանկապատի ետևում:

— Այդ ես եմ, կովեր, այդ ես եմ: Փառք աստծու, այնքան խոտ կա, որ մարդ կարող է քունն առնել:

Ժա-մը տասներկուսն է հը-րես,  
Տեր աստված, պահ-պանիր դու մեզ:

Չէ, Ամերիկայում այսպիսի բան չկար:

Կնանիք, չվառեք մարիսը անտեղի:  
Գիշերը դրանից փորձանք կպատահի...

«Տու՛՛՛՛՛, տու՛՛՛՛՛-տու՛՛՛՛՛», — լսվում է հեռվից, ասես կովի բառաչ: Գիշերապահն է եղջերափողը հնչեցնում:

## VIII

Շտեպանը լծում է սայլը:

— Բարի լույս, պան: Ուզո՞ւմ եք մարգագետինը տեսնել:

Յուրայը մռայլվում է: Ես աղայի վերակացո՞ւ եմ, ինչ է, որ սայլակով գնամ հողերը նայելու: Ասենք, ինչու չգնա: Տանը անելիք չունի. խոտհարք էլ չկա: Միգուցե այք ածի Պոլանայի տիրություններին:

Շտեպանը քաթանն լայն վարտիք է հագել ու կապույտ գոգնոց: Իսկույն երևում է՝ տափաստանի ծնունդ է: Եվ թխադեմ է գնչուի պես: Ձիերին հայ-հույ է անում, և սայլակը դորդոցով ու զնգոցով թռչում է առաջ: Յուրայը կառչում է սայլակին, իսկ Շտեպանը կանգնել է՝ գլխարկը թեքած ծոծրակին ու սանձերը բարձր պահած: Նա մտրակը թափահարում է ձիերի մեջքի վերևում: Դե, դե, կամաց, հարկ չկա շտապելու:

— Լսիր, — դժգոհությամբ մոթմոթում է Յուրայը, — ինչո՞ւ ես սանձերը այդպես ուժով ձգում: Մի տես ձիերը ոնց են մոռութենքը թափ տալիս: Ախր դա նրանց ցավ է պատճառում:

Շտեպանը շուռ է գալիս քնծիծաղով:

— Պան, եղպես է հարկավոր: Որպեսզի գլուխները բարձր պահեն:

— Ինչո՞ւ, — առարկում է Հորդուբայը: — Թող ինչպես սովոր են, այնպես էլ պահեն:

— Դրա համար լավ գին են տալիս, պան, — բացատրում է Շտեպանը: — Ամեն գնորդ առաջ ու առաջ նայում է, թե ձին գլուխը ոնց է պահում: Հապա նայեք, պարոն, նայեք, թե ինչ շախով են վազում՝ միայն ետևի ոտքերով, իսկ առջևիները էնպես շարժում են միայն: Ն-նո՛:

— Դե, այդպես մի քչի նրանց, — խնդրում է Հորդուբայը:

— Թող սովորեն վազել, — անտարբերությամբ առարկում է Շտեպանը: — Հանգիստ ձիուց ի՞նչ օգուտ, պան:

«Տեսնես Պոլանային ո՞նց է տանում, — մտածում է Հորդուբայը: — Երևի ամբողջ գյուղը շուռ է գալիս՝ հրեն սայլի մեջ նստած գալիս է Հորդուբայի կինը: Դե, ուղղակի կավվածատիրուհի: Հպարտ, ձեռքերը ծալած կրծքին: Իսկ ինչո՞ւ չպետք է հպարտ լինի: Փառք աստծու, Պոլանան նման չի ուրիշ կանանց: Ամրակազմ է, սոճու նման շեփ-շիտակ:



Այնպիսի տուն է շինել, ոնց որ կալվածատիրոջ դաստակերտ, մի գույգ ձիու դիմաց վերցրել է յոթ հազար, ուրեմն կարելի է գլուխը բարձր պահել: Այդ բանը միշտ էլ օգտակար է, եղբայրներ»:

— Հրեն տափաստանը, — մտրակով ցույց է տալիս Շտեպանը: — Մինչև այն ակացիաները ամբողջ հողը պատկանում է տիրուհուն:

Հորդուբալն իջնում է սայլակից ամբողջովին շարդված: Համա թե թափ տվեց, սատանան: Ուրեմն, սա՞ է տափաստանը: Ճշմարիտ է, խոտը հասնում է մինչև գոտկատեղը, բայց խիստ չոր է ու կոշտ: Դե չէ, հեքիաթներ մի պատմի, այստեղ ի՞նչ ճակնդեղ ցանես:

Մանյան քորում է ծոծրակը:

— Էն կտորն էլ որ առնենք, պան, կարելի է թեկուզ երեք տասնյակ ձի պահել:

— Չէ, առարկում է Հորդուբալը: — Ախր խոտը բոլորովին չոր-չոր է, մեջը ճարպի կտոր չկա:

— Իսկ ճարպն ինչի համար է, — քմծիծաղում է Շտեպանը: — Ձին պիտի լղար լինի, պան, չոր-չոփ: Հո նրան մորթելու համար չեն գիրացնում:

Հորդուբալը չի պատասխանում: Նա մոտենում է ձիերին, շոյում նրանց մուրթները:

— Դե, դե, պստիկ, ապրես, մի վախենա... Ի՞նչ ես ականջներդ պտտում: Այ թե խելոքն ես դու: Դե, ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես գետինը սմբակով դոփում:

Շտեպանը արձակում է ձիերին, շտկվում տեղում ու խստությամբ նկատում.

— Ձիերի հետ չի կարելի խոսել, պան: Կփչանան:

Հորդուբալը արագ շուռ է գալիս: Այդպիսի հանդգնություն, այն էլ տիրոջ նկատմամբ: Չէ, նա երևի հենց այնպես: Չի ուզում, որ ձիերն իրեն վարժվեն: Դե, գրողի տարած, ես քո գործերին չեմ էլ խառնվի: Դե-դե, մի չարանա:

Շտեպանը ձիերին բաց է թողնում՝ արածեն ու վերցնում է գերանդին՝ խոտ հնձելու: Է՛իս, հիմար, պիտի մի գերանդի էլ վերցնեիր հետդ, — հառաչում է Յուրայը և սկսում դիտել Ծուռփեշի վերևի արտերը: Այ թե իսկական հողերը որտեղ են: Ճիշտ է, քար շատ կա, բայց փոխարենը կարտոֆիլ է աճում, վարսակ, հաճար: Ահա այստեղ հաճարը դեռևս հնձած չի, իսկ այնտեղ արդեն խրձեր են կապում:

— Շտեպան, իսկ մեր վերևի արտը ո՞վ է գնել:

— Պյոսա անունով մեկը:

— Հըմ, Պյոսան: Անդրեյ Պյոսան — Հուսարը: Ահա թե ինչու այն ժամանակ պանդոկում չմոտեցավ իրեն: Ամաչում է, որ հողը խաբխբելով առել է կնիկարմատից: Յուրայը նայում է վերև: Տարօրինակ է: Ասես Հորդուբալի արտը սարերից իջել ու փռվել է այստեղ, տափաստանում...

— Իսկ Ռիբարին որտե՞ղ է, — հետաքրքրվում է Հորդուբալը: — Այնտեղ, ներքևո՞ւմ:

— Հրեն, այնտեղ է, — ասում է Շտեպանը: — Այն կողմը: Այստեղից մի երեք ժամվա ճամփա է:

— Երեք ժամվա՛: Նշանակում է՝ մոտ չի:

Հորդուբայր պարապությունից մի ծղոտ է պոկում ու ծամում: Խոտը մի տեսակ թթված է, ճոճռան: Չէ, մեզ մոտ, սարերում, խոտը բոլորովին այլ համ ունի ու թունդ ուրցի հոտ է արձակում: Յուրայը քայլում է տափաստանով ավելի ու ավելի հեռու: Այ քեզ տափարակ, ոչինչ չի երևում, միայն երկինքը, այն էլ ինչ-որ փոշոտ է, ոչ այնպես, ինչպես սարերում: Ահա և եգիպտացորենի արտը: Իսկապես էլ, եգիպտացորենը բարձր է, մարդահասակ, իսկական թփուտ: Իսկ օգուտն ինչ: Միգուցե լավ լինե՞ր խոզեր բաց թողնել այստեղ: Արտը ուրիշ բան է, ոնց որ մուշտակ:

Ակացի՛ա: Յուրայն ակացիա չի սիրում: Այնտեղ, վերևում, վայրի սալորենի է աճում ու մասրենի, արոս ու գիհի, և ոչ մի անպետք ակացիա:

Մանյան իր գոգնոցով ու երկարաճիտ կոշիկներով արդեն աչքից կորավ: Ինչպե՛ս թե ձիերի հետ չխոսել: Ձին խելոք կենդանի է, կովից ոչ վատ: Խոսքերից նա ավելի հնազանդ է դառնում:

Տափաստանը փռվել է Յուրայի դեմ, թախիժով պարուրելով նրան: Ասես ծով լինի՝ որ կողմ նայում ես, ամենուրեք նույն բանն է: Յուրայը գլուխը վեր բարձրացրե՞ց՝ սարերին նայելու: Էխ դուք, սարեր, սարեր, հարթավայրը ձեզ էլ է փոքրացնում, աննկատելի դարձնում: Հապա բարձրացիր սարը, այն ժամանակ կհասկանաս, թե դա ինչ է: Եվ Յուրայը, չդիմանալով, ուղղվում է դեպի տուն ոտքով, ձեռքը թափ տալով Շտեպանի ու նրա սայլակի վրա: «Ծամփին աչք կա՞ծեմ ցորենի արտերին», — մտածում է նա:

Հորդուբայր քայլում է ամբողջ մի ժամ, իսկ սարերը դեռևս հեռու են: Այ թե շոգ է այստեղ ու հով էլ չի խաղում. այս էլ ձեր տափաստան՛ը: Շտեպանը ինձ ո՛ր է բերել: Մի գլուխ շտապեցնում էր ձիերին, և ահա հասել ենք աշխարհի ծայրը: Պոլանայի ձիերը կրակոտ ձիեր են: «Հանգիստ ձիուց ի՞նչ օգուտ, պան»:

Ուղիղ երկու ժամ է, ինչ Հորդուբայր քայլում է: Փառք աստծու, վերջապես ահա և գյուղը: Գնչուական աղքատ մի թափառախումբ վրան է զարկել բանգի ու գժախոտի մացառուտում: Ահա և ճամփեզրի դարբնոցը: Գլխում ծագած անակնկալ մտքից Հորդուբայր կանգ է առնում: Սպասիր, Պոլանա, ես քեզ կուրախացնեմ: Նա շուռ է գալիս դարբնոցի կողմը:

— Է՛յ, վարպետ, ինձ համար մի կեռ պատրաստեք:

— Ի՞նչ կեռ:

— Դռան սովորական կեռ, որ փակեն: Ես կսպասեմ:

Դարբինը Հորդուբային չի ճանաչում՝ դարբնոցում մու՞թ է, քուրան էլ աչք է կուրացնում: Կեռ ես ուզում, խնդրեմ: Դարբինը դողոյունով ծեծում է երկաթը:

— Իսկ ինչ կասեք, դարբին, Հորդուբայրվայի ձիերը լա՛վն են:

— Ձիե՛ր եմ ասել. ոչ թե ձիեր են, այլ սատանաներ: Միայն թե, քեռի, դրանք աղաների համար են, ոչ թե գյուղական աշխատողի: Իսկ դրանց պայտելը իսկական փորձանք է: Երկու ջահել հագիվ են պահում էդ տեսակ սատանային:

Հորդուբայր նայում է շիկացած երկաթի կտորին: Այո, Պոլանա, քո տնտեսության համար մի բան կբերեմ:

— Եվ այդպիսի ձին թանկ արժի, հը՞, դարբին:

— Թող կայծակը զարկի ինձ, — թքում է դարբինը: — Լսել եմ, որ նրա համար ութ հազար են ուզում: Էդքան փողը մի ձիու համար: Իսկ ի՞նչ օգուտ նրանից: Էդպիսի սատանի ծնունդը հենց որ սկսեց կաղալ՝ վերջ: Ինչ եմ ասել գյուղական մալած ձիուն: Մեջքը ոնց որ սեղան, դռը՝ ժամի երգեհոնը քեզ օրինակ: Ինչ ասել կուզի: Էդ հնում էր, որ ձիեր կային: Իսկ հիմի տրակտորն է: Ասում են, կալվածատերն իր մարգագետինը ծախում է. իբրև թե՝ խոտն ինչին է, ու ձիերն էլ բանի պետք չեն, հիմի ամեն տեղ էլ մեքենաներն են աշխատում:

Հորդուբալը գլխով է անում: Ծիշտ է, մեքենաները, ոնց որ Ամերիկայում: Հարկավոր է հետևել, որ Պոլանան հիմարություն չանի: Մեկ էլ տեսար՝ մեքենաներ հայտնվեցին, այն ժամանակ ձիերն ի՞նչ անել: Բանն էլ հենց այդ է: Չէ, չէ, Պոլանա, ես իմ դուարները չեմ տա մարգագետին առնելու: Արտը և կովը ուրիշ բան, իսկ մեքենայով փոր չի կշտանա: Ինչպե՞ս: Կարծում ես, թե արտից ու կովերից եկամուտ չկա՞: Հետո ինչ. գուցե և չկա, բայց հո հացն ու կաթը քո սեփականն են: Այդպիսի բաներ:

Վերցնելով դեռևս չսառած երկաթի կտորը, Հորդուբալն շտապում է տուն: Կարծես Պոլանան ճաշ է պատրաստում: Յուրայր սանդուղքով գողեգող բարձրանում է չարդախ ու կեռը ներսից ամրացնում դռանը: Ահա, հիմա էլ ծխնին...

Պոլանան սանդուղքով բարձրանում է վերև ու, հոնքերը կիսելով, նայում, թե Հորդուբալն ինչ է պատրաստում: Չէ, չի հարցնում, միայն նայում է սևեռուն հայացքով:

— Պատրաստ է, Պոլանա, — փնթփնթում է Հորդուբալը, — այստեղ կեռ ամրացրի, որ կարողանաս ներսից փակել:

## IX

Հիմար բա՞ն է ստացվում, Յո՛ւրա, Յուրա՛յ: Ծրջում ես բակում, աչք ածում չորս կողմ ու չես իմանում՝ ինչի ձեռք զարկես: Կաղա՞մբ տնկես: Դա տղամարդու գործ չի: Հավերին կո՛ւտ տաս: Խոզերի՞ն կերակրես: Դա էլ կնկա գործ է: Փայտն արդեն սղոցել, կոտորել ես, ցանկապատը նորոգել, տախտակներից էլի մանր-մունր բաներ շինել, իսկ հիմա պարապ-սարապ թրևում ես, ոնց որ ծերուկ Կիրիլը, որ հրեն այնտեղ, Միհալ Հերպակի բակում, մորուքն է տմբտմբացնում: Իսկ հարևան կնանիք բամբասում են՝ լավ տնատեր է, ձեռքերը գրպանները դրած հորանջում է մինչև ականջները: Կամա՛ց, ծնոտդ ցած չընկնի:

Մանյան ներքևում է, մարգագետնում: Հետո՞ ինչ: «Ձիերի հետ չի՛ կարելի խոսել» — և վերջ: Մնա այստեղ մեն-մենակ ցցված, ինչիս է քո տափաստանը: Դրան տես, այս բատրակին, աստված գիտի՝ որտեղից է լույս ընկել ու դեռ սովորեցնում է. «Լավ կիներ, պան, ես անեիք, էն անեիք»: Ինձ սովորեցնելը քո գործը չի: Փայտից ինչ որ կարելի է պատրաստել, այդ կանեն... Առաջ անտառ էի հատում, իսկ հիմա ասում են փայտի պահանջ էլ չկա: Ծառերը կանգնած փտում են, իսկ սղոցարանները չեն աշխատում:

Աստված իմ, մնում է միայն կով պահել: Ոչ թե երկու հատ, — մարդիկ ձեռ կառնեն, — այլ մի դյուժին: Քշել նրանց Եզան Կուզ, հետն էլ կացին առնել՝ արջերից պաշտպանվելու համար: Եվ ոչ ոք չի ասի՝ մի խոսիր կովերի հետ: Անասունի վրա պետք է բղավել:

Բայց Պոլանան լսել անգամ չի ուզում, իբրև թե՝ մսավաճառը մի կովին ութ հարյուր է տալիս, այն էլ ասես շնորհ է անում: Դե, ինչ մսավաճառ, մսավաճա՛ռ: Կով կարելի է պահել նաև իր համար: Բայց եթե չես ուզում, լավ: Իսկ հովտի մարգագետնի վրա փող չեմ ծախսի:

Կամ լծիր կովերին ու քշիր արտ՝ խուրձ կրելու: Քայլում ես, քայլում, ձեռքդ դրած լծին՝ է՛յ, է՛յ, իրար եկեք: Շտապելու հարկ չկա՝ քայլում ես կովերի քելքով, Հորդուբալը Ամերիկայում էլ չսովորեց ուրիշ կերպ քայլել: Հենց որ խրձերը բարձում ես սայլին, ճաղերից բռնած՝ անիվները պահում, զգում ես, ոնց որ ամբողջ սայլը ձեռքիդ մեջ լինի: Այն ժամանակ, փառք աստծու, հասկանալի է դառնում, թե ձեռքերն ինչի համար են տրված մարդուն: Այ դա տղամարդու գործ է, Պոլանա: Ա՛խ, տեր աստված, դու ողորմա, ի՛նչ պարապություն է, ձեռքերը կորչում են անտեղի: Եվ ի՛նչ ձեռքեր՝ կտրիճի, ամուր, ամերիկյան...

Քեզ համար ինչ, Պոլանա. քեզ մոտ ամեն ինչ եռում է, միշտ էլ գործ կա, այստեղ հավ ու ճիվ, այնտեղ խոզեր, դեռ հարկավոր է մառան էլ դիպնել: Իսկ տղամարդու համար ցանկապատի մոտ ցցվելն ամոթ է: Գոնե ասեիր՝ Յուրայ, այս արա, այն արա: Իսկ դու թռչում ես նետի պես, մարդ չի հասցնում հետո մի խոսք փոխանակել: Ես կարող էի քեզ Ամերիկայի մասին պատմել: Այնտեղ, Պոլանա, երիտասարդը կարող է և՛ աման լվալ, և՛ ավել անել, և՛ հատակը քերել, ու այդ ամենը ամոթ չի համարվում: Ամերիկայում կանայք լավ են ապրում: Դու ասես մոռալվում ես, հենց որ ես ձեռք եմ զարկում մի բանի, իբրև թե՝ չի կարելի, մարդիկ կծիծաղեն: Դե, ինչ կա որ, թող հիմարները ծիծաղեն: Ախոռ եմ գնում ձիերին կեր տալու, ջրելու՝ Շտեպանն է նեղանում: Տեսա՛ր մի՝ ձիերի հետ չի կարելի խոսել: Նա ամեն ինչ գիտի: Ման է գալիս չարացած, քիչ է մնում աչքերով ինձ ուտի: Տանտիրուհու հետ մի խոսք չի փոխանակում, պատասխանում է տհաճությամբ, միայն աչքերն է տնկում վրան: Չարանում է, երեսը չարությունից դեղնում, ինքն իրեն ուտում է... Պոլանան էլ է նրանից վախենում, ասում է. «Հաֆյա, գնա Շտեպանին ասա, որ այս բանն անի ու այն բանը, հարցրու Շտեպանին այս ու այս»: Հաֆյան չի քաշվում: Չայն է տալիս՝ քեռի՛, իսկ նա աղջկան օրորում է ծնկին: «Հաֆյա, այ քուռակն էսպես է վազում, իսկ զամբիկը քայլում է էսպես»: Ու երգում է: Իսկ հենց մեկնումեկին տեսավ թե չէ, իսկույն ոնց որ բերանը ջուր առնի, ու ծկում է ախոռ:

Հորդուբալը ծոծրակն է քորում: Մատանան գիտե, թե Հաֆյան ինչու է ինձանից վախենում: Իրեն-իրեն խաղում է, իսկ հենց որ ես մոտենում եմ, աչքերը չռում է ու աշխատում է ծկել: Դե, փախիր, փախիր: Է՛հ, Հաֆյա, ես քեզ համար խաղալիքներ կպատրաստեի միայն սեղմվեիր ուսիս ու նայեիր, թե ինչ է ստացվում: Իսկ ինչա՛ն բաներ կպատմեի քեզ Ամերիկայի մասին, աղջիկս. այնտեղ նեգրեր կան ու անթիվ-անհամար մեքենաներ... Դե, աստված քեզ հետ, Հաֆյա, գնա քո Շտեպանի մոտ: Պոլանա, ձեռք մի տուր նրան, ծեծելով ոչ ոքի չես կարող բան սովորեցնել: Այ, եթե դու նստեիր կողքիս, ու մենք իրար հետ գրուցեինք, Հաֆյան էլ կգար ականջ դնելու, արմունկով կհենվեր ծնկիս: Այնպիսի բաներ կպատմեի, որ երեխայի բերանը բաց կմնար: Դե, միզուցե ձմեռը վառարանի մոտ...

Ներքև, գյուղամիջում վախեցած սագերը կղկղում են, լավում է սայլի դղրոյուն՝ այդ Մանյան է վերադառնում: Յուրայը ձեռքը թափ է տալիս ու գնում ամբարի ետևը: Չեմ ցցվի այստեղ, նրա հետ քիթ-քթի: Բերածը մի խտիտ խոտ է, իսկ աղմուկը ողջ գյուղն է բռնել: Ամբարի ետևում լավ է, խաղաղ, այնտեղ մարդ ոնց որ դրախտում լինի: Է՛հ, պարտեզը երեսի վրա են թողել: Առաջ այստեղ տանձենիներ ու սալորենիներ էին աճում, իսկ հիմա՝ ոչինչ: Մարդ չկա, որ ծերացած ծառերը կտրատի ու աշնանը ջահել տնկիներ տնկի: Ոչինչ չի մնացել, միայն անբար ծառեր: Աստված հետներդ: Հովասուն պարտեզ էր, իսկ հիմա եղինջ է աճում ու մեկ էլ խոզերն են հողը փորփորում: Տե՛ր աստված:

Դե, այնպես չկարծես, Պոլանա, ես Ամերիկայում շատ բաներ եմ տեսել: Նայում էի ու միտք անում՝ այ, վատ չէր լինի այս բանը մեզ մոտ էլ առաջ բերել: Նրանց մոտ լավ բաներ կան, հարմար, օգտավետ, ամեն տեսակ հարմարանքներ: Իսկ ո՛նց են բանջարեղեն աճեցնում: Կամ ճագարներ: Ավելի լավ է ճագարներ, չէ որ մեզ մոտ բանջարեղենից ահագին փրչեր եմ հավաքվում: Ամեն ինչ լավ կլիներ, ես ամեն բան կարգի կզցեի միայն թե դու ուզենայիր, Պոլանա, միայն թե աչքի տակով նայեիր՝ տեսնենք Յուրայն այդ ինչ է անում:

Այդ ի՞նչ է, Յուրայ: — Վանդակ ճագարների համար: — Այ թե Հաֆյան կուրախանա՛: — Եվ մուշտակ կկարես նրա համար: Կամ, ասենք, աղավնատուն: Իսկ մեղու չե՛ս ուզում, Պոլանա: Ես փեթակներ կպատրաստեի, իսկական, ոչ թե փորած կոճղ, այլ ետևը ապակեպատ փեթակներ, որպեսզի պարսը երևա: Մեզ մոտ, Ջոնսթոնում, մի մայներ կար, ազգությամբ լեհ, ճանճի մեծ սիրահար էր. գիտես, նա նույնիսկ մի տեսակ ցանց ուներ, որ հագնում էր գլխին... Մարդ ամեն ինչ էլ կարող է սովորել: Միայն թե դու ուզենաս, Պոլանա, միայն թե նայես: Գոնե հարցնես. «Այս բանը Ամերիկայում ո՛նց են անում»: Չէ, չես հարցնում: Իսկ երբ չեն հարցնում, ասելը դժվար է: Ամոթ է մի բան ասել միայն սեփական բավականության համար. դա ոնց որ խաղ լինի: Իսկ երբ ուրիշի համար է՝ թքում ես ավերիդ մեջ, և գործն առաջ է գնում: Այ թե ոնց է լինում, Պոլանա:

Փառք աստծու, ահա կովերը զանգերի զնգոցով տուն են դառնում, արդեն իրիկուն է: Հիմա մեր կովերը կգան, հարկավոր է կապել նրանց, ջրել, թիմարել: Հաֆյան ձայն կտա. «Շտեպան, հայրիկ, իրիկնահացի»: Շտեպանը խաչտում է աղմուկով, Պոլանան լռում է, Հաֆյան փսփսում քեռի Շտեպանի հետ: Ի՞նչ կարող ես անել: Բարի գիշեր բոլորիդ:

Հաֆյան խրճիթում է, Պոլանան՝ չարդախում, Շտեպանը ախոռում:

Պետք է մի անգամ էլ շրջել բակում ու գնալ գոմ՝ քնելու: Ձեռքերը դնել գլխատակին, և կարելի է բարձրաձայն խոսել: Խոսել ինքն իր հետ այն մասին, թե ուրիշ ինչ կարելի է հորինել և թե ամեն բան ինչպես կարող էր լինել: Իսկ կովերն ամեն բան էլ հասկանում են՝ դարձնում են գլուխները ու նայում...

## X

Հաֆյա, մայրիկին ասա, որ ես կվերադառնամ երեկոյան:

Մի կտոր հաց ճարպի հետ, և հայդա դեպի սարերը: Հորդուբալի սիրտը թեթև է ու փոքր-ինչ տխուր, ինչպես մորից թաքուն ծկած երեխայի սիրտը: Նա նայում է գյուղին

վերևից: Ինչ-որ բան փոխվե՞լ է այնտեղ: Բայց ի՞նչ: Ի՞նչ: Առաջ Հորդուբալի արտն այստեղ էր: Ասում են քարեր կային և իսկապես էլ կային: Բայց տես, որ Պյոսան հաճարը հնձել է. այստեղ նաև կարտոֆիլ ունի ու բարակ մի շերտ էլ վուշ: Նայիր, Պյոսայի հին հանդը ոնց է մերվել Հորդուբալի հանդին: Իսկ ավելի վերևից, ուր արոսենիններն են, ամբողջ գյուղը երևում է, ոնց որ ափիդ մեջ: Ասածու իմաստության վրա ինչպես չգարմանաս. Կրիվոյը գյուղ է կոչվում, և ճիշտ որ, կուչ է եկել, ոնց որ նստած կով: Կտուրը կտուրի ետևում, բոլորն իրար նման, ասես ոչխարի հոտ: Իսկ ահա այն սպիտակ կավածատունը Պոլանայինն է: «Ոնց որ այստեղ օտար լինի, — մտածում է Յուրայը: — Տանիքը նոր է, կարմիր, հենց այն է՝ ուզում ես հարցնել՝ ո՞վ է բնակվում այնտեղ: Երևի, տափաստանից եկած մեկը. այնտեղ նրանք ծառեր չունեն, սովոր են տանիքները կղմինդրով ծածկել...»:

Հովիտ: Այստեղից երևում է հովիտը: Կապույտ, հարթ, ինչպես ծովը. մի խոսքով, հովիտ և ուրիշ ոչինչ: Հենց նրա համար են մարդիկ արագ-արագ գնում, որովհետև ճամփան տխուր է: Քայլում ես, և շարունակ ոնց որ նույն տեղում լինես: Չէ, ես առանց գործի հովիտ չեի գնա: Իսկ այստե՛ղ: Մի՞թե կարելի է համեմատել. հոգուդ մեջ տոն է. գնում ես ուր աչքդ կկտրի, իսկ շուրջը միշտ ծանոթ նշաններ են: Ահա հիմա ճանապարհը կոլորվի, կանցնի առվի միջով, հետո մինչև այն եղևնին արոտատեղով կբարձրանա վերև, իսկ այնտեղից՝ ուրիշ անտառ: Կեսօրին կհասնես անտառ՝ համատարած հաճարի, բներն սպիտակ-գորշավուն, ոնց որ վրաները թուխպ նստած լինի: Ամենուրեք կրակների պես ծաղկում են ալայան մանուշակները: Իսկ ահա այնտեղ, նայիր, ի՞նչ հիանալի սունկ է: Դուրս է պրծել չոր տերևների տակից՝ ճերմակ, հաստատուն ոտքով: Սո՛ւնկ, գիտե՞ս ինչ, մնա տեղումդ ողջ ու անվանա: Ես նույնիսկ խոլորձ ու զանգակածաղիկ չեմ պոկի, միայն մորու մի փոքրիկ փունջ կկապեմ Հաֆյայի համար այնտեղ, անտառի փեշին, որտեղ նա ամենից քաղցր է:

Հանկարծ Հորդուբալը կանգ է առնում շունչը պահած. քարայժ: Սարալանջի մյուս կողմում կանգնած է մի քարայժ՝ լուսավոր, փոքր-ինչ դեղնավուն, ինչպես անցած տարվա խազալը. կանգնել է ձարխոտերի մեջ ու ականջ է դնում: Ո՞վ կա այնտեղ՝ մա՛րդ է, թե կոճղ: Ես կոճղ եմ, քոթուկ, ես պարզապես ծառակոշտ եմ: Միայն մի փախիր: Մի՞թե դու էլ ես ինձանից վախենում, անտառի գազան: Չէ, չի վախենում: Տերև տերևի ետևից պոկոտում է ու նայում այժի նման: Հետո մկկում է՝ մը-կը-կը՛, և, կճղակները դոփդոփելով, պանում է հեռու:

Հանկարծ Յուրայն իրեն բախտավոր է զգում, սարնիվեր քայլերը թեթևանում են, ոչ մի բանի մասին չի ուզում մտածել: Գնում է ու գնում իր համար, լավ է:

— Իսկ ես քարայժ տեսա, — երեկոյան կասի նա Հաֆյային:

— Որտե՞ղ:

— Էլ որտե՞ղ պիտի, սարերում: Տափաստանում քարայժ չի լինում, Հաֆյա:

Ահա և... ոչ ոք չգիտի, թե ինչ է այդ. քայքայված հին ծառաբները, — ի՞նչ գերաններ են, կուզես զանգակատուն շինիր, — ծածկված են խոնդատով, գորտնուկով, վայրի շուշաններով, դանձլամերով, ձարխոտով ու վայրի խորդենիով: Իսկապես, տարօրինակ վայր է, ասես կախարդված. այստեղ անտառը նայում է հյուսիս՝ մամռապատ, սև մի անտառ: Հողը նույնպես սև է ու ճահճոտ: Ասում են, այստեղ չար ոգիներ են թափառում: Աճում են մի տեսակ սպիտակավուն, անգույն, դոնդողանման սունկեր: Եվ մշտապես կիսախավար է ու վայրի: Ոչ սկյուռներ են երևում, ոչ միջատներ, չորս կողմ սև անտառ է

միայն: Երեխաները վախենում են այստեղ գալ, ասենք, գյուղացիներն էլ ոտք դնելիս երեսները խաչակնքում են: Ահա և անտառի ծայրը. հավամրգին ծնկներիդ է հասնում, իսկ ծառալոռ՝ որքան ուզես: Մոշի ծակծկող թփիկները կառչում են ոտքերիդ: Է՛հ, անտառը մարդուն հեշտությամբ բաց չի թողնում, հարկավոր է ճեղքել-անցնել մացառուտի միջով, ինչպես վարագ: Մեկ էլ՝ հո՛ւպյա, ասես քեզ դուրս մղեցին անտառից, ասես անտառն ինքը քեզ դուրս հրեց, — և դու բացատում ես: Փառք աստծու, վերջապես դուրս պրծար:

Լայնարձակ ես դու բացատ, այս ու այնտեղ վեր են խոյանում եղևնիները՝ խոշոր, ամուր, ոնց որ աստծու տաճարներ:

Ուզում ես գլխարկդ հանել ու ողջունել բարձրաձայն. «Բարև ձեզ»: Խոտը հարթ է, սկուն, կարճ, քայլում ես նրա վրայով, ասես գորգի վրայով: Երկար բացատը ձգվում է անտառների միջով: Վերևում տարածվում է արձակ երկինքը, ասես մի կանաչ-կտրիճ մեկնվել է՝ կուրծքը բաց, պառկել ու նայում է աստծու վերնատնակների պատուհաններից... Օ՛հ, մարդ ի՛նչ թեթև է շնչում:

Հանկարծ Յուրայ Հորդուբալը բոլորովին փոքրացավ, մրջյունի պես վազում է լայնարձակ բացատով: Մրջյունիկ, այդ ո՛ւր, այդ ո՛ւր: — Այնտեղ, դեպի սարը, ուղիղ դեպի գագաթը՝ մյուս սև մրջյունների հետ արածելու: Այ թե ուր եմ շտապում: Լայնարձակ ես դու, բացատ, արձակ-լայնարձակ:

Լայնարձակ է, օ՛, աստված իմ... Այն կարմիր կետերի համար կասես եզների նախիր է: Մեր տեր աստված իրեն լավ է զգում՝ նայում է վերևից ու միտք անում. հրեն այն սև կետը Հորդուբալն է, իսկ ահա այն սպիտակը՝ Պոլանան: Տեսնենք, նրանք կմիանա՞ն, թե հարկ կլինի մատով հրել, մոտեցնել իրար:

Իսկ այդ միջոցին, տես, սարալանջով ինչ-որ սև բան է թռչում ուղիղ դեպի Հորդուբալը: Գլուխկոնձի տալով սլանում է գառիվայրով ներքև, ուղղակի նրա ոտքերի տակ: Ախր ո՛վ ես դու: Ա՛խ, դու, սև շնիկ: Ի՞նչ ես հաչում ու քեզ քրքրում: Դե, արի, արի, մի՛թե ես գողի նման եմ: Այստեղ արի: Ապրես դու, շնիկ: Գնում եմ Հովվի սարը տեսնեմ: Հրեն արդեն նախիրն էլ երևաց:

— Հե՛յ, — ձայն է տալիս Հորդուբալը նախրապանին:

Խոշորաչք եզները հանգիստ նայում են Հորդուբալին ու շարունակում արածել, թափահարելով պոչները: Նախրապանը կանգնել է անշարժ, ինչպես թուփ, և լուռ նայում է եկվորին:

— Հե՛յ, — բղավում է Յուրայը: — Այդ դո՛ւ ես, Միշա: Դե, փառք աստծու:

Միշան նայում է, ու ոչ մի խոսք:

— Չե՞ս ճանաչում: Ես Հորդուբալն եմ:

— Ա-ա՛, Հորդուբալը, — ասում է Միշան առանց զարմանքի: Ինչի՞ վրա զարմանա:

— Ամերիկայից եմ վերադարձել...

— Ի՞նչ:

— Ամերիկայից:

— Հա, Ամերիկայից:

— Ո՞ւմ եզներն ես պահում, Միշա:

— Ի՞նչ:

— Ասում եմ՝ ո՞ւմ եզներն են:

— Հա, ում եզները: Կրիվոյի:

— Այդպես, այդպես, Կրիվոյի: Լավ անասուններ են: Իսկ դու ինչպե՞ս ես, Միշա, առո՞ղջ ես: Եկել եմ քեզ տեսնեմ:

— Ի՞նչ:

— Դե, տեսնեմ քեզ:

Միշան՝ ոչ մի խոսք, միայն աչքերն է ճպճապացնում: Այստեղ, բաց երկնքի տակ, խոսելը կմոռանաս: Հորդուբալը հենվելով արմունկին, պառկում է խոտերի վրա, և մի ծղոտ դնելով բերանը, սկսում է ծամել: Այստեղ ուրիշ աշխարհ է, այստեղ խոսել չի կարելի ու չի էլ հարկավոր: Ապրիլից մինչև սեպտեմբեր Միշան արածացնում է նախիրը, շաբաթներով ոչ մի կենդանի շունչ չտեսնելով:

— Միշա, դու երբևէ եղե՞լ ես այնտեղ ներքևը, տափաստանում:

— Ի՞նչ:

— Ասում եմ, տափաստանում եղե՞լ ես:

— Հա, տափաստանում: Չէ, չեմ եղել:

— Իսկ վերև՞ը: Հոռիում եղե՞լ ես:

— Եղել եմ:

— Իսկ այն սարի ետև՞ը:

— Չէ: Չեմ եղել:

— Այ տեսնում ես, իսկ ես Ամերիկայում եմ եղել: Բայց ի՞նչ օգուտ: Նույնիսկ սեփական կնոջս չեմ հասկանում:

— Էնտեղ, — ասում է Միշան, — էնտեղ էսպիսի արոտներ չկան:

— Լսիր, ի՞նչ է եղել այնտեղ, որտեղ անտառ են հատել, — հարցնում է Յուրայը, ինչպես դեռևս երեխայությանն էր հետաքրքրվում:

— Ի՞նչ:

— Ասում եմ, անտառ են հատել:

— Հա, հատել:

Միշան մտախոհ ծխամորճն է փստփստացնում:

— Ինչ իմանաս: Ասում են, ավազակները ամբոց են շինել: Դե, ինչեր ասես, որ դուրս չեն տալիս...

— Իսկ ճի՞շտ է, որ այնտեղ չար ոզի է շրջում:

— Էդ էլ են ասում... — անորոշությամբ արձագանքում է Միշան:



Հորդուբալը շուռ է գալիս մեջքի վրա: «Երանություն, — մտածում է նա իր մեջ: — Թե ինչ կա այնտեղ, ներքևում, չես էլ իմանում: Մարդիկ դես ու դեն են ընկնում, խանգարում իրար, ահա ուր որ է արյուրների նման կկաչեն մեկմեկու. ատամերդ սեղմում ես՝ միայն թե չգբաղվես»:

— Միշա, դու կին ունե՞ս:

— Ի՞նչ:

— Կին ունե՞ս:

— Չէ:

Հարթավայրում այսպիսի ամպեր չես տեսնի: Այնտեղ երկինքը դատարկ է: Իսկ այստեղ դրանք ոնց որ կովերն արոտում: Մարդը պառկել է մեջքի վրա ու ամպերն է արածացնում: Նրանք լողում են, նա էլ նրանց հետ է լողում, նույնիսկ տարօրինակ է՝ ինչ թեթև է ինքը, ամպերի հետ վերև է բարձրանում: Տեսնես, այդ ամպերն ո՞ւր են գնում, որտե՞ղ են պահվում երեկոյան: Հավվում են: Բայց մի՞թե որևէ բան կարող է հենց այնպես չքանալ:

Հորդուբալը հենվում է արմունկին:

— Միշա, ուզում եմ քեզնից մի բան հացնել: Դու որևէ կախարդական խոտ չգիտե՞ս:

— Ի՞նչ:

— Որևէ կախարդական խոտ: Դե, որպեսզի աղջիկը սիրահարվի քեզ:

— Ը-ը, — մոթամոթում է Միշան, — ինչիս է:

— Դե, քեզ համար չէ, այլ, ասենք, հարկավոր է ուրիշին:

— Ինչի՞ համար է այդ, — բարկանում է Միշան: — Ավելորդ է:

— Բայց և այնպես, այդպիսի խոտ գիտե՞ս:

— Չգիտեմ, — թքում է Միշան: — Ես գնչուհի եմ, ինչ է:

— Բայց ախր դու կարողանում ես բուժել:

Միշան՝ ոչ մի խոսք, միայն աչքերն է թարթում:

— Իսկ մի՞թե դու գիտես, թե ինչ մահով ես մեռնելու, — հանկարծ ասում է նա:

Հորդուբալը նստում է, սիրտը խփում է արագ-արագ:

— Զեռի Միշա, կարծում ես շուտո՞վ:

Միշան մտախոհ աչքերն է ճպճպացնում:

— Ինչ իմանաս՝ մարդը երկա՞ր կապրի:

— Միշա, իսկ դու քանի՞ տարեկան ես:

— Չեմ իմանում, ինչիս է պետք:

— Ճիշտ է, ինչի է պետք, — հառաչում է Հորդուբալը:

Օրինակ, ինչո՞ւ իմանալ, թե ինչ է մտածում Պոլանան: Այնտեղ ներքևում մարդ դրանից տանջվում է, իսկ այստեղ՝ ինչ կուզես մտածիր, աղավնյակս: Եթե բախտավոր լինեիր, չէր

մտածի: Պարզապես զարմանալի է, թե այդ ամենը որքան հեռու է այստեղից, այնքան հեռու, որ ուղղակի սիրտդ նվաղում է: Երբ մարդ մենակ է մնում, ասես մեծ բարձրությունից նայում է իրեն ու տեսնում, թե ոնց է իրար անցնում, բարկանում, հուզվում... Իսկ ինքն ընդամենը փոքրիկ, վախեցած մի մրջյունիկ է, որը չգիտի ուր կորչի:

Մեծ հանգստություն է իջնում Յուրայի վրա: Այնքան մեծ, որ սիրտը մոկտում է: Նայեք հապա՝ ինչ մուժիկ է, բայց երջանկության բեռից տնքում է, հառաչում: Է՛իս, ինչպե՛ս չի ուզում վեր կենալ ու իջնել գյուղ: Դե, ինչ ասել է՝ չի ուզում, պարզապես ուժ չունի: Մարդ ուզում է կամացու՛կ-կամացուկ պառկել այստեղ, որպեսզի հոգում ամեն ինչ խաղաղվի ու նստի: Պառկել օրեր, պառկել շաբաթներ ու սպասել, մինչև որ ներսում ամեն ինչ հանգստանա: Թող երկնային գմբեթը պտույտ գա, թող եզր գլուխն իջեցնի քեզ վրա ու փնչացնի ուղիղ երեսիդ, թող արջամուկը զննի քեզ՝ մա՛րդ ես դու, թե քար: Իհարկե, քար ես, և փոքրիկ գագանը ցատկում է վրադ, բարձրանում ետևի թաթիկներին ու ականջ դնում... Հորդուբալը պառկել է ձեռքերը տարածած. հիմա ոչ Հորդուբալ կա, ոչ Պոլանա, միայն երկինքն է, երկիրը, քամին ու կովերի զանգակների զնգոցը: Ամպերը հալվում են, ինչպես մարդու շունչը ասպակու վրա, նրանցից հետք անգամ չի մնում... Երևի եզր մտածում է՝ ինչքա՛ն հոգսեր ունի Հորդուբալը, իսկ ինքն ընդամենը զանգակը զնգացնելով արածում է:

Ինչո՞ւ իմանալ: Նայիր: Ախր աստված էլ է նայում: Նա կովի մեծ-մեծ, հանգիստ աչքեր ունի: Քամին խշշում է, ու թվում է, թե ինքը ժամանակն է խշշում: Էլ որտեղի՞ց է լույս ընկնում նա... Ի՞նչ կարիք կա իմանալ:

Շուտով իրիկուն կլինի: Յուրայը վերադառնում է տուն, կտրում է մարգագետինը, մտնում անտառ — քայլում է թեթև, լայն-լայն: Հոգին խաղաղվել է, ոչ մի բան չի խռովում նրան: Լավ, Պոլանա, ես էլ չեմ տնկվի աչքիդ առաջ, երկուսիս համար նեղվածք է: Գործ-մործ կճարվի որևէ մեկի մոտ, իսկ եթե ոչ, կբարձրանամ այստեղ վերև, կնստեմ մինչև իրիկուն: Մարդ ինչքա՛ն պիտի ապրի: Ասա, խնդրեմ, երկու մրջյուն ինչո՞ւ պիտի խանգարեն իրար, ախր տեղը հերիքում է, նույնիսկ չգիտես, թե այդքան տեղը որտեղից: Իսկ ես հեռվից էլ կարող եմ նայել իմ տան վրա: Փառք աստծու, սարերի գագաթներին թիվ ու համար չկա: Կարելի է բարձրանալ վեր, վեր, ուղղակի աստծու մորուքի տակ, և այնտեղից նայել ներքև: Բարձրանալ այնտեղ, ուր շրջում են միայն ամպերը... ու հալվում գոլորշու նման:

Արդեն լսվում է նախրի զանգերի ձայնը, իսկ Հորդուբալը շարունակում է նստած մնալ ուրցապատ մարգին. ձեռքին հատապտուղների փնջիկը, նա նայում է ներքև նոր, կարմիր տանիքին: Բակը երևում է ասես ափիդ մեջ: Մարդ Հաֆյային այստեղ բերի ու ցույց տա՝ նայիր, Հաֆյա, մի՞թե դա խաղալիք չէ:

Մի փոքրիկ, լուսավոր կերպարանք դուրս է գալիս բակ ու կանգ առնում: Իսկ ահա ախոռից հայտնվում է մի ուրիշ մուժ կերպարանք, մոտենում է առաջինին ու կանգ առնում կողքին: Նրանք ասես խաղալիքներ լինեն, չեն շարժվում: Մրջյունը որ մրջյուն է, էլի բեղիկները կշարժեր, կվազվզեր ետ ու առաջ, իսկ մարդիկ ծիծաղելի են. կանգնել են կողք-կողքի, և ուրիշ ոչինչ: «Ինչ իմանաս», — մտածում է Հորդուբալը: Բայց տարօրինակ է, ինչո՞ւ են նրանք այդքան երկար ժամանակ քարացած մնացել: Մինչև իսկ մարդու սարսափ է պատում՝ կանգնել ու չեն շարժվում տեղներից:

Յուրայ, ո՞ր է այն խաղաղությունը, որ բերում էիր սարերից: Ո՞ր է այն բեռը, որ ճնշում է քեզ: Շատ բան վերցրիր այնտեղից, և դրանում շատ վիշտ ու տխրություն կա: Հիմա ձեռքերդ տարածել ու կրում ես քո խաչը: Իսկ ներքևում այն երկուսը կանգնել-մնացել են: Ա՛խ, տե՛ր աստված, գոնե տեղներից շարժվեին: Ահա վերջապես լուսավոր կերպարանքը պոկվեց տեղից ու անհետացավ: Իսկ սևը շարունակում է կանգնած մնալ, չի շարժվում... Դե ահա, փառք աստծու, նա էլ կորավ:

Հորդուբալը վերադառնում է տուն հատապտղի փնջիկով: Միայն մի փունջ հատապտուղ բերեց, այն էլ մոռացավ բակում: Եվ նորից չորսն էլ նստել են սեղանի շուրջ: Հորդուբալն ուզում է ասել՝ Հաֆյա, ես մի քարայծ տեսա, բայց չի կարողանում այդ հասարակ բառերն արտասանել. դրանք դեմ են առնում կոկորդին, ասես մեծ-մեծ պատամներ:

Պոլանան չի ուտում. նա գունատ է, ոնց որ ոսկորից պատրաստված: Շտեպանը խոժոռ կռացել է ափսեի վրա, մատներով ճմլում է հացի կտորը ու մեկ էլ, դանակը շարտելով, դուրս է արձնում սենյակից, ասես կոկորդին բան էր դեմ առել:

— Ի՞նչ եղավ քեռի Շտեպանին, — հառաչում է Հաֆյան:

Պոլանան ոչ մի բառ: Նա լուռ հավաքում է սեղանը. ամբողջովին կապտել է, ոչ մի կերպ չի կարողանում դողը զսպել:

Իսկ Հորդուբալը գնում է կովերի մոտ: Բաժիկը գլուխը դարձնում է նրան, շղթան գնգացնում: Ի՞նչ կա, տեր: Ինչո՞ւ ես այդպես ծանր շնչում: Է՛հ, Բաժիկ, ինչ կարիք կա իմանաս: Այս ամենը ծանր է, ծանր, ավելի վատ է, քան շղթան: Այնտեղ, սարերում, ես ու դու կգնգացնեիք մեր զանգակները, — սարերում տեղ որքան ուզես, աստծուն էլ հերիք կանի: Իսկ մարդկանց մոտ նեղվածք է: Երկու-երեք հոգի իրար են գալիս, և այնպիսի նեղվածություն է: Ինչ է, մի՞թե չես լսում, թե ոնց են գնգում մեր շղթաները:

## XI

Այդ գիշեր Մանյան թունդ կոնձեց ու խժեռեց խոզի պես: Ոչ թե Կրիվոյում, այլ Տուչեմեշիի հրեա պանդոկապանի մոտ: Չահելների հետ կռիվ սարքեց. ասում են՝ բանը դանակի հասավ: Ո՞վ գիտե: Բայց առավոտյան դեմ վերադարձավ ուռած, ծեծված, ու հիմա ախոռում քունն է առնում: «Հարկավոր է ձիերին ջրել, — մտածում է Յուրայը. — բայց ես քո գործերին չեմ խառնվի: Ձիերի հետ չի կարելի խոսել: Դե լավ, ինքդ նայիր նրանց»:

Պոլանան ստվեր է կտրել, չես ուզում նայել վրան: «Օ՛հ, այ թե գործեր են, — մռայլում է Հորդուբալը: — Ի՞նչ անել»:

Եվ տոթ է, տոթ, ինչպես ամպրոպից առաջ, ճանճերը կծում են, հանգիստ չեն տալիս: Օ՛հ, ինչ վատ օր է: Յուրայը քարշ է գալիս դեպի պարտեզ, ամբարի ետևը: Այստեղ էլ է նեղվում: Դե, ինչ անել: Ամենուրեք եղինջ է միայն, իսկ որքան պուտուկներ կան՝ անթիվ-անհամար. — և աղբ, աղբ... Պոլանան չի երևում, թաքնվել է մառանում... Թող աստված քեզ ների, Պոլանա, դու չգիտես, թե ինձ համար որքան ծանր է այստեղ...

Հորդուբայր մտախոհ քորում է քրտնած ծոծրակը: Ամպրոպ է լինելու: Շտեպանը պետք է որ խոտը տանիքի տակ հանի:

Հորդուբայր անցնում է ցանկապատի վրայով, ետևի կողմից շրջանցում գյուղը, նայում երկնքին՝ ինչպե՞ս է:

Ետևի կողմից գյուղն ասես սեղան լինի, որին ներքևից ես նայում՝ մի գլուխ անտաշ գերաններ ու փայտեղեն: Եվ ասես ոչ ոք քեզ չի նկատում, ասես դու ամբողջ աշխարհի հետ տափկնոցի ես խաղում. չորս կողմ ցանկապատներ են ու կռատուկներ, սագերի ավելցուկ կաղամբ, ինչ-որ աղբակույտ, գժախոտ ու գնչուներ, գնչուական վրաններ գյուղի ետևում: Յուրայն անվճռականորեն կանգ է առնում. տեր իմ, այս ո՛ր հասա. Պոլանան մենակ է, Շտեպանը, գլուխը կորցրած, քնել է ախոռում...

Հանկարծ Հորդուբայրի սիրտն սկսում է խփել... Գրողը տանի այդ գնչուհուն: Նստել է ուղղակի գետնին՝ չաղիկ, պառավ մի վիուկ, և գնչուի գլխին ոչիլ է փնտրում:

— Ի՞նչ է ուզում պանը, — խռպոտ կոկոռում է գնչուհին:

— Գնչուհի, գնչուհի, — խնդրում է Յուրայր, ցնցվելով: — Դու կարո՞ղ ես սիրադեղ պատրաստել:

— Ոնց չիմանամ, — ասամներն է մերկացնում գնչուհին: — Իսկ ի՞նչ տաս դրա համար:

— Դույար, ամերիկյան դույար, — խոխոսացնում է Հորդուբայրը, — երկու դույար:

— Է՛յ դու, լե՛շ, — հայհոյում է գնչուհին: — Երկու դույարով շանը շան վրա չես քաշի, երկու դույարով, — լսում ես, — կովին էլ չես կախարդի:

— Տասը դույար, — հուզված փսփսում է Հորդուբայրը, — տասը, գնչուհի:

Գնչուհին իսկույն լռում է ու կեղտոտ ափը պարզում նրան: Տո՛ւր:

Յուրայն անհաստատ ձեռքով շտապ քրքրում է փողերը:

— Գնչուհի, թունդ սիրադեղ եփիր, մի գիշերվա համար չէ, ոչ էլ մի ամսվա. ոչ էլ մի տարվա համար: Որ սիրտը փափկի, որ լեզուն բացվի, որ նա ինձ տեսնելիս ուրախանա:

— Հե՛յ, Իվկա, — մոթմոթում է գնչուհին, — կրակ արա:

Նա թռչունի թաթերի նմանվող կնճռապատ ձեռքերով խառնշտորում է պարկը:

Ա՛խ, ի՞նչ ամոթ է: Ամբողջ երկինքը ծածկվեց ամպերով, ամպրոպ է լինելու: Եփիր, գնչուհի, լավ եփիր: Է՛խ, Պոլանա, տեսնո՞ւմ ես ուր հասցրիր դու ինձ:

Գնչուհին քթի տակ մոթմոթում է, պտղունցով պարկից ինչ-որ համեմունքներ զգելով կաթսայիկի մեջ: Չզվելի հոտ է գալիս: Եվ գնչուհու պտղունցից, այն բանից, որ նա գլուխը տմբտմբացնում է, ձեռքերով կախարդում, — այդ ամենից Յուրայն իրեն վատ է զգում: Նա պատրաստ է գետնի տակ անցնելու: Սա քեզ համար եմ անում, Պոլանա, միայն քեզ համար: Ա՛խ, ի՞նչ ամոթ է:

Յուրայր վազում է դեպի տուն, սիրադեղը ձեռքերի մեջ, վազում է, շտապում՝ ամպրոպն ուր որ է կպայթի: Թեթև վազքով աճապարում են ընդդեմով բեռնված կովերը, երեխաները թռչում են այս ու այն կողմ, դեպի տները, փոշին քուլա-քուլա բարձրանում է

ճանփի վրա: Հորդուբալը շնչակտուր բացում է դռնակն ու մի պահ սեղմվում ցանկապատին: Միտըը թփրտում է, չես կարող հանգստացնել: Քո պատճառով, Պոլանա:

Հանկարծ ախոռից դուրս է թռչում երեքամյա հովատակը, կանգ է առնում, խրխնջում, ապա ուղղվում է դեպի դարբասը:

— Օ-օ՛, — բղավում է Հորդուբալն ու ձեռքերը թափահարում նրա առաջ:

Տնից դուրս է վազում Պոլանան: Ձին ծառս է լինում, սլանում բակով մեկ, վերև նետում մեկ առջևի, մերթ ետևի ոտքերը, սմբակներով գետինը փորփրում:

Չգիտես որտեղից հայտնվում է Հաֆյան, բակի միջով վազում է դեպի մայրը, սարսափից ձորտում ու հանկարծ փռվում է գետնին: Պոլանան ճշում է, Հորդուբալը՝ ոռնում: Օ՛հ, ոտքերս ասես փայտից լինեն, մի՞թե չեմ հասնի...

Իսկ ախոռից արդեն սլանում է Մանյան, սպիտակ, լայն թևքերը ծածանելով օդում... Ձին ծառս է լինում, իսկ մարդը կպել է նրա բաշից. ձին ուզում է պոկվել, բայց ո՛ր, Շտեպանին չես կարող ցած գցել, կառչել է վայրի կատվի պես:

Ձին աշխատում է դուրս պրծնել, թափահարում է գլուխը, գավակը ցնցում: Թըը՛մփ — Մանյան ցած է նետված, բայց բաշը ձեռքից բաց չի թողել. ընկնելով ծնկներին, նա պահում է ձիուն:

Հորդուբալի ոտքերը միայն այժմ են ասես կենդանանում: Նա վազում է Հաֆյայի մոտ: Ձին Մանյային քարշ է տալիս բակով մեկ, սակայն Շտեպանն արդեն ոտքի վրա է ու ձգում է նրան, բռնած բաշից: Հորդուբալը երեխային առել է ձեռքի վրա, ուզում է տուն տանել, բայց քարանում է տեղում՝ այնպես է տարվել մարդու և կենդանու պայքարի այդ տեսարանից: Պոլանան ձեռքերը սեղմել է կրծքին: Իսկ Մանյան ծիծաղում է ականջ ծակող ձայնով, խրխնջում ձիու նման և, գապված փոնգսացող հովատակին քառատրոփ, ցատկումներով տանում է դեպի ախոռ:

— Վերցրու երեխային, — ասում է Հորդուբալը, բայց Պոլանան չի լսում: — Պոլանա, լսո՛ւմ ես, Պոլանա:

Յուրայն առաջին անգամ ձեռքը դնում է նրա ուսին:

— Պոլանա, հրես Հաֆյան:

Նայեց: Ա՛խ, Պոլանա, մի՞թե դու առաջ էլ այդպիսի աչքեր ունեիր: Մի՞թե երբևէ շնչել էիր այսպես ստեպ-ստեպ, կիսաբաց բերանով: Ինչպե՛ս ես գեղեցկացել... Եվ ահա ամեն ինչ հանգավ:

— Նրան բան չի եղել, — քրթմնջում է Պոլանան ու հեծկլտացող Հաֆյային տուն տանում:

Մանյան դուրս է գալիս ախոռից, թևքով սրբում երեսի արյունը, արյուն թքում:

— Ամեն ինչ կարգին է, — նետում է նա:

— Գնանք, Շտեպան, գնանք, — ձայն է տալիս նրան Հորդուբալը, — ջուր լցնեմ գլխիդ, լվացվիր:

Սառը ջրից Շտեպանը բավականությամբ փնչացնում է և ուրախ ցնցվում, ջրի ցայտեր շաղ տալով շուրջը:

— Այ թե գործ բացվեց, հը՞, — աշխուժանում է նա: — Հովատակը մեծացել է, պան, դրա համար էլ այդպես կատաղել է: — Մանյան, թրջված, զգգգված, քնծիծաղում է: — Է՛խ, լավ ձիուկ է լինելու:

Յուրայն ուզում է ասել. «Կեցցես, Շտեպան, լավ զսպեցիր ձիուն», բայց տղամարդկանց միջև այդպիսի խոսքերն ավելորդ են: Եվ, մոթմոթալով՝ «ամպրոպ կլինի», Հորդուբալը քաշվում է ամբարի ետևը: Հարավում երկինքը մթնում է. վատ նշան՝ ամպրոպը շարժվում է տափաստանի կողմից: Հիանալի հովատակ է հասակ առել, իսկ քեզ արդեն ոտքերդ էլ չեն ենթարկվում, չես կարողանում ժամանակին երեխային վերցնել: Երևի ծերացել եմ, հը՞, Պոլանա, ծերացել եմ: Իսկ գուցե ուրի՞շ բան կա: Չեմ հասկանում, ինչո՞ւ ոտքերս թմրեցին, մեկնումեկը կախարդե՞ց:

Աստված իմ, ի՛նչ շուտ է մթնում: Ահա ամպերն էլ որոտացին: Գնչուհին սիրաղեղ տվեց, իսկ այստեղ հովատակն սկսեց իր խաղը: Իսկ ես չկառչեցի բաշից, վախեցա, քարացա տեղումս: Ոչ թե ես, այլ Շտեպանը բռնեց... Չէ մի չբռներ՝ ախր երիտասարդ է: Ա՛խ, Պոլանա, Պոլանա, ինչո՞ւ էիր այդպես նայում նրան, ինչո՞ւ այդպես կարմրատակեցիր...

Ահա ամպրոպն արդեն այստեղ է, նետվում է այս ու այն կողմ, ինչպես խրտնած ձի, սմբակների տակից կայծեր են թռչում: Իսկ դու չկառչեցիր ձիու բաշից, ոտքերդ թմրեցին, հրաժարվեցին վազել: Չցատկեցիր դու, չբղավեցիր... Իսկ ահա Շտեպանը... Թո՛ւ, գնչուական զզվելի խմիչք, հովատակը դրանից կատաղեց, իսկ դու այդ խմիչքը պատրաստում ես Պոլանայի համար: Ինչո՞ւ դու չնետվեցիր հովատակի վրա: Պոլանան կնայեր, ձեռքերը կրծքին սեղմած, և աչքերը կփայլեին, ինչպես երբեք...

Հորդուբալը աչքերն է ճպճպացնում, չզգալով վզին ընկնող տաք կաթիլները:

Երկինքը ճեղքվում է երկու կեսի, ճայթյուն, ճարճատյուն: Հորդուբալն շտապով երեսին խաչ է հանում ու պոկվում տեղից: Չէ, դեռ ամեն ինչ արված չէ, հարկավոր է գնչուհու դեղը թափել եղինջների մեջ: Եվ վազելով մտնել ծածկի տակ ու նայել, թե փոթորիկը ոնց է մոլեգնում:

## **XII**

Յուրայն ուրիշ որտե՞ղ կարող է լինել: Կծկվել է ամբարի ետևում ու միտք է անում: Դե լավ, ես ծեր եմ: Իսկ, ահա խնդրեմ, ինչից սկսվեց այդ: Ապրում ես առանց մի բան հասկանալու, այսօր նույնն ես, ինչ երեկ էիր, և հանկարծ՝ ծերացել ես: Ասես աչքով տվեցին: Այլևս չես կառչի խենթ ձիու բաշից, կռիվ չես սարքի պանդուկում: Չի ուրսալու փոխարեն, երեխային ես առնում ձեռքերիդ վրա: Իսկ առաջներում, երևի, ձիուց չվախենայիր: Ախր մի ժամանակ կռվում էի պանդուկում, և լավ էի կռվում: Մինչև իսկ Հերիչի հետ, կուզես Վասիլին հարցրու, Պոլանա: Եվ համեցեք՝ ծեր ես... Իսկ Պոլանան ծեր չի:

Ասենք թե ծեր է, հետո՞ ինչ: Մեկնումեկը պետք է որ երեխային ձեռքերի վրա առնի: Է՛խ, Պոլանա, ես էլ, օրինակի համար, կարող էի քեզ ցույց տալ, թե ինչպիսի տանտեր եմ: Կապրեիր դու ոնց որ տիրուհի, աղջիկներ կվարձեիր աշխատանքի ու կկարգադրեիր. «Է՛յ, Մարիկա, հավերին կուտ տուր, դե շուտ: Ակսենա, կեր տուր կովերին»: Ծիշտ է, երեք

հազար դուարս գողացան, բայց յոթ հարյուրն էլի հո կա: Դրանով կարելի է որոշ բաներ առնել: Աղավնյակս, իզուր չէ, որ ես եղել եմ Ամերիկայում. ջահել թե ծեր, միայն գիտեմ աշխարհում ինչն ինչոց է: Այ, ասում են կով պահելն օգտակար չի և նման բաներ: Չէ, հարկավոր է խելքով առևտուր անել: Ամերիկայում, օրինակ, գյուղացին չի սպասում մսավաճառին. ինքն է գնում նրա մոտ ու պայման կապում՝ տարին այսքան գլուխ անասուն, օրը այսքան վեսսել<sup>[33]</sup> կաթ, օլ-ռայթ: Գործը այ այսպես է արվում: Ասա, խնդրեմ, ինչո՞ւ մեզ մոտ էլ նույնը չանել: Ձեռք բերել մի ձի ու սայլ: Ծախիք քո ձիերը, Պոլանա, ես ուզում եմ հնազանդ մի ձի, որի հետ և՛ խոսես, և՛ քաղաք գնաս: Կասեն՝ օհո՛, մեր ամերիկացին ամեն ինչ գիտի, իզուր չէ, որ արար-աշխարհում ման է եկել: Տուն է դառնում, հետը քսակը լիքը դրամ բերելով: Մեկ էլ տեսար, հարևաններն իրար ետևից մոտս եկան: «Մի ջուխտ սագ հետո քաղաք չե՞ս տանի ծախելու, Յուրայ»: Ինչո՞ւ չծախել, միայն թե չեմ կարող երկու սագ թևիս տակ դրած տանել ու ձայն տալ՝ սա՛գ, սա՛գ, լավ սա՛գ: Չէ, շաբաթը հիսուն կամ նույնիսկ հարյուր սագ. վանդակներ կշինեմ ու հայդա քաղաք: Այ թե ոնց են բիզնես անում, հայրենակիցներ: Կամ փայտը՝ հիսուն սայլ փայտ: Եթե կարտոֆիլ է, ապա վազոններով: Այ թե Հորդուբալն Ամերիկայում ինչ խելք է սովորել: Պոլանա, այն ժամանակ դու էլ կասես՝ Յուրայը խելոք է, ջահելները նրան չեն հասնի: «Է՛յ, Մարիկա, Ակսենա, պանը վերադարձել է շուկայից, սապոզները հանեք»: — Հոգյակս, իսկ դու ամբողջ օրն ի՞նչ էիր անում: — Տնտեսությանն էի այք ածում, մշակների հետ կռվում ու մեկ էլ... մեկ էլ սպում էի քեզ, Յուրայ:

Հորդուբալը նստել է կոճղին ու միտք է անում. «Չփորձե՞մ: Իսկ ինչո՞ւ ոչ: Մարդ քանի գործ է անում, ջահել է: Այս չէ, այն մյուսը: Օրինակ, ասենք, գնել Մենչուլի ներքևի քարափը. այնտեղ քարը ոնց որ մարմար, — ու տանել քաղաք: Մի՞թե ներքևում, նրանց մոտ այդպիսի քար կա: Կեղտ է կամ փոշի: Երկինքն ինչ է՝ նա էլ է փոշոտ: Իսկ քարը ինքս կկտրեմ, ինչքան եմ կտրել Ամերիկայում: Ախպերս, կարող եմ դինամիտով էլ աշխատել: Անցք ես փորում, փամփուշտը դնում մեջը... «Բոլորդ հեռու փախեք: Ծուտ, շուտ»: Եվ դըր՛մբ: Այ դա տղամարդու գործ է: Ծիշտ չի՞, Պոլանա: Դրա համեմատությամբ հովատակ բռնելն ի՞նչ է: Կքայլեմ կարմիր դրոշիկը ձեռքիս. է՛յ, զգուշացեք, պայթեցնում եմ: Ու ո՞նց կդրմբացնեմ. իսկ դու, օտարական, դաշտում ձիեր որսա»:

Մի՞թե էլի քիչ գործեր կան, որոնցով կարելի է զբաղվել: Ի՞նչ կա ձեզ մոտ տափաստանում: Բան էլ չէ, միայն հարթ տարածություն: Իսկ այստեղ, թթու առվի մոտ, ջրի մեջ երկաթ կա, դրանից էլ ջուրը պղտոր է: Տատարուկայի մոտ հողի մեջ թաղված մի քար է պսպղում, ոնց որ խեժ: Կանայք ասում են՝ սարերում գանձեր կան պահված: Որ ման գաս այնտեղերքը՝ Դուրնոյում ու Սև գազաթում, Տատինսկոյից ու Գուլից դենը, ով գիտի ինչեր կարելի է գտնել: Եղբայրներ, մեր ժամանակներում բարիքը հողի տակ էլ են փնտրում: Իսկ տանը ոչ մի խոսք: «Պոլանա, վաղը գնում եմ Պրագա, կպայմանավորվեմ պարոնների հետ»: Ուրիշ ոչինչ: Իսկ հետո պարոնները կգան, և ուղիղ Հորդուբալի մոտ: «Բարի օր, պարոն Հորդուբալը տա՞նն է: Այսպես ու այդպես, պարոն Հորդուբալ, դուք գանձ եք գտել. ի՞նչ հանք է. հիսուն տարի եղավ, ինչ մենք այն փնտրում ենք»: Իսկ ինչո՞ւ ոչ: Ահա և ձեզ «միայն քարեր»: Դե ախր դու գիտե՞ս, թե այդ քարի մեջ ինչ կա: Որ չգիտես, ավելի լավ է տագ անես:

Հորդուբալը շփոթվեց: Այդ ամենը, անշուշտ, հիմարություն է: Բայց Մենչուլի մոտի քարը հիմարություն չէ: Միայն մեկ կամ երկու գույգ եզներ են հարկավոր: Պողոլի մոխրագույն եզներ, եղջերուները՝ պարզած ձեռքեր: Համա՛ թե կենդանիներ են: Այ, հենց այդպես էլ

քայլել եզների հետ կողք-կողքի, քար բարձած սայլով: Հո-հո-ո՛, ծը՛-ծը՛-ծը՛... Իրար եկեք: Իսկ դու քո ձիերով ճամփից ետ քաշվիր: Իսկ այդ ո՛ւմ եզներն են: Հորդուբայինը: Ոչ որ իրենց կողմերում այդպիսի եզներ չունի:

Հորդուբայը թևատակից հանում է քսակն ու նորից փողերը հաշվում: Յոթ հարյուր դոլար: Մեր փողով քսան հազարից ավելի կանի: Կարգին դրամագլուխ է, Պոլանա: Դրանով կարելի է նոր կյանք սկսել: Դեռ կտեսնես, թե Յուրայն ինչ տղամարդ է: Խելքը ուժ է: Թանկ արժի այն ձին, որ գլուխը բարձր է պահում, իսկ դու ավելի լավ է նայես եզանը. գլուխն օրորում է ու իր լուծը քաշում. և նրա տված օգուտն անհամեմատ ավելի մեծ է:

Գլուխը տմբոսմբացնելով, Յուրայը քարշ է գալիս դեպի բակ: Այնտեղ Պոլանան սիսեռ է մաքրում: Նա խստությամբ խոժոռում է հոնքերը, կնեպները թափ տալիս փեշից ու մտնում տուն:

### **XIII**

Հորդուբայը նստել է պանդոկում և ուրախ է: Փառք ասածու, աղմկալից է այստեղ: Միհալուկն է ներկա ու Վարվարինը, Պողերեյուկ Միհայլան՝ «Չամբիկ» մականունով, Հերպակը, Ֆեդելեշ Միհայլան ու Ֆեֆել Հեյդան, Ֆեդյուկը, Հրիցը, Ալեքսան, Գրիհորին և անտառապահ Դոդյան: Հարևանները խոսում են այն մասին, որ հարկավոր է սպանել վայրի վարազներին, որոնք փչացնում են ցանքերը: Մենչույի տակի քարափը պատկանում է Գրիհորիին, լավ կլիներ նրա հետ խոսել, սկսել հեռվից, զգուշությամբ, իբրև, ուզում եմ հանդի ճամփան քարել... «Է՛խ, — դառնանում է Յուրայը, — ախր ես հանդ չունեմ: Հիմա դա Պյոսայինն է, հրեն նստել է հոնքերը կիտած: Ես հանդ չունեմ, էլ ինչի՞ս են նրանց հոգսերը: Թող իրենք քշեն-հեռացնեն վարազներին, իմ ի՞նչ գործն է, — մոայլվում է Հորդուբայը: — Դուք ձեր հոգսերն ունեք, ես իմը»:

Այդ միջոցին գյուղացիները խոսում են այն մասին, թե ինչպես սկսեն որսը:

Յուրայը խմում է դանդաղ, տրվելով իր մտքերին: Պոլանան հոնքերը կիսեց ու մտավ տուն: Լավ, Պոլանա, մի օր դու էլ կուզես խոսել՝ այսպես ու այսպես, Յուրայ: Իսկ ես հոնքերս կկիսեմ ու կգնամ գինետուն: Տեսնենք, դուրդ կգա՞: Մոռ՛ւթս է սարսափելի ինչ է, թե աչքերիցս ջուր է կաթում: Կամ բերա՞նս է ծուռ, ոնց որ մուրացկան Լասոյինը: Հա, ծերացել եմ, հանքահորը խժռեց ինձ, միայն ջլերս են մնացել ու մեջքս: Չորեքթաթ մի կուշտ սողացել եմ հանքախորշերում: Մնացել են միայն ձեռքերս ու ոտքերս: Տեսնեիր, ինչ ծակուռներից էինք ածուխ հանում: Մինչև հիմա էլ փոշի եմ թքում, Պոլանա: Աղավնյակս, քեզ քիչ բանով կարող եմ դուր գալ, բայց աշխատել գիտեմ, այ կտեսնես...

— Է՛յ, ամերիկացի, — քմծիծաղով բղավում է Ֆեդելեշ Հեյդան, — ես ինչո՞ւ քեզ ցույց չես տալիս: Կա-չկա, եկել ես հայրենակիցներիդ հյուրասիրելու:

Հորդուբայը գլխով է անում:

— Եկել եմ, եկել: Կհյուրասիրեմ, այն էլ ամերիկյան ձևով. պանդոկապան, մի բաժակ ջուր տուր Հեյգային: Իսկ եթե դա քիչ է, Հեյգա, դույլը վերցրու, միաժամակ մոուրթ կլվանաս:



— Իսկ ի՞նչ գործ ունես իմ մռուրի հետ, — ծիծաղում է Հեյզան: — Միայն կնկաս սրտով լինի:

Յուրայը մռայլվում է՝ ի՞նչ գործ ունեմ քո կնկա հետ: Արի ու այդպիսիներին հյուրասիրիր: Դե ես կհյուրասիրեի: Աստված վկա, հարևաններ, ես ուրախ կլինեի խմել ձեզ հետ, ամուր գրկել բոլորիդ և երգել, երգել, աչքերը փակած... Միայն թե դուրսներն ինձ ուրիշ գործերի համար են անհրաժեշտ: Մի բան եմ մտածել, հարևաններ, մի լավ, ամերիկական բան: Այ, սպասեցեք, կսկսեմ քարը ջարդել... «Օհո՛, — կասեն, — երևում է Հորդուբալը ծանծղել է. ինչ է, մեզ մոտ քար քի՛չ կա»: Իսկ ժամանակը կգա, կտեսնեք, թե ամերիկացին ոնց է քարից հում սեր քամում:

Ֆեդելեշ Միհայն սկսում է երգել, մյուսները ձայնակցում են: Է՛խ, լավ է նստել ընկերների հետ: Վաղուց է, երգեր չեմ լսել, շատ վաղուց: Յուրայը ծածկում է կիսափակ աչքերն ու սկսում հետները ձայնակցել: Քիչ-քիչ տաքանում է ու հանկարծ, — գրողը տանի ինչի՞ համար այդպես ճղճղոցը գցեց, երգում է ամբողջ ձայնով, օրորվելով երգի տակտով:

— Է՛յ, դու, — բղավում է Ֆեդելեշ Հեյզան: — Ով մեզ հետ չի խմում, մեզ հետ չի էլ երգում: Հորդուբալ, քեզ համար տանը երգիր:

— Կամ Շտեպանին ճամփիր էստեղ, — ավելացնում է Ֆեդյուկը, — ասում են, նա քեզանից էլ լավ է երգում:

Յուրայը վեր է կենում տեղից՝ հսկա, լողլող, գազաթն առնում է առաստաղին:

— Երգիր քեզ համար, Հեյզա, երգիր, — ասում է նա հաշտությամբ, ես արդեն ուզում էի տուն գնալ:

— Իսկ տանն ի՞նչ պիտի անես, — քմծիծաղում է Ֆեդելեշ Միհայը: — Էնտեղ բատրակ կա:

— Մեծացտունի՛ս տեսեք, — նետում է Հեյզան: — Կնկա համար բատրակ է վարձել...

Հորդուբալն արագ շուռ է գալիս:

— Հեյզա, — ատամների արանքից մռմռում է նա: — Դու այդ ո՞ւմ մասին ես ասում:

Հեյզան ծաղրական հայացքով նայում է նրան ու ճոճվում ոտքի թաթերի վրա:

— Ում մասի՞ն: Էստեղ մեզ մոտ մեկը կա:

Գյուղացիները բարձրանում են նստարաններից:

— Հանգիստ թող նրան, Հեյզա, — համոզում է Վարվարինը:

— Ինչ-որ մեկը գրկում է Հորդուբալի ուսերն ու բարեկամաբար դուրս հանում պանդոկից:

— Դու այդ ո՞ւմ ես ասում, — կրկնում է նա խռպոտ ձայնով:

— Մեզ մոտ ինչպե՞ր մեկը կա, — հատ-հատ արտաբերում է Ֆեդելեշ Հեյզան ու հանկարծ ասես մտրակով շրիկացնում Հորդուբալին: — Իսկ Պոլանայի նման քածեր՝ ինչքան ուզես:

— Գնա՛նք, — ոռնում է Հորդուբալն ու բոթելով առաջանում դեպի ելքը: Հեյզան անապարում է նրա հետևից, դանակն շտապ բաց անելով գրպանում: Է՛յ, Հորդուբալ,

զգուշացիր, մեջքիդ հարված կստանաս: Բայց Հորդուբալը մոտենում է դռներին, իսկ Հեյզան նրա ետևից, դանակը բռան մեջ այնպես սեղմած, որ նույնիսկ ձեռքը քրտնեց:

Բոլորը պանդոկից դուրս են նետվում: Յուրայը դառնում է Ֆեդելեշին.

— Դո՛ւ, — խռխռում է նա: — Հապա մոտեցիր:

Հեյզան շնչում է ծանր և, դանակը թաքցնելով մեջքի ետևում, պատրաստվում է թռիչքի: Հորդուբալը քեղու նման երկար, մեծ-մեծ ձեռքերով գրկում է Հեյզային և, ձեռքերը սեղմելով կողերին, բարձրացնում է օդի մեջ, շուռ գալիս ու շարտում է գետնին: Հեյզան, պազգելով, գայրույթից ֆսսացնում է: Հորդուբալը նորից է բարձրացնում նրան ու կրկին շարտում գետնին, ասես խիպար է սիկում: Եվ հանկարծ Հեյզայի ոտքերն ասես ջարդվում են, նա ընկնում է բերանքսիվայր, ձեռքերը տարածելով ու — թրա՛խկ — գլուխը զարկում ինչ-որ կիսատակառիկի. և ասես նա պառկած է մեռածի պես՝ ոչ թե մարդ է, այլ քուրջերի մի կույտ:

Հորդուբալը շնչում է ծանր ու արնակալիված աչքերը դարձնում շուրջը:

— Ես ինչ իմանայի՜ այնտեղ կիսատակառ կա, — մոթմոթում է նա, ասես արդարանալով:

Բայց այդ պահին նա գլխին մի հարված է ստանում: Ապա երկրորդը, երրորդը: Երկու, երեք, չորս մարդ, կենտրոնացած, տախտակով այնպես են հարվածում Հորդուբալի գլխին, որ թնդունը դուրս է գալիս:

— Թողե՛ք, — մոնչում է Հորդուբալը, մթության մեջ ձեռքերը թափահարելով, խփում է ինչ-որ մեկի քթին ու ընկնում, իզուր ջանալով վեր կենալ:

— Կռվո՛ւմ են, — լսվում է մեկի բղավոցը: Հորդուբալը կիսաբարձրանում է ու նորից փռվում գետնին: Չորս կողմից հարվածներ է, որ տեղում են նրա գլխին. նա տնքոցով նորից է փորձում ոտքի կանգնել...

— Դուք այս ի՞նչ եք անում այստեղ, — հնչում է մեկի փութկոտ, շնչակտուր ձայնը: Մտրակը շառաչում է մարմինների փնչացող կծիկին: Ինչ-որ մեկը չարությունից ոռնում է: Է՛յ, զգուշացիր դանակից: Սակայն Վասիլ Հերիչը դժվարությամբ է շունչը ետ բերում, մտրակը ճոճելով գետնին փռված Հորդուբալի գլխավերևում: Յուրայը ճգնում է վեր կենալ:

— Կորե՛ք այստեղից, — փրփրում է տանուտերը, մտրակը շրխկացնելով...

Է՛խ, թե տանուտեր չէիր լինի՛, քեզ էլ բաժին կհասներ... Սակայն բանն այն չէ, որ տանուտեր է, այլ պարզապես Վասիլ Հերիչը երևելի կռվող է: Ահա կանայք էլ որոշեցին փողոց դուրս գալ և ձեռքները ծալած կրծքներին, նայում են դեպի պանդոկ:

Յուրայ Հորդուբալը նորից է փորձում վեր կենալ տեղից. նրա գլուխը դրված է Վասիլի ծնկներին, և ինչ-որ մեկը երեսն է լվանում: Դա Պյոտան է:

— Մա ազնիվ ֆայթ<sup>34</sup> չի, Վասիլ, — մոմռում է «ամերիկացին»: — Երկուսը մեկի դեմ, այն էլ թիկունքից:

— Է՛խ, Յուրայ, նրանք վեց հոգով էին, աղավնյակա, և ոչ թե երկուսով, ու բոլորն էլ զինված էին ցանկապատի տախտակներով: Յուրայ, քո գլուխը կաղնու փայտից է, քանի որ երկու կես չեղավ:

— Իսկ Հեյզան ո՞նց է, — անհանգստանում է ծեծվածը:

— Հեյզան իր հասանելիքն ստացավ, — ասում է տանուտերը: — Նրան տարան տուն:

Յուրայը հառաչում է գոհունակությամբ:

— Է՛լ հիմա լեզուն շաղ չի տա, սրիկան, — մռմռթում է նա ու փորձում ոտքի կանգնել: Փառք աստծու, թեթևացավ, արդեն գլուխը բռնած կանգնել է ոտքերի վրա: — Ինչո՞ւ համար հարձակվեցին ինձ վրա, — զարմանում է նա: — Գնանք մի քիչ էլ խմենք, Վասի: Անիծածները չթողին երգեմ:

— Տուն գնա, Յուրայ, — հորդորում է տանուտերը: — Ես կգամ քեզ հետ: Չար ժամ է, մեկ էլ տեսար հետևեցին քեզ:

— Ես էլ վախեցա՛ նրանցից, ինչպե՞ս չէ, — ասում է Հորդուբայը ու երերալով քարշ գալիս դեպի տուն:

Չէ, Պոլանա, ես հարբած չեմ: Պանդոկում ծեծեցին ինձ: — Իսկ ինչո՞ւ համար ծեծեցին: — Հենց այնպես, աղավնյակս, քեֆի համար: Ֆեդելեշ Հեյզայի հետ ուժներս չափեցինք:

— Իսկ գիտես, Վասիլ, — ուշքի գալով սկսում է Յուրայը, — ես Ամերիկայում էլ «ֆայթ» ունեցա: Մի մայնեթ մուրճով նետվեց ինձ վրա: Գերմանացի էր, թե ինչ: Միջան թե մյուսները նրա ձեռքից մուրճն առան ու մեզ շրջանի մեջ քաշեցին: Կովեք մերկ ձեռքերով: Է՛խ, Վասիլ, մի լավ հարված ստացա մռուրթիս, բայց այնուամենայնիվ գետին դրի գերմանացուն: Եվ ոչ ոք չխառնվեց մեր կովին:

— Լսիր, Յուրայ, — խստությամբ ընդհատում է նրան Հերիչը: — Է՛լ պանդոկ չգաս: Թե չէ, նորից կռիվ կսկսվի:

— Ախր ինչո՞ւ, — զարմանում է Հորդուբայը: — Ես նրանց չեմ դիպչում:

— Դե, — պատասխանում է տանուտերը ոչ անմիջապես, — նրանք հո պիտի կովեն: Գնա քնիր, Յուրայ: Իսկ վաղը բատրակիդ արձակիր:

Հորդուբայը հոնքերը կիսեց:

— Ինչ ես դուրս տալիս, Հերիչ: Դու է՛լ ես խառնվում իմ գործերին:

— Ի՞նչ կարիք կա տանը օտար մարդ պահել, — պնդում է Վասիլը: — Գնա, գնա քնիր: Է՛խ, Յուրայ, չարժեր, որ դու Պոլանայի համար կովի բռնվեիր:

Հորդուբայը կանգ է առնում, ասես տեղում մեխված:

— Դու է՛լ ես նույն կողմը ծռում: Դու էլ նույնն ես, ինչ որ նրանք, — վերջապես արտաբերում է նա: — Դու Պոլանային չգիտես: Միայն ես եմ ճանաչում նրան, իսկ դու... Դու չհամարձակվես...

Վասիլը ձեռքը բարեկամաբար դնում է նրա ուսին:

— Յուրայ: Ութ տարվա ընթացքում մենք կշտացել ենք նրան նայելուց...

Հորդուբայը զայրույթով դեն է նետում նրա ձեռքը:

— Անցիր, անցիր, թե չէ... Վկա է աստված, Հերիչ, այսօրվանից քանի ողջ եմ, այլևս չեմ ճանաչում քեզ: Մինչդեռ դու իմ լավագույն բարեկամն էիր:

Եվ, առանց շուռ գալու, Հորդուբայը քարշ է գալիս դեպի տուն: Ի պատասխան Հերիչը փնչացրեց ու դեռ երկար կամացուկ հայիոյում էր խավարում:

## XIV

Առավոտյան Շտեպանը լծում է ձիերին՝ պատրաստվում է տափաստան գնալ: Գոմից դուրս է գալիս Հորդուբալը՝ ուռած, սարսափելի, աչքերն արյուն կոխած:

— Շտեպան, ես գալիս եմ քեզ հետ, — կարճ հայտնում է նա:

Ն-նո՛: Եվ սայլը սլանում է գյուղի միջով: Յուրայը չի նայում ոչ հանդիպողներին, ոչ ձիերին: Դուրս եկան գյուղի եզրը:

— Կանգնիր, — հրամայում է Հորդուբալը: — Իջիր սայլից: Հարկավոր է խոսել:

Շտեպանը հանդգնորեն դիտում է տիրոջ ծեծված դեմքը: Իբրև ի՞նչ ես ուզում:

— Լսիր, Մանյա, — սկսում է Հորդուբալը անհաստատ ձայնով, — գյուղում բամբասանքներ են պտտում Պոլանայի և քո մասին: Այդ բոլորը փշոց է, գիտեմ, բայց պետք է վերջ տալ դրան: Հասկացա՞ր:

Շտեպանը ուսերն է թոթվում:

— Չէ, չհասկացա:

— Պետք է գնաս մեր մոտից, Շտեպան: Պոլանայի խաթեր: Հարկավոր է մարդկանց բերանները փակել: Այդպես է պետք, հասկացա՞ր:

Շտեպանը աչքերը լկտիաբար տնկում է Հորդուբալի վրա: Նա հայացքը հեռացնում է:

— Հասկացա:

Յուրայը ձեռքով է անում:

— Այդպես: Իսկ հիմա գնա:

Մանյան կանգնել է բռուցքները սեղմած. թվում է՝ ուր որ է կնետվի Հորդուբալի վրա:

— Գործիդ գնա, Շտեպան, — մոթմոթում է Հորդուբալը:

— Լավ, — ատամների արանքից նետում է Շտեպանը, թռչում սայլին, թափահարում մտրակը, — և ա՛ռ քեզ, — շրմփացնում ձիերի գլուխներին:

Ձիերը ետ-ետ են գնում. կաքավում են տեղներում ու կատաղի թռիչքով նետվում առաջ: Սայլը պոկվում է տեղից, շխկշխկում, ասես ուր որ է հազար կտոր կլինի:

Հորդուբալը կանգնել է ճամփի վրա, փռչի է կուլ տալիս, հետո դանդաղ շուռ է գալիս և, գլուխը կախ, գնում է տուն: Է՛իս, Յուրայ, այդպես ծերուկներն են քայլում:

## XV

Մի շարքում Յուրայր խիստ նիհարեց. թվում էր, ոսկորները չիսկիսկում են: Ասացեր խնդրեմ, ախր ինչպես չնիհարեր. հո դատարկ բան չի՝ առավոտյան ամեն ինչ հավաքել, խոճկորներին կերակրել, մաքրել ձիերին, կովերին նախիր հանել, մաքրել ախոռը, երեխային ճամփել դպրոց: Հետո ձիերով գնալ տափաստան՝ եգիպտացորենը քաղելու ժամանակն է: Կեսօրին՝ տուն, Հաֆյայի համար ճաշ պատրաստել, ձիերին ջրել, հավերին կուտ տալ ու նորից տափաստան, նորից աշխատանք: Իսկ երեկոյան նույնպես պետք է շտապել տուն, ընթրիք պատրաստել, անասուններին հոգալ, հետո էլ անվարժ ձեռքով Հաֆյայի շրջագգեստը կարել: Երեխան մեծանում է, խաղում, դժվա՛ր է շորը պատռել: Ամեն տեղ հասնելը հեշտ չէ, դժվար է որևէ բան աչքից չփախցնել: Երեկոյան Հորդուբալը փռվում է խոտերին, ոնց որ քոթուկ, բայց երկար ժամանակ անհանգստությունից չի կարողանում քնել: Միգուցե մի բան մոռացել է... Ա՛խ, աստված իմ, իհարկե, մոռացել է: Պատուհանների ծաղիկները չի ջրել: Եվ Հորդուբալը տնքալով վեր է կենում ու քարշ գալիս դեպի ցնցուղը:

Իսկ Պոլանան ասես գոյություն չունի: Մարդու ինադու փակվել է խորդանոցում: «Ինչ արած, — շվարած մտածում է Հորդուբալը, — տիրուհին բարկանում է, թե ինչո՞ւ իր հետ խորհուրդ չարի: Ինչո՞ւ չհարցրի. «Պոլանա, ի՞նչ ես ասում, ուզում եմ մշակին ազատել... Է՛խ, այ կին, ինքդ դատիր. կարող էի՞ ես քեզ ասել. «Այսպես ու այսպես, Պոլանա, այ թե ինչ են դուրս տալիս քո մասին»»: Դե, այստեղ խոսելու բան չկա, վերցրի ու ազատեցի բատրակին, հիմա ինչքան կուզես բարկացիր: Զեզ փայտով գործի չեմ դնի»:

Օհ, իսկ ինչպե՛ս է զգացվում Պոլանայի ձեռքերի կարիքը: Ընդամենը մի շաբաթ է անցել, և արդեն ինչքան գործ է մնացել երեսի վրա: Ո՞վ կարող էր մտածել, թե կնոջ ուսերին որքան բան է ընկած: Տղամարդը դրա կեսն էլ չի կարող անել: Ոչինչ, ինքն էլ կտեսնի, կդադարի բարկանալ ու կծիծաղի. «Օյ, Յուրայ, այ թե անշնորհքն ես դու, չես կարողանում ոչ եփել, ոչ թափել: Դե, ախր տղամարդուց ինչ ուզես»:

Մի անգամ անցողակի տեսավ նրան: Ինչ-որ բանի համար ետ եկավ բակ, իսկ Պոլանան կանգնած էր դռների մեջ: Ոնց որ սովեր: Աչքերի տակ օղակներ ու ճակատին համառ մի ծալք: Հորդուբալը երեսը շրջեց: «Ես հենց այնպես, աղավնյակս, ես քեզ չեմ տեսել»:

Իսկ Պոլանան սովերի պես անհետացավ:

Գիշերը, երբ Հորդուբալը պառկեց խոտերի վրա, լսեց, թե ինչպես մոտերքում դուռը կամացուկ ճռռաց: Պոլոնան է: Դուրս եկավ բակ ու կանգնեց: Իսկ Յուրայը, ձեռքերը գլխատակին, նայում է խավարի մեջ, և սիրտը նվաղում է:

Կովեր, ձիեր, Հաֆյա, հավեր, խոճկորներ, հանդ, ծաղիկներ, — աստված իմ, գործն անպակաս է: Բայց ամենից դժվարն այն է, որ ցույց տաս, թե ընտանիքում ամեն ինչ կարգին վիճակում է: Որպեսզի մարդիկ չասեն՝ Հորդուբալովների տանը անհամերաշխություն է տիրում: Յուրայը ամուսնացած մի քույր ունի, կարող էր օգնել, կարող էր ճաշ պատրաստել, բայց ոչ, խոնարհաբար շնորհակալ եմ, ավելի լավ է չգաս: Յանկապատի ետևից հարևանուհին գլխով է անում՝ իբրև, ցերեկը Հաֆյային ուղարկեք ինձ մոտ, Հորդուբալ, ես նրան հոգ կտանեմ: Ծնորհակալ եմ, հարևանուհի, մեծապես շնորհակալ եմ, մի անհանգստացեք: Պոլանան մի փոքր տկարացել է ու պառկել: Ես ինքս էլ կարող եմ նրա փոխարեն եփել-թափել: Կարիք չկա, որ դուք այստեղ հոտոտեք...

Յուրայը հանդիպեց Հերիչին, նա նայեց Հորդուբալին, երևում է՝ ուզում էր բարևել: Հորդուբալը շուռ եկավ. գնա քո ճամփան, գնա, ես քեզ չեմ ճանաչում:

Իսկ Հաֆյան առաջվա պես քաշվում է: Նայում է անթարթ աչքերով, երևի առանց Շտեպանի ձանձրանում է: Ինչ կարող ես ասել՝ երեխա է... Իսկ մարդիկ ինչեր ասես, որ դուրս չեին տալիս, բերանները չես կարող փակել...

Կովեր, ձիեր, եգիպտացորեն, խոճկորներ, այ՛, մնաց միայն խոզանոցը մաքրել ու խոզերին ջուր տալ: Հարկավոր է ճոռը մաքրել, որպեսզի աղբաջուրը հոսի գնա: Հորդուբալն անցնում է գործի, եռանդով փնջացնում. հիմա խոզանոցից բացի արար-աշխարհում ուրիշ ոչինչ չկա: Մպասիր, Պոլանա, կգաս այստեղ ու կգարմանաս. խոզանոցը ոնց որ խրճիթ լինի: Մնաց միայն թարմ ջուր բերել... Եվ Հորդուբալը փոքրիկ դուլյով գնում է դեպի ջրհորը:

Բակում, սայլի քեղու վրա, նստած է Մանյան. նա օրորում է ծնկներին դրած Հաֆյային և ինչ-որ բան է պատմում նրան:

Հորդուբալը դույլը ցած է դնում և, ձեռքերը խոթելով գրպանները, ուղիղ գնում է դեպի Շտեպանը:

Մանյան մի ձեռքով հեռացնում է Հաֆյային, մյուսը տանում գրպանը: Նրա աչքերը նեղացել, փայլում են, ինչպես դանակի շեղբը, սեղմված ձեռքում նկատելի է ինչ-որ առարկա՝ ուղղված ճիշտ Հորդուբալի փորին: Հորդուբալը քմծիծաղում է: Գիտեմ, գիտեմ, թե ատրճանակը ոնց են կրակում: Ամերիկայում տեսել եմ: Վերցրու, — և նա գրպանից հանում է ծալած դանակն ու նետում գետնին: Մանյան նորից է ձեռքը գրպանը տանում, առանց աչքը տիրոջից կտրելու:

Հորդուբալը ձեռքով հենվում է սայլակին ու նայում Շտեպանին վերևից ներքև: «Ի՞նչ անեմ ես քեզ, — մտածում է նա: — Տեր աստված, սրա հետ ինչպե՞ս վարվեմ»:

Հաֆյան հայացքը զարմանքով հորից դարձնում է Շտեպանին, Շտեպանից հորը և չգիտի, թե հետո ինչ է լինելու:

— Դե, Հաֆյա, — քրթմնջում է Հորդուբալը, — ուրա՞խ ես, որ Շտեպանը եկավ:

Աղջիկը՝ ոչ մի խոսք, միայն նայում է Մանյային: Հորդուբալը անվճռականորեն ծոծրակն է բրդում:

— Ի՞նչ ես նստած մնացել, Շտեպան, — դանդաղ ասում է նա: — Գնա ձիերին ջուր տուր:

## XVI

Հորդուբալը գնում է ուղիղ դեպի խորդանոց ու դուռը ծեծում:

— Բաց արա, Պոլանա:

Դուռը բացվում է, և նրա մեջ ստվերի պես հայտնվում է Պոլանան:

Հորդուբալը նստում է սնդուկի վրա, ձեռքերով հենվում ծնկներին ու հայացքը հառում գետնին:

— Մանյան վերադարձել է, — ասում է նա:

Պոլանան՝ ոչ մի բառ, միայն ավելի արագ է շնչում:

— Այստեղ դուրս էին տալիս... — մոմնում է Յուրայը: — Քո և բատրակի մասին: Դրա համար էլ արձակեցի: — Հորդուբալը գայրացած խորդում է: — Բայց այնուամենայնիվ սատանան վերադարձել է: Պոլանա, չի կարելի այդպես թողնել:

— Ինչո՞ւ, — դուրս է թռչում Պոլանայի կրծքից: — Հիմար խոսքերի պատճառով:

Հորդուբալը լուրջ գլխով է անում:

— Այո, Պոլանա, հիմար խոսքերի պատճառով: Ախր մենք ապրում ենք մարդկանց մեջ. Շտեպանը տղամարդ է, թող ինքն էլ իր պատիվը պաշտպանի: Իսկ դու... Է՛ի, Պոլանա, ախր ինչքան չլինի, ես քո ամուսինն եմ. գոնե մարդկանց աչքում: Այդպես է:

Պոլանան լուռ հենվում է դռան դրանդիին. ոտքերը չեն ենթարկվում նրան:

— Տեսնում ես, — կամացուկ ասում է Հորդուբալը, — տեսնում ես, Հաֆյան վարժվել է Շտեպանին: Նա էլ կապվել է երեխայի հետ: Հետո էլ ձիերը՝ նրանք Մանյայի կարիքն են գգում: Չնայած նա նրանց հետ խիստ է վարվում, բայց անասունները կարոտում են նրան... Յուրայը բարձրացնում է աչքերը: — Պոլանա, ինչ կասես, Հաֆյային չնշանե՞նք Շտեպանի հետ:

Պոլանան ցնցվում է:

— Մի՞թե կարելի է, — վախեցած դուրս է թռչում նրա կրծքից:

— Ճիշտ է, Հաֆյան դեռ փոքր է, — բարձրաձայն խորհրդածում է Հորդուբալը: — Բայց ախր նշանե՛լ՝ հո չի նշանակում տալ: Պոլանա, հին ժամանակներում նույնիսկ ծծկեր երեխաներին էին նշանում:

— Բայց ախր... նա տասնհինգ տարով փոքր է նրանից, — առարկում է Պոլանան:

Յուրայը համաձայնությամբ գլխով է անում:

— Ինչպես և դու, աղավնյակս: Պատահում է: Իսկ այնպես Մանյան չի կարող մնալ մեզ մոտ: Նա օտար մարդ է: Ուրիշ բան՝ Հաֆյայի նշանածը: Այդ ժամանակ նա ընտանիքում յուրային է, կաշխատի տուն-տեղ դնել կնոջ համար...

Պոլանան սկսում է գլխի ընկնել:

— Այն ժամանակ կմնա՞... Նրա ձայնը ոնց որ ձգված լար լինի:

— Կմնա: Դե իհարկե, ինչու չմնա: Յուրահիների մոտ է, հարազատների: Արդեն ոչ թե օտար է, այլ փեսա: Եվ մարդկանց բերանը կփակենք: Կտեսնեն, որ... որ հիմարություններ են դուրս տվել: Քո խաթեր համար, Պոլանա: Իսկ հետո... դե, ինձ թվում է, որ նա սիրում է Հաֆյային ու ձիերից էլ լավ է գլուխ հանում: Ճիշտ է, մի երևելի աշխատող չի, բայց ոչինչ:

Պոլանան ճակատը կնճռոտած, լարված միտք է անում:

— Քո կարծիքով, Շտեպանը կհամաձանի՞:

— Կհամաձայնի, աղավնյակս: Ես փող ունեմ, նրան էլ բաժին կհասնի: Այդ փողերից ինձ ինչ օգուտ: Իսկ Շտեպանը ազահ է, ուզում է մարգագետիններ գնել, ձիեր, ավելի շատ հողեր հարթավայրում: Աչքերը կրակ կկտրեն: Կապրի մեզ մոտ, ոնց որ դրախտում: Էլ ինչո՞ւ պիտի մտածի:

Պոլանայի դեմքը նորից անթափանց է:

— Ինչպես կուզես, Յուրայ: Միայն թե այդ մասին ես չեմ ասի նրան:

Յուրայը տեղից վեր է կենում:

— Ինքս կասեմ: Մի անհանգստանա, փաստաբանի հետ էլ կխորհրդակցեմ ամեն ինչի մասին: Հարկավոր է ինչ-որ թուղթ ստորագրել: Ամեն ինչ կկարգավորեմ:

Հորդուբայը դանդաղում է: «Գուցե Պոլանան մի բան ասի», — մտածում է նա: Բայց Պոլանան հանկարծ շտապում է.

— Պետք է ընթրիք պատրաստել:

Եվ Յուրայը, սովորականի պես, քարշ է գալիս դեպի ամբարի ետևը:

## XVII

Մանյան տիրոջը տանում է Ռիբայի՝ ծնողների հետ պայմանավորվելու: Ն-նո՛, նո՛: Է՛խ ձիեր: Գլուխները վեր պահած, նայում ես, հոգիդ փառավորվում է:

— Այդպես ուրեմն, Շտեպան, — մտախոհ հարցնում է Հորդուբայը, — ասում ես՝ մի ավագ եղբայր ունես, մի փոքր եղբայր ու ամուսնացած քո՛ւյր: Հը՛մ: Շատվոր եք... Իսկ ճի՛շտ է, որ ձեզ մոտ չորս կողմ հարթավայր է:

— Հարթավայր է, — հանույքով պատասխանում է Շտեպանը, և փայլեցնում ատամները: — Մեզ մոտ ամենից շատ գոմեշներ են պահում ու ձիեր: Գոմեշները ճահիճ են սիրում, պան:

— Ճահի՞ճ, — մտածում է Հորդուբայը: — Իսկ չի՞ կարելի այն չորացնել: Ես Ամերիկայում այդպիսի բաներ տեսել եմ:

— Ինչո՞ւ չորացնել, — ծիծաղում է Շտեպանը: — Հողն այստեղ ինչքան ուզես, պան: Իսկ ճահիճն ափսոս է, այնտեղ եղեզ է աճում, որից զամբյուղներ են գործում ձմեռը: Մեզ մոտ տախտակի փոխարեն եղեզ են օգտագործում: Մայրը գործած է, ցանկապատը, ախոռը գործած են: Մտիկ, հրեն մի եղպիսի սայլակ է գալիս:

Հարթավայրը Յուրային դուր չի գալիս. ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: Բայց ինչ արած:

— Ասում ես, հայրդ ո՞ղջ է:

— Ողջ է: Այ թե կզարմանա, որ տեսնի, թե ում եմ բերել, — աշխուժանում է Շտեպանը: — Դե հասանք, ահա և Ռիբային:

Գլխարկը ծոծրակին թեքած, մտրակը շաչեցնելով, Շտեպանը Հորդուբային բարոնի պես անց է կացնում գյուղի միջով ու մոտեցնում իրենց տանը:

Ոչ-բարձրահասակ, բարեկազմ մի երիտասարդ ընդառաջ է գալիս նրանց:

— Է՛, Դյուլա, — ձայն է տալիս Շտեպանը, — ձիերին տար ծածկի տակ, կեր տուր ու ջրի: Այստեղ, պան:



Հորդուբալը հարևանցի մի հայացք է գցում տան վրա: Ամբարը խարխլել է, խոզերը թափառում են բակում, հնդկահավերը կռթկռթում են: Դռան դրանդիի վրա ցցված է մի ահագին մախաթ:

— Պան, զամբյուղներն ահա այդ մախաթով են գործում, — բացատրում է Շտեպանը:  
— Իսկ գարնանը նոր ամբար ենք գցելու:

Շենքին կանգնած է երկարաբեղ մի ծերունի՝ ծեր Մանյան:

— Հայրիկ, Կրիվոյի իմ պանին բերել եմ ձեզ մոտ, — ոչ առանց հպարտության հայտնում է Շտեպանը: — Ուզում է ձեզ հետ խոսել:

Ծեր Մանյան հյուրին առաջնորդում է խրճիթ ու անվստահորեն սպասում, թե հետո ինչ է լինելու: Հորդուբայր արժանապատվությամբ նստում է երկար նստարանի ամենածայրին, — ախր պետք է հասկացնել, որ գործը դեռ գլուխ չի եկել, ու դիմում է Մանյային.

— Շտեպան, պատմիր, թե ինչն ինչոց է:

Շտեպանը սեպերը բանալով հայտնում է տարօրինակ նորությունը. իբրև, պանը իր միակ աղջկան, Հաֆյային, տալու է նրան, երբ նա հասակն առնի: Իսկ հիմա նա եկել է հոր հետ այդ մասին պայմանավորվելու:

Հորդուբայր գլխով է անում՝ այո, այդպես է:

Ծեր Մանյան աշխուժանում է:

— Է՛յ, Դյուրա, արադ բեր այստեղ: Ծնորի արեք, Հորդուբայ: Ո՞նց տեղ հասաք:

— Հաջողակ:

— Փառք աստծու: Իսկ բերքը ո՞նց է:

— Բերքը լավ է:

— Տնեցիները բոլորն էլ ողջ-առողջ են:

— Խոնարհաբար շնորհակալ ենք, ողջ-առողջ են:

Երբ ինչ-որ անհրաժեշտ էր՝ ասվեց վերջացավ, ծերուկ Մանյան հարցրեց.

— Նշանակում է, դուք մի՞ աղջիկ ունեք, Հորդուբայ:

— Մի աղջիկ: Աստված ուրիշը չսովեց:

Ծերուկը ծիծաղում է, աչքերով շոշափելով խոսակցին:

— Էդպես մի ասեք, Հորդուբայ, կարելի է՝ աստված մի հատ էլ տղա պարգևի: Հերկած արտը լավ բերք է տալիս:

Յուրայը շարժում է անում, ասես կամենալով ձեռքը թափ տալ:

— Անպայման տղա կունենաք, ժառանգ, — քնծիծաղում է ծերուկ Մանյան, առանց աչքը Հորդուբայից կտրելու: — Ձեր տեսքը շատ լավ է, Հորդուբայ, դեռ մի հիսուն տարի էլ տիրություն կանեք:

Հորդուբայը ծոծրակն է շոյում:

— Նայած աստված ոնց կտա: Բայց ես երկար չեմ ստիպի, որ Հաֆյան ժառանգության սպասի: Փառք աստծու, նրա համար օժիտ կճարվի:

Ծերուկ Մանյայի աչքերը վառվում են:

— Հարկավ, հարկավ, լսել եմ, լսել: Ասում են, Ամերիկայում փողը թափված է գետնի երեսին, ման արի ու հավաքիր, հա՛:

— Իհարկե, այդքան հեշտ չի, — նկատում է Հորդուբալը հառաչանքով: — Փողի հարցը պարզ է, Մանյա: Պահում ես տանը՝ գողանում են: Դնում ես բանկը՝ էլի են գողանում: Ամենից լավն է դնել տնտեսության մեջ:

— Չուտ ճշմարտություն է, — համաձայնում է ծերուկ Մանյան:

— Նայում եմ ձեզ, — խելամտորեն շարունակում է Հորդուբալը, — ձեր հողը չի կարող շատ մարդ կերակրել: Ծահիճ է ու պարապուտ: Անչափ շատ այդպիսի հող է հարկավոր, որ մի տնտեսություն կերակրի:

— Ծիշտ եք ասում, — զգուշությամբ համաձայնում է ծերուկը: — Մեզ մոտ ժառանգությունը դժվար է բաժանվում: Հրես, իմ ավագ որդի Միհալը կստանա ամբողջ տնտեսությունը, իսկ մյուս երկուսը՝ իրենց բաժինը միայն փողով:

— Ամեն մեկն ինչա՞ն, — վրա է տալիս Հորդուբալը:

Ծերուկ Մանյան աչքերն է ճպճպացնում վշտահար. «Այ թե ինչ ճարպիկն է, չի էլ թողնի մարդ ուշքի գա»:

— Ամեն մեկը երեք հազար, — մոթմոթում է նա բարկացած, աչքերը խեթելով Շտեպանի վրա:

Հորդուբալն արագ հաշվում է:

— Երեք անգամ երեք՝ ինը: Կյոր հաշվով՝ տասը: Որեմն, ամբողջ տնտեսությունը տաս հազար՝ արժի:

— Ինչպես թե՛ երեք անգամ երեք, — բարկանում է ծերուկը: — Հապա աղջի՞կս:

— Ծիշտ է, — համաձայնում է Հորդուբալը: — Կնաշանակի, ասենք, տասներեք հազար:

— Չէ, չէ, — գլուխն օրորում է ծերուկը: — Դուք այդ ինչպես, կատա՞կ եք անում, Հորդուբալ:

— Ի՞նչ կատակ, — պնդում է Հորդուբալը: — Պարզապես կուզեի իմանալ, Մանյա, թե ձեզ մոտ, հովտում, տնտեսություն ի՞նչ արժե:

Ծերուկ Մանյան շկլվել է: Շտեպանը աչքերն է չռել: Հո այդ հարուստ Հորդուբալը չի ուզում իրենց տնտեսությունը գնել:

— Մեր տնտեսության պես տնտեսությունը քսան հազարով էլ չեք կարող առնել, — անվստահորեն ասում է ծերուկը:

— Ամեն ինչով, ինչ-որ այստեղ կա-չկա՞:

Ծերուկը ծիծաղում է:

— Համա թե խորամանկ մարդ եք, Հորդուբալ: Ախր մենք այստեղ հենց միայն չորս ձի ունենք: Չէ, հինգ:

— Ես ձիերը չեմ հաշվել:

Ծերուկ Մանյան մեկեն լրջանում է:

— Իսկ դուք ինչո՞ւ եք եկել, Հորդուբալ: Տնտեսություն գնելո՞ւ, թե աղջիկ նշանելու:

Հորդուբալը կարմրատակում է:

— Տնտեսություն: Որ ես գնեմ ձեր հովտի տնտեսությունը: Այդ ճահի՞նք: Շիվեր սարքելու եղե՞գր: Շնորհակալ եմ, Մանյա, ուղղակի կասեմ: Եթե հիմա համաձայնության եկանք ու ձեր Շտեպանը նշանվեց Հաֆյայի հետ, ձեր տնտեսությունը գրեք Շտեպանի վրա, իսկ ես հարսանիքից հետո Միհային կվճարեմ իր բաժինը, Դյուլային նույնպես:

— Իսկ Մարիի՞ն, — դուրս պրծավ Շտեպանի բերանից:

— Դե, Մարիին էլ: Ուրիշ մարդ չունե՞ք: Թող Շտեպանը տնտեսությունը վարի այստեղ, Ռիբաիում:

— Իսկ Միհայն ո՞ւր գնա, — չի հասկանում ծերուկը:

— Դե, կստանա իր բաժինը, և աստված իր հետ. ուր կուզի՝ թող գնա: Չափել տղա է, ավելի մեծ հաճույքով փողը կվերցնի, քան հողը:

Ծերուկ Մանյան գլուխն է տարուբերում:

— Չէ, չէ, — մոթմոթում է նա, — այդպես չեղավ:

— Ինչո՞ւ չեղավ, — տաքացած մեջ է ընկնում Շտեպանը:

— Իսկ դու ռադ եղիր էստեղից դե շուտ, — ընդհատում է նրան ծերուկը: — Ի՞նչ ես խոսքի մեջ ընկնում:

Նեղացած փնթփնթալով, Շտեպանը դուրս է գալիս բակ:

Դյուլան, պարզ է, ֆռֆռում է ձիերի շուրջը:

— Դե ո՞նց է, Դյուլա: — Շտեպանը թփթփացնում է եղբոր ուսին:

— Լավ ձիեր են, — գիտակ մարդու տոնով ասում է տղան: — Կտա՞ս մի քիչ քշեմ:

— Դու դեռ դրան չես հասել, — ատամների միջից նետում է Շտեպանն ու գլխով անում խրճիթի կողմը: — Մեր ծերուկը...»

— Ի՞նչ:

— Է՛իս, ոչինչ: Մի գլուխ ուզում է բախտիս քար զցել:

— Ի՞նչ բախտ:

— Հե՛ջ: Ինչ ես հասկանում դու...

Բակում խաղաղ է. միայն խոզուկն է խոխոացնում, ասես խոսում է ինքն իր հետ, մեկ էլ ճահճի կողմից լավում է ջրահավի ձայնը, և գորտերը կռկռում են:

— Շտեպան, — իսկ դու կմնաս Կրիվոյո՞ւմ:

— Երևի, դեռ չեմ վճռել, — փքվում է Շտեպանը:

— Իսկ տանտիրուհի՞ն:

— Քո ի՞նչ գործն է, — ծածկամտում է ավագ եղբայրը:

Այ թե մոծակներ կան, հա՛: Ծիծեռնակները թևերը համարյա քսում են գետնին: Շտեպանը լայն հորանջում է — քիչ է մնում ծնոտը տեղից դուրս ընկնի: Հետաքրքիր է, ինչ են են անում ծերուկներն այստեղ, խրճիթում: Իրար քիթ չե՞ն կրծել:

Շտեպանը բարկությունից ու ձանձրությանից մախաթը հանում է դրանդիից ու ամբողջ ուժով մխում դռան մեջ:

— Հապա դուրս քաշի, — առաջարկում է նա Դյուլային: — Չես կարող հանել:

Դյուլան հանում է:

— Է՛հ, — վերջապես ասում է Դյուլան: — Գնամ աղջիկների մոտ, ինչու իզուր քեզ հետ ժամանակ կորցնեն:

Որոշ ժամանակ նրանք խաղում են մախաթով, խրելով այն դռան մեջ այնպես, որ տաշեղները դես ու դեն են թռչում:

Մթնում է, երկինքը հարթավայրի վրա ծածկվում է կապույտ մառախուղով: «Չգնա՛մ խրճիթ, — մտածում է Շտեպանը» — Չէ, ինադու չեմ գնա: «Ռ-ադ եղիր, — կրդավի ծերուկը, — խոսքի մեջ մի ընկիր»: Հարց է առաջ գալիս, իսկ «ամերիկացին» իր աղջկան ո՞ւմ հետ է նշանում՝ նրա՞, թե ինձ հետ: Մի՞թե ես չեմ կարող իմ շահերը պաշտպանել: Իսկ նա՝ «ռադ եղիր, հեռացիր»: Հրամանատարություն անելու կարիք չկա, — շարունակում է Շտեպանը, — ես հիմա էլ ձերը չեմ»:

Վերջապես օդուց նվաղած Հորդուբալը դուրս է գալիս խրճիթից: Երևում է, ծերունիները համաձայնության են եկել: Ծերուկ Մանյան ուղեկցում է հյուրին, նրա մեջքին թփթփացնելով: Շտեպանն արդեն կանգնած է ձիերի մոտ, երասանները ձեռքում, ինչպես իսկական ձիապան: Հորդուբալը, այդ տեսնելով, հավանությամբ գլուխն է օրորում:

— Այդպես, ուրեմն, կիրակի քաղաքում, — ձայն է տալիս ծերուկ Մանյան, և սայլակը պոկվում է տեղից: — Բարի ճանապարհ:

Շտեպանը խեթ-խեթ նայում է տիրոջն ու համառորեն լռում: Հանգիստ կաց, ինքը կպատմի:

— Հրեն մեր գետը, — մտրակով ցույց է տալիս Շտեպանը:

— Մ — մ...

— Իսկ հրեն եղեգ բարձած այն սայլը՝ այդ մեր Միհայլն է գնում: Մեզ մոտ եղեգը փոռցի համար է, փռում ենք խոտի փոխարեն:

— Այդպե՛ս: — Եվ Հորդուբալն այլևս ոչ մի խոսք:

Շտեպանը վարում է, ջանում, կաշուց դուրս է գալիս, իսկ տերը գլուխն է տմբտմբացնում միայն: Վերջապես Մանյան այլևս չի համբերում:

— Պան, ուրեմն ինչպես, ինչքա՞ն տվիք նրան:

Հորդուբալը հոնքերն է բարձրացնում:

— Ի՞նչ:

— Քանիսո՞վ համաձայնեցիք, պան:

Հորդուբալը դանդաղում է: Եվ տհաճությամբ պատասխանում.

— Հինգ-հինգ հազարով:

Շտեպանը լուռ ծանրութեթև է անում նորությունը, իսկ հետո նետում է ասամների միջից.

— Պան, ձեզ ծուղակն են գցել: Երեք էլ բավական էր:

— Մ — մ, — գռնռում է Հորդուբալը, — քո հայրը իսկը կաղնու կոճղ է որ կա:

«Է՛խ դու, — մտածում է Շտեպանը, — ունեցվածքդ բաժանում ես բոլորին, իսկ ինձ հետ այնպես ես խոսում, ասես միայն ինձ է բաժին հասնում»:

— Զեզ էլ հինգ հազար, — ավելացնում է Հորդուբալը, — տունուտեղ դնելու համար:

«Լավ, — մտածում է Շտեպանը: — Բայց ես հիմի ոնց որ նրա որդին լինեմ: Հապա աշխատավարձի բանը ո՞նց պիտի լինի: Հիմի ինձ չի կարելի իբրև բատրակի վճարել: Գոնե այն հովատակը տար ինձ: Իբրև, ծախիր ու փողը պահիր քեզ, Շտեպան, հիմի դու մեզ մոտ յուրային ես»:

— Վարիր ոնց որ հարկն է, — կարգադրում է Հորդուբալը:

— Լսում եմ, պան:

### ***XIII***

Եվ ահա բոլորը վերադառնում են քաղաքից: Գործն արված է, փաստաբանի մոտ կանոնավոր կերպով պայմանագիր է կազմված: Երկու հարյուր կրոն նստեց:

Ե՛վ այս գրեք, պարոն փաստաբան, և՛ այն չմոռանաք: Փողի գործերում գյուղացին զգույշ է, նրան չես խաբի, եղբայրս: Այ թե ինչ: Գրեք՝ Ռիբարիի տնտեսության կեսը պատկանում է Հաֆյային: Լավ, համաձայնում է փաստաբանը, կմտցնեմ նաև այդպիսի կլա-ու-գու-լա: Ահա, եղբայրներ, այդ կետն էլ կա այստեղ: Իսկ հետո բոլորն ստորագրեցին: Յուրայ Հորդուբալը երեք խաչ դրեց՝ հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո. ծերուկ Մանյան՝ երեք խաչ, իսկ Միհալ Մանյան, փնջիկավոր շյապայով, փքված, թշերն է ուռցնում ու ստորագրում լրիվ անուն ազգանունը: Նրանց հետ է նաև Մարիան, ամուսնական ազգանունը Յանովա, գլխին մետաքսե թաշկինակ, և Շտեպանը՝ ոտից գլուխ տոնական... Ուրիշ ստորագրող չկա: Ոչ, ոչ: Դյուլան մնացել է ձիերի մոտ, տարիքն էլ դեռ չի հասել: «Դե, այսպես, պարոնայք, պատրաստ է, ցանկանում եմ ձեզ ամենայն բարիք»: Երկու հարյուր նստեց, դրա փոխարեն կանոնավոր գործ է, մեջը կլա-ու-գու-լա էլ կա:

Իսկ հետո բոլորը միասին գնացին պանդոկ՝ պայմանագիրը թրջելու: Յուրայ Հորդուբալ, հիմա արդեն ուզես-չուզես, ծերուկ Մանյայի հետ պետք է անցնես «դու»-ի: Նրանք նույնիսկ փոքր-ինչ գժովեցին, ինչպես կարգն է ազգականների մոտ:

— Շտեպան, քշիր:

Շտեպանն ուրախ կլինե՞ր Հորդուբալի հետ իրեն որդու պես պահելու, բայց նրա հետ ինչ խոսես: Հորդուբալը նստել է սայլին, ձեռքերով բռնել եզրափայտից, աչքերը թաքցրել հոնքերի տակ ու համարյա չի արձագանքում: «Է՛խ, ինչ տխուր նշանդրեք է, — մտածում է Շտեպանը: — Բատրակը տիրոջը հավասար չի... Ն-նո՛»:

Ահա և աշխույժ զնգզնգոցով մտան Կրիվոյ, պայտերը զրնգացին: Յուրայ Հորդուբարը հոնքերի տակից նայում է շուրջը և հանկարծ ձեռքը թափահարում, մատները ջրիկացնում, երգում, բղավում ոնց որ բարեկենդան:

«Երևի հարբած է, — մտածում են մարդիկ, շուռ գալով նրա կողմը: — «Ամերիկացի» Հորդուբարը էդ ինչո՞ւ է տաքացել»:

Հրապարակում պատանիներ ու աղջիկներ են հավաքված, ստիպված են քայլով գնալ: Յուրայը բարձրանում է տեղից, գրկում Շտեպանի ուսերն ու բղավում փողոցով մեկ.

— Փեսայի՛ս եմ բերում, էե՛յ: Է՛խ, ա՛խ...

Շտեպանը փորձում է դեն նետել նրա ձեռքն ու ֆշշացնում է.

— Կամաց, պան:

Սակայն Հորդուբարը ուժով սեղմում է նրա ուսը, այնպես որ քիչ է մնում Մանյան ցավից տնքա:

— Լսո՞ւմ եք, — փրփրում է Յուրայը: — Փեսայիս եմ բերում: Տոնում ենք Հաֆյայիս նշանդրերը:

Շտեպանը մտրակով դադում է ձիերին, մռայլվում, կծելով արնոտում շրթունքները:

— Ուշքի եկեք, պան: Համա թե կոնծել են:

Սայրը դորդյունով թեքվում է դեպի Հորդուբարի բակը: Յուրայն արձակում է Շտեպանին և մեկեն հանդարտվում ու լրջանում:

— Ման տուր ձիերին, — չոր-չոր կարգադրում է նա: — Տեսնում ես՝ փրփուր են կտրել:

## **XIX**

Պոլանան գլուխը կորցրել է, չգիտի ինչ մտածի Յուրայի մասին: Հորդուբարը Շտեպանին քարշ տվեց պանդոկ, իբրև՝ նա արդեն բատրակ չի, այլ համարիք որդի: Հորդուբարն այլևս չի թաքնվում ամբարի ետևում, այլ քայլում է գյուղամիջով քիթը վեր տնկած, կանգնում է ու կանանց հետ տալիս-առնում: «Ահա, իբր, Հաֆյային պսակեցի, ճիշտ է, դեռ փոքր է, բայց քանի հայրը տանը չէր, վարժվել է Շտեպանին: Իսկ Շտեպանը, հարևանուհի, ուղղակի նրա համար աղոթք է անում, ոնց որ տիրամոր պատկերի առաջ: Այդպիսի երեխաները բախտավորություն են»: Հորդուբարը երկինք է հանում Շտեպանին՝ ինչ աշխատավոր է, հիանալի տնտեսատեր կդառնա, հայրը Ռիբարիում տուն ու տեղը թողնելու է նրան իբրև ժառանգություն: Ամբողջ գյուղով մեկ Հորդուբարը լեզվին է տալիս, իսկ տանը սպանվածի պես լռում: Շտեպան, այս արա ու այն, և վերջ:

Յուրայը քարշ է գալիս գյուղով մեկ ու այք ածում, թե էլի ում հետ կանգնի ու շաղակրատի: Նույնիսկ Ֆեդելեշ Հեյզային ձեռքով արեց, միայն Հերիչից երեսը մի կողմ դարձրեց: Իսկ նա պատրաստվում էր արդեն ձեռքը մեկնել: Չէ: Քանի ողջ եմ, քեզ չեմ ճանաչում. մենք խոսելու բան չունենք: Թե մտքումդ ինչ կա՝ չգիտեմ և չեմ ուզում իմանալ:

Կնանիք ծիծաղում են՝ զարմանալի նշանդրեր է: Փեսան նոթերը կիտել է, սակվել, հոտում է բոլորի վրա: Հարսը գետափին երեխաների հետ խաղ է անում, շրջագետսոր վեր է քաշել մինչև գոտին, դեռ խելքը չի հասնում՝ ինչ ասել է ամոթ: Իսկ Հորդուբայը հրապարակում ձեռքերն է թափահարում, պարծենում է ապագա փեսայով: Չնայած Պոլանան տարօրինակ կին է, բայց էլի մռայլվում է, տեսնելով, որ այդ ամբողջ խաղը մարդկանց ծիծաղն է շարժում. նա նստում է տանը ու քիթն էլ դուրս չի հանում: Էդպես բաներ, հարևանուհիներ, չասեք, թե Հորդուբայովների տանը ամեն ինչ կարգին է:

Մի՞թե Հորդուբայը չի տեսնում, որ Շտեպանը բարկանում է: Գուցե և տեսնում է, բայց խույս է տալիս նրանից: Ուսի վրայով նետում է՝ ինչ անել ու որտեղ, և ապա գնում է իր բանին: Իսկ Շտեպանը ուղեկցում է նրան այնպիսի հայացքով, ասես պատրաստ է կառչելու նրա կոկորդից:

Վերջապես Շտեպանը չդիմացավ. կանգնեց բակի մեջտեղում, սպասում է տիրոջը. աստամներն այնպես է սեղմել, որ քունքերը խաղում են: Հորդուբայն անցնում է բակի միջով:

— Շտեպան, գնալու ժամն է:

Ու շարունակում է ճամփան:

Մանյան դեմը կտրում է.

— Պան, ես ձեզ հետ խոսելիք ունեմ:

— Դե, էլի ի՞նչ կա, — խուսափում է Հորդուբայը: — Ավելի լավ է զբաղվես գործով:

Շտեպանը զայրույթից նույնիսկ հողի գույն առավ: Տարօրինակ է, ախր նա միշտ էլ թուխ է եղել:

— Դուք այդ ի՞նչ եք դուրս տալիս իմ ու Հաֆյայի մասին, — շրիկացնում է նա:

Հորդուբայը բարձրացնում է հոնքերը:

— Ինչ եմ դուրս տալի՞ս: Որ աղջկաս պսակել եմ բատրակի հետ:

Մանյան կատաղությունից ուտում է իրեն:

— Իսկ ինչո՞ւ: Իսկ ինչո՞ւ դուք... Մարդիկ ինձ ծաղրատեղ են շինել: «Կնունքը ե՞րբ ես անելու, Շտեպան»: — «Շտեպան, վազիր հարսնացուիդ մոտ, սագը վախեցրել է նրան»:

Հորդուբայը ծոծրակն է շոյում:

— Ականջ մի դիր նրանց. թող զվարճանան: Կձանձրացնի:

— Պան, դա ի՞նձ է ձանձրացրել, ինձ, — աստամների արանքից նետում է Շտեպանը: — Ես չեմ ուզում ծաղրատեղ լինել:

Հորդուբայը ծանր հառաչում է:

— Ես էլ չեմ ուզում. հենց դրա համար էլ նշանեցի ձեզ: Դե, ուրիշ ի՞նչ:

— Չեմ ուզում, — աստամներն է կրճտացնում Մանյան: — Չեմ ուզում տնկվել այստեղ իբրև խլնքոտ աղջկա փեսացու, ամբողջ գյուղի ծաղրի առարկա:

Հորդուբայը, ձեռերը դեռևս ծոծրակին, աչքերով չափում է նրան:



— Կաց, ինչպես ասացի՞ր: Չես ուզո՞ւմ:

Մանյան կատաղությունից դողում է, ուր որ է լաց կլինի:

— Չեմ ուզում, չեմ ուզում: Ինչ ուզում եք արեք, իսկ ես...

— Չես ուզո՞ւմ:

— Չեմ ուզում:

Հորդուքալը ֆսսացնում է:

— Սպասիր այստեղ:

Մանյան կանգնել է, գայրույթից խեղդվելով, — նա ամաչում է ամբողջ գյուղից: Ավելի լավ է այստեղից հեռանալ, քան...

Հորդուքալը դուրս է գալիս գոմից և ինչ-որ թուղթ պատառոտում: Պատռում է մանր կտորների ու շարտում Մանյայի երեսին: — Ահա: Դու այլևս փեսա չես: Ասա հորդ, որ ես պայմանագիրը պատռեցի: — Սպիտակ թևքով ձեռքը արագ վեր է բարձրացնում, ու ցույց տալիս դուռը: — Հեռացի՛ր:

Մանյան շնչում է արագ-արագ, աչքերը նեղանում են, ինչպես դանակի շեղբ:

— Չեմ գնա, պան:

— Կգնա՞ն: Իսկ թե խելքիդ փչի վերադառնալ, ես հրացան ունեմ:

Շտեպանը կաս-կարմիր է կտրում:

— Իսկ որ չգնամ, այն ժամանակ ի՞նչ...

Հորդուքալը կրծքով շարժվում է նրա վրա: Մանյան նահանջում է:

— Կամա՛ց, — ֆշացնում է նա:

— Չե՛ս գնա:

— Մինչև տիրուհին չհրամայի, չեմ գնա:

Հորդուքալը տնքում է, ապա ծնկով անակնկալ հարվածում Մանյայի փորին. Մանյան ցավից կուչ է գալիս, բայց այդ ժամանակ հսկայական մի ձեռք բռնում է նրա օձիքից, մյուսը՝ վարտիքից, բարձրացնում է օդի մեջ, և Շտեպանը ցանկապատի վրայով թռչում է ուղիղ եղինջների մեջ:

— Այսպես, — շունչը ետ է բերում Հորդուքալը: — Չուզեցիր դռնով դուրս գնալ, ցանկապատի վրայով կթռչես: — Եվ նա շուռ է գալիս, շոյելով կարկաժը: Տարօրինակ է. ծոծրակը մի տեսակ տաքացել է...

Հարևան ցանկապատի ետևից լսվում են քրքիջի ձայներ:

## XX

Իհարկե, Պոլանան փակվել էր մառանում ու սսկվել, ասես մեռած լիներ:

Հորդուբալը վաղ առավոտյան երեք տարեկան հովատակին ու հանգիստ, մալած ձիուն լծում է սայլին: Անհավասար զույգ: Մալածը վիատորեն տարուբերում է գլուխը, իսկ հովատակը պահում է վեր ցցած: Համա՛ թե զույգ է:

— Հաֆյա, մորդ ասա, որ ես քաղաք գնացի: Աստված հաջողի, երեկոյան դեմ կվերադառնամ:

Թող կովերը քաղցից բռնաչեն, ձիերը թակեն սմբակներով, թող խոզերն ու խոնկորները ճվաղեն: Միգուցե Պոլանայի համառությունը կոտրվի, գյուղացու սիրտը չլիմանա, դուրս գա մառանից ու զբաղվի անասուններով: Մի՞թե կարելի է բարկանալ, երբ կողքիդ աստծու արարածն է:

Մալած ձին տարուբերում է գլուխը, հովատակը բարձր է պահում: Ահա Շտեպանն էլ է գլուխը բարձր պահում: Էյ դո՛ւ, անտաշի մեկը, ինչ ես կոտած ձիուն խածում... Երևի, քանի ես տանը չեմ, Պոլանան դուրս գա մառանից, անասուններին ու հավերին կերակրի, ուրախանա նրանցով: Այ, տեսնում ես, առանց շտապելու էլ կարելի է քաղաք հասնել:

Ամենից առաջ փաստաբանի մոտ:

— Այսպես ու այսպես, պարոն, ուզում եմ, որ գրեք իմ վերջին կամքը: Ոչ ոք չգիտի, թե երբ վրա կհասնի իր մահվան ժամը: Ահա թե որն է իմ վերջին կամքը. ես ամուսնացած եմ, կնոջս անունը Պոլանա է: Ես ուզում եմ, որ ինձանից հետո ամուսնու ունեցվածքը նա ժառանգի:

— Պարոն Հորդուբալ, իսկ ի՞նչ եք կտակում նրան: Տնտեսություն՞ն, դրա՞մ, թե՞ արժեթղթեր:

Հորդուբալը աչքերն անվստահորեն շլում է նրա վրա. «Իսկ ինչո՞ւ պիտի իմանաս»:

— Գրի՛ր՝ ինչ ունեմ-չունեմ:

— Ա՛: Դե, այդ դեպքում կգրենք՝ ամբողջ շարժական և անշարժ կայքը...

Հորդուբալը գլխով է անում:

— Այդպես, այդպես, պարոն, լավ է ասված: Գրեք «Նրա սիրո և ամուսնական հավատարմության համար կտակում եմ ամբողջ շարժական ու անշարժ կայքս:

Ահա և ստորագրված է՝ հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո: Հորդուբալը դանդաղում է:

— Պարոն, իսկ չի՞ կարելի նորից Ամերիկա գնալ:

— Ո՛ւր, պարոն Հորդուբալ, Ամերիկայում չգիտեն, թե իրենց բանվորներին ինչ անեն: Հիմա ամերիկացիները ոչ ոքի չեն ընդունում իրենց մոտ:

— Հը՛մ: Այդպես: Իսկ քաղաքում որևէ ֆեկտորի չկա՞:

— Ա՛, ֆաբրիկա: Ֆաբրիկաներ կան, բայց կանգնած են, չեն աշխատում. պարոն Հորդուբալ, դժվար ժամանակներ են: — Եվ փաստաբանը հառաչում է, ասես նա էլ է ստիպված կրելու դժվար ժամանակների բեռը:

Հորդուբայր գլխով է անում: Ինչ արած, մարդիկ արդեն հարկավոր չեն: Հորդուբայր ոչ ոքի հարկավոր չի: Բայց ափսոս, կարող ձեռքերն իզուր տեղը կորչում են: Իսկ ահա գլուխները բարձր պահող ձիերին այդ ձեռքերը պետք կգան:

... Յուրայ Հորդուբայր փնտրում է էսկադրոնի հրամանատարին: Այ այնտեղ է, ասում են նրան, գորանոցներում:

— Հը, քեռի, եկել ես տղայի՞դ տեսնելու:

— Չէ, տղայիս չէ, պարոն դրագուն, ուզում եմ հովատակս ծախել:

— Այստեղ ձիեր չեն գնում, — ասում է զինվորը, իսկ ձեռքերն արդեն իրենք իրենց պարզվում են դեպի հովատակը, շոշափում ոտքերն ու վիզը: — Քարայծ է, ոչ թե ձի, ձիատեր:

Այդ պահին մոտենում է մի սպա.

— Ձի՞ ես ծախում: Դժվար բան է, ձիատեր: — Եվ գլուխն է օրորում: — Հիմա մենք ձի չենք վերցնում: Ասում եք, ձեր ձին դեռևս ամռա՞նն է կանչվել: Լավ ձի է: Իսկ վարժեցվա՞ծ է: Ի՞նչ: Չի՞ վարժեցված: Թամբի տակ է՞լ չի եղել: Ա՛խ, այդպես, ձեր բատրակը քշել է առանց լծասարքի:

Արդեն մի քանի սպաներ հավաքվեցին նրա շուրջը:

— Քեռի, իսկ կարելի՞ է հովատակին փորձել:

— Ինչո՞ւ չէ, — պատասխանում է Հորդուբայր: — Միայն թե ձին կամակոր է, պարոն:

— Թող կամակոր լինի: Տղերք, մի թամբ տվեք ու սանձ: Տեսնենք, կարո՞ղ է Տոնիկին ցած գցել:

Հորդուբայր դեռ աչքն էլ չէր թարթել, որ սպաներից մեկն արդեն ձիու մեջքին էր: Հովատակը վեր-վեր ցատկեց, ծառս եղավ ետևի ոտքերի վրա ու հեծյալին շարտեց գետնին: Վերջինս ճարակորեն ընկավ մեջքի վրա ու ծիծաղեց:

— Հապա, տղերք, որսացեք ձիուն:

Հաստիկ հրամանատարը այնպես էր քրքշում, որ նույնիսկ փորը գնում-գալիս էր:

— Դե, պարոն, ձեր ձին երևելի ձի է: Առայժմ նրան պահեք տանը, իսկ մենք զեկուցագիր կգրենք, որ գնելու թույլտվություն տան:

Հորդուբայր մթազնելով լծում է ձիուն:

— Ինչ արած, պարոն, կծախեմ գնչուին կամ մաշկահանին:

Հրամանատարը ծոծրակն է քորում:

— Լսեցեք, ախր հովատակն ափսոս է... Դուք ինչ է, անպայման ուզում եք սաղացնե՞լ սրան:

— Այո, — մռթամռթում է Հորդուբայր, — սա իմ սրտովը չի:

Դե, թողեք մեզ մոտ, — վճռում է հրամանատարը, — իսկ մենք ստացական կտանք ձեզ, որ ձին մեզ մոտ է, հետո կգրենք, թե ինչ է հասնում ձեզ դրա դիմաց: Եղա՞վ:



— Ո՛րտեղից հարևան, ո՛րտեղից: Բոլորը մտահան են արել մեզ, և հետո, ո՛ւմ համար շինեն:

Ինչ արած, մի տեղ կնստեմ կսպասեմ, մինչև մութն ընկնի: Հեռվից զնգզնգոց է լսվում՝ նախիրն է գալիս. նախրապանը շրխկացնում է մտրակը, ասես կրակում է, և ինչ-որ տեղ շունն է հաչում: Հանդում երգում են: Ի՞նչ անել: Յուրայր նստել ու ականջ է դնում, թե ճանճերն ինչպես են տզտզում: Աչքերը փակած, նա կարող է այդպես ժամերով ականջ դնել: Ախր երբեք լռություն չի լինում, միշտ էլ լսելի է կյանքի աղմուկը. մեկ տեսար բզեզ տզզաց, մեկ սկյուռը խշրտացրեց: Եվ բոժոժների խաղաղ դողանջը ամեն կողմից երկինք է բարձրանում՝ այդ հոտերն են արածում:

Հորդուբալը երեկոյան դեմ գողեգող տուն է մտնում: Հափյան ուտելու բան է բերում՝ էհ, ի՛նչ ուտելիք: Ծունը որ շուն է, նա էլ բերանը չի առնի: Ասենք միևնույն է: Պատառը կոկորդով ցած չի իջնում:

Գիշեր է: Ամբողջ գյուղը քնած է, իսկ Հորդուբալը շրջում է լապտերը ձեռքին, անում, ինչ կարող է, մաքրում է գոմը, աղբը քերում, ջուր բերում: Յուրայր կամացուկ կատարում է տղամարդկային ողջ աշխատանք, որպեսզի ոչ ոքի չարթնացնի:

... Ժամը տասնմեկն է հրես,  
Տեր աստված, պահպանիր դու մեզ:

Եվ Յուրայր կամացուկ քաշվում է գոմ:

Դե, կովեր, վաղվա համար որոշ բաներ արեցի Պոլանայի փոխարեն:

Իսկ առավոտյան նորից Եզան Դաշտը: Աշխատանք փնտրելու:

— Է՛յ, Հարչար, օգնական պետք չի՞ քեզ:

— Այդ ինչ է, բարեկամ, խելքդ թոցրե՞լ ես, թե նոր ես դուրս եկել բանտից: Հնձից հետո աշխատանք է փնտրում:

«Չանանկանաս, — մտածում է Հորդուբալը: — Քսակումս այնքան փող կա, որ կիերիքի քո կես տնտեսությունն առնելու: Կարիք չկա քիթը վեր տնկել: Եվ Յուրայր, մռայլվելով, քարշ է գալիս դեպի տուն: Իսկ ինչո՞ւ: Հենց այնպես, որպեսզի անցնի սարերով, հո օտար տեղում չի մնա:

Յուրայր նստել է անտառեզրին, Վարվարինովի հանդի մոտ: Հոտերի զանգակների ձայնը այստեղ էլ է հասնում, երևի Լեհոտսկի ավանից: Տեսնես այնտեղ, վերևի մարգագետիններում, ի՞նչ է անում Միշան...

Ներքևում առուն է, իսկ առվի ափին կանգնել է մի կին: Յուրայն աչքերը կկոցում է, որ ավելի լավ տեսնի: Հո Պոլանան չի՞: Պոլանան ինչ գործ ունի այստեղ: Ամեն մի կին էլ հեռվից նման է Պոլանային:

Ահա անտառից դուրս թռավ մի թուխ ջահել: «Չէ, դա Մանյան չի, — առկայծում է Յուրայի մտքում, — նա ինչո՞ւ պիտի այդ կողմից գա»: Թխաղեմ տղան կանգնում է կնոջ կողքին: «Տեսնես այդքան երկար ինչի՞ մասին են խոսում, — զարմանում է Հորդուբալը: — Երևի ինչ-որ աղջիկ է ու լեհոտցի կամ եզանդաշտեցի իր սիրածը: Թաքուն հանդիպում են, որ մեր տղաները չթալեն նրան»:

Իսկ այն երկուսը կանգնել ու կանգնել են: Ինչքան կուզեք՝ դունդունացեք, ես չեմ նայում: Արեգակն արդեն Մենչույի վրա է, շուտով իրիկուն կլինի, իսկ այն երկու հոգին դեռ կանգնած են ու խոսելուց չեն կշտանում: Էլ ուրիշ որտե՞ր աշխատանք փնտրել: Տեսնես, աղի հանքերում մայներ պետք չի՞: Ճիշտ է, հանքերը հեռու են, բայց ոչինչ... Իսկ այն երկուսը դեռ կանգնած են: Չէ, հանքերում կարիք չկա հարցնել, միևնույն է գործ չկա...

Նայիր, այն երկուսն արդեն չկան: Կանգնած է միայն մեկը և ասես օրորվում է... Է՛, ոչ մեկը չի օրորվում, այլ երկուսը, կարծես կռվում են: Այնքան քիչ են սեղմվել իրար, որ ասես մի մարդ լինի:

Հորդուբալի սիրտը նվաղում է: Վազել այնտեղ, ներքև: Ոչ, վազել տուն, նայել՝ Պոլանան տա՞նն է: Իհարկե, տանն է, ուրիշ որտե՞ր կարող է լինել: Տեր աստված, ի՞նչ պատահեց ոտքերիս: Ասես արճի՞ն լինեն: Հորդուբալը վեր է թռչում տեղից ու վազում: Անտառի մոտով, դաշտային կաժանով, ամբողջ թափով դեպի գյուղ: Օ՛հ, օ՛հ, կողքը ծակում է, ասես այն մախաթով, որով զամբյուղ են գործում: Հորդուբալի շունչը կտրվում է, բայց շտապում է ամբողջ ուժով: Փառք քեզ տեր, ահա և գյուղը: Հորդուբալը քայլերն ավելի է արագացնում: Օ՛հ, կողքը ոնց է ծակում: Տեր աստված, ե՛րբ կերևա տունը: Դե, մի քիչ էլ: Ահա դարպասը: Հարկավոր է ձեռքը պինդ սեղմել կողքին, այդ ժամանակ այդքան չի ցավի:

Հորդուբալը շնչակտուր վազում է դեպի դարբասը և ուժասպառ հենվում սյնար. գլուխը պտտվում է, շունչը դուրս է պրծնում սուլոցով:

Բակը դատարկ է: Երևի Պոլանան մառանում է կամ մի ուրիշ տեղ: Եվ հանկարծ Յուրային համակում է անասելի մի անտարբերություն: Միևնույնը չէ՞ որտե՞ր է նա: Ինչո՞ւ գնալ մառան, ինչ-որ բան ասել: Հորդուբալը շնչում է խզխզոցով ու, հենված սյունին, հազիվ է ոտքի վրա մնում:

Դռնակը բացվում է, և հուզված, կարմրատակած Պոլանան հանդարտ ներս է մտնում բակ: Յուրային տեսնելով, նա շփոթված կանգ է առնում ու աճապարանքով արդարանում.

— Հարևանուհու մոտից եմ գալիս: Հարևանուհու մոտից, Յուրայ, Հերպակովայի. գնացի աղջկան տեսնելու:

Յուրայն ուղղվում է հասակով մեկ, հոնքերը բարձրացնում:

— Ես քեզ չհարցրի, Պոլանա:

## **XXII**

Սովորության համաձայն Յուրայն ուզում է ուղղվել դեպի ամբարի ետևը: Բայց սիրտն այնպես է ծակում, որ գնալու ուժ չունի: Յուրայը ցույց է տալիս, իբրև թե ուզում է նստել այստեղ, դարբասի մոտի քարին, ու աչք աժել բակին:

Հանկարծ պարզվում է, որ Պոլանան ահագին գործեր ունի. նա կուտ է շաղ տալիս հավերի առաջ, ավլում է արտասանդուղը, — մի խոսքով, հասնում է ամեն տեղ:

Հերպակովան աղջիկ է բերել, — մտերմաբար հայտնում է նա:

Է՛իս, Պոլանա, ինչպե՞ս եղավ, որ դու հանկարծ այդպես զրուցասեր դարձար:

— Մ — մ, — ցրված մոմճում է Հորդուբալը:

Մթնում է: Պոլանան լայն բաց է անում դարբասը, շուտով կովերն արոտատեղից կվերադառնան:

— Հիշո՞ւմ ես, Յուրայ, — անվճռականորեն սկսում է նա, — դու ասում էիր, որ... ուզում ես էլի կովեր առնել:

— Ոչ, հարկավոր չի, — փնթփնթում է Հորդուբալը:

Կովերը գլուխներն օրորելով գնում են դեպի գոմ: Բի՛մ-բա՛մ: Յուրայը վեր է կենում տեղից: Փառք աստծու, ցավը թերևսացավ:

— Բարի գիշեր, Պոլանա, — ասում է նա:

— Դու չե՛ս ընթրելու:

— Ոչ, չեմ ընթրելու:

Պոլանան փակում է նրա ճանապարհը:

— Յուրայ, անկողինդ կզցեմ խրճիթում: Մարդիկ ի՞նչ կասեն: Տան տերը դու ես, բայց քնում ես կովերի հետ:

— Մարդկանց հանգիստ թող, — խուլ ձայնով պատասխանում է Հորդուբալը: — Շատ բան են ասում, հետո՞ ինչ:

Յուրայը հեռանում է: Պոլանան մռայլ նայում է նրա ետևից: Յուրայի մեջքը ծերունական մեջք է:

Հորդուբալը պառկում է խոտերի վրա: Կողքն այլևս չի ծակում, բայց սիրտը ծանրացած է, ցավում է: Տունը՝ խաղաղվում է մի տեսակ վարանումով: Հափյան կիսաձայն բլբլում է, ասես նրան սաստել են. իբր՝ կամաց, մի աղմկիր: Ասես տանը ծանր հիվանդ կա:

Լռություն: Տունը քնել է, քնել է ամբողջ գյուղը: Հորդուբալը հեծելով բարձրանում է խոտերի վրայից, վառում է լապտերը, գնում է աչք ածի, թե որտեղ ինչ է անհրաժեշտ կարգի բերել:

Կողքը նորից ծակում է, թող գայլի բաժին դառնա... Հարկավոր է մտուրները մաքրել ու ձիերի տակ խոտ փռել: Հարկավոր է այս, հարկավոր է այն, բայց այսօր մի տեսակ անտրամադիր է: Յուրայը նայում է հավանոցը, խոզերի ախոռը, ամբարը, սանդուղքով բարձրանում է խոտանոց՝ խոտը չվառվի: Օ՛խ, կողքը ո՛նց է ծակում: Յուրայը շրջում է բակում ու գնում պարտեզ: Հենց այնպես, մի օտար մարդ ներս չմտնի: Իսկ ո՞վ կարող է ներս մտնել: Իհարկե, ոչ ոք, ասենք, աստված գիտե: Իսկ չարդա՞խը: Ախր Պոլանան չարդախում չի քնում, հիմա այնտեղ եգիպտացորեն է դարսված: Պոլանան տեղափոխվել է մառան: Շունչը պահելով ու տնքոցը խեղդելով, Հորդուբալը չարդախի սանդուղքով վերև է բարձրանում, փորձում է բացել դուռը, բայց այն չի բացվում, ինչ-որ բան խանգարում է. լավում է, թե ինչպես մի բան խշխշում է ու ցած սորում: Երևի, եգիպտացորենը փվել է ու սեղմել դուռը: Ուրեմն, չարդախում էլ ոչ ոք չկա: Եվ ո՞վ կարող է թաքնվել այնտեղ: Այ քեզ հիմարությունն:

Հորդուբալը կանգնել է բակի մեջտեղում, ինչպես սև պուն, ու շփոթված ծոծրակն է քորում: Ինչո՞ւ եմ շրջում այստեղ, ինչո՞ւ, — զարմանում է նա: — Քանի տարի այդ

Մանյան ապրել է այստեղ ու բակը չի հսկել, չի թափառել լապտերը ձեռքին: Ուրեմն, ինչի՞ համար է հիմա: Բուժ անտարբերությունը համակում է Հորդուբային: Եթե ես արդեն պառկած լինեի գոմում ու լսեի օտար քայլերի ձայն, կվերկենայի՞ տեղիցս, թե ոչ: Ոչ, չէի վեր կենա: Չայն կտայի. «Ո՞վ կա այդտեղ»: Չէ: Միայն շունչս կպահեի: Է՛իս, աստված իմ, դե մի՞թե մեծ մարդկանց կարող ես հետևել: Այո, ահա ես հետևեցի, մեղա քեզ, տեր, բայց ձևացնում եմ, թե աշխատում եմ մթության մեջ: Մի՞թե ուրիշի սրտին կարող ես հսկել: Հիմար ես դու, հիմար:

Ինչ արած, թող Մանյան վերադառնա: Ամեն ինչ միևնույնն է հիմա: Միևնույնն է: Ցավը եկել-անցել է: Կտրած գլխի մազերի համար արտասուք չեն թափում:

Հերպակովների երեխան լաց եղավ: Այ, տեսնում ես, գուցե և ճիշտ է, որ Պոլանան գնացել է երեխային տեսնելու: Այդտեղ ի՞նչ մի առանձին բան կա: Չէ՞ որ կնանիք երեխաների համար հոգի են տալիս: Հիմա, երևի, Հերպակովան ծիծ է տալիս նրան: Պոլանա, հիշո՞ւմ ես, թե ոնց էիր կերակրում Հաֆյային. ուսդ շարժում էիր, և կուրծքը նորից ծածկվում էր շապիկի տակ: Տասնմեկ տարի է անցել: Իսկ ես գնացի Ամերիկա... Հիմա՛ր, հիմա՛ր:

Հորդուբայը նայում է աստղերին: Աստված իմ, ինչքա՛ն շատ են: Երևի, այս տարիների ընթացքում ավելացել են: Առաջ այսքան շատ չէին... Ուղղակի մարդու սարսուռ է պատում... Միևնույնն է, միևնույնն է, ամեն ինչ թափվում է իրար ետևից, ինչպես կեղև: Եղավ Ամերիկա, եղավ վերադարձ: Եղան Հերիչ, Ֆեդելեշ, Մանյա — շատ-շատ բան եղավ: Իսկ հիմա ոչինչ չկա: Միևնունն է: Փառք աստծու, սիրտը թեթևացավ:

Տրո՛ւ-տո՛ւ-տո՛ւ, — փոխհարում է հեռվում գիշերապահը: Իսկ աստղերն այնքան շատ են, որ մարդու մարմինը սրսփում է...

Բարի գիշեր, Պոլանա, բարի գիշեր, բարի գիշեր:

## **XXIII**

Վաղ առավոտ է, դեռևս ոչ ոք չի արթնացել, իսկ Յուրայն արդեն դուրս եկավ գյուղից ու քայլում է դեպի սարերը: Տավարած Միշայի մոտ: Ինչո՞ւ: Հենց այնպես, մարդու հետ զրուցելու:

Սարերը դեռ չեն երևում, օդում մշուշ է կախվել: Յուրայը փոքր-ինչ մրսում է, բայց կողքի ցավն անցել է: Միայն շնչելն է դժվար, երևի մշուշից: Յուրայն անցնում է իր նախկին արտի կողքով ու կանգ առնում, որ շունչը ետ բերի: Արտը արդեն վարել են — ահա քեզ և միայն քարեր: Երևում է, չարչարանքն արժե:

Հորդուբայը ծանր շնչելով շարունակում է ճամփան: Մշուշը վեր բարձրացավ ու անցավ անտառի վրայով: Ծուտով աշուն կլինի: Հորդուբայը բարձրանում է սարերը, ձեռքն կրծքին սեղմած: Այ, նորից է ծակում. հիմա ծակում է անընդհատ՝ վերև ես գնում, թե ներքև: Մի փոքր բարձրում նորից մառախուղ է: Բայց դա արդեն մառախուղ չի, այլ ամպեր, հոտոտելով կարելի է զգալ, թե ինչպես են հագեցած խոնավությամբ: Չգույշ, գլուխդ չթրխկացնես նրանց: Ահա ճամփան անցավ լեռնաշղթայի վրայով. այժմ Հորդուբայը



քայլում է ամպերի մեջ. երեք քայլի վրա ոչինչ չի երևում: Ստիպված ես շոշափելով անցնել թանձր մառախուղի միջով, առանց իմանալու, թե որտեղ ես: Եվ Հորդուբալը, խռպոտ շնչելով, դանդաղ, դժվարությամբ բարձրանում է դեպի ամպերը:

Սկսեց սառը, մանրամաղ անձրև գալ: Վերևում տավարած Միշան պարկը գցել էր գլխին ու, մտրակը շրխկացնելով, եզներին դեպի հողիկն էր քշում: Այդ ի՞նչ է նրա կողքին: Հնարավոր չի ջոկել՝ գազան է, թուփ է, թե քար: Ա՛, իսկոք շնիկն է, Չուվայը: Նա վազվզում է նախրի շուրջը ու եզներին քշում: Մառախուղի միջից լսվում է զանգակների ձայնը:

Միշան նստել է տավարածի տնակի շենքին ու նայում է մշուշի մեջ: Մառախուղը երբեմն նոսրանում է, և այն ժամանակ երևում է, թե եզներն ինչպես են իրար սեղմվում: Հետո նորից ամեն ինչ թաղվում է ամպերի մեջ, լսվում է միայն անձրևի խշշոցը: Հիմա ժամը քանի՞սը կլինի: Երևի, կեսօրին մոտ է: Չուվայը վեր է թռչում տեղից, ականջները սրում ու կամացուկ վնգստում է: Մշուշի միջից մի սովեր է հայտնվում:

— Դու այստե՞ղ ես, Միշա, — կանչում է խռպոտ մի ձայն:

— Էստեղ եմ:

— Դե, փառք աստո՞ծու:

Հորդուբալն է: Նա ոտից գլուխ ջուր է կտրել, զընգր-զընգր դողում է: Գլխարկից ջրի առվակներ են հոսում:

— Ի՞նչ ես թրև գալիս անձրևի տակ, — բարկացած հարցնում է Միշան:

— Առավոտյան.... անձրև չկար, — խզգացնում է Հորդուբալը: — Գիշերը պարզ էր: Լավ է, որ անձրև է... հողին անձրև է հարկավոր:

Միշան մտքերի մեջ աչքերն է թարթում:

— Կաց, կրակ ունեմ:

Հորդուբալը, խոտերի վրա նստած, նայում է կրակին: Փայտերը ճրճթում են, ծխում: Տաքությունը տարածվում է Յուրայի մարմնով, դեռ Միշան էլ պարկը գցել է մեջքին: Ո՛ւՖ, նույնիսկ շոգ է: Ինչպես մայնում: Յուրայը կափկափում է ատամներով ու շոյում թաց, զարշահոտ Չուվային: Է-է, ինչ ասել կուզի, ես ինքս էլ հոտում եմ, ինչպես թրջված շուն:

— Միշա, — կակազելով, ասում է Յուրայը, — իսկ ինչպե՞ս է... այնտեղ... անտառ հատելու գործը:

Միշան կաթասայիկով ջուր է եռացնում ու ինչ-որ խոտեր գցում մեջը:

— Ես գիտեմ, դու քեզ լավ չես զգում, — մոթմոթում է նա, — և ի՞նչ ես թրև գալիս անձրևի տակ, խելառ...

— Մեզ մոտ, մայնում, բովանցք կար, — շտապ-շտապ պատմում է Յուրայը: — Այնտեղ միշտ ջուր էր կաթում, Միշա: Տը՛կ-տը՛կ-տը՛կ, ոնց որ ժամացույցը տկտկա... Գիտե՛ս, Հերպակովան երեխա է ունեցել: Դոլանան գնացել էր տեսնելու... Ոչ մի տեղ աշխատանք չկա, Միշա, մարդիկ ոչ ոքի պետք չեն:

— Մի գլուխ նորերն են ծնվում, — փնթփնթում է Միշան:

— Հարկավոր է, որ ծնվեն, — մրսածությունից դողում է Հորդուբալը, — հենց դրա համար էլ աշխարհում կանայք կան: Դու ամուսնացած չես, Միշա, դրա համար էլ չգիտես, ոչինչ չգիտես: Ինչ կարող ես ասել, քանի որ ամուսնացած չես: Հարկավոր է ամեն ինչի մասին մտածել, եղբայր: Հարկավոր է, որ գրված լինի՝ «նրա սիրո ու ամուսնական հավատարմության համար»: Թե չէ աստված գիտե, մարդիկ ինչեր կարող են հնարել: Է՛խ, ափսոս երեք հազար դոլարս գողացան: Խանութի պես կապրեր նա, հը՞: Ճիշտ չի՞: Դե ասա, Միշա:

— Ճիշտ է, — փնթփնթում է Միշան, կրակը բորբոքելով:

— Այ տեսնում ես: Իսկ ինձ ասում են՝ խելառ: Նախանձում են, որ այդպիսի կին ունեն: Գլուխը բարձր է պահում, ինչպես աղայի նժույգը: Այ թե ինչ մարդիկ են, բոլորն աշխատում են մարդուն վիրավորել: Նա ընդամենը գնացել է հարևանուհու մոտ՝ երեխային տեսնելու, իսկ մարդիկ չգիտես ինչեր են դուրս տալիս: Միշա, հասկացրու նրանց, որ ես ինքս իմ աչքով տեսա, թե նա ինչպես դուրս եկավ հարևանուհու մոտից:

Միշան լրջությամբ գլխով է անում:

— Կասեմ, ամեն բան կասեմ:

Յուրայը շունչը ետ է բերում:

— Ես հենց դրա համար էլ եկել եմ, իմացա՞ր: Դու ամուսնացած չես, հարկ չունես ինձանից վրեժ առնելու: Նրանք ինձ չեն հավատա: Կասե՛ս նրանց, Միշա: Թող հասկանան, որ ստիպված է եղել բատրակ վարձել, քանի որ տան տերը այստեղ չի եղել: Պոլանան փակվել է չարդախում, կեռը այնպիսի ամուր կեռ է, ինքս եմ տեսել... Իսկ Հերիչն ամեն տեսակ ցնդաբանություն է դուրս տալիս: Իբրև, ութ տարի է և նման բաներ: Ասա, ո՞վ նրան ավելի լավ գիտի՝ Հերի՞չը, թե ես: Ուսն առաջ է տալիս, և կուրծքը նորից շապիկի տակ է... Այն երիտասարդը, որ ներքևում էր, գետափին, մեր գլուղացի չէր, Լեհոտսկից էր, ես ինքս տեսա: Նա այն կողմից եկավ: Իսկ մարդիկ իսկույն սկսում են բամբասել:

Միշան գլուխն է տմբտմբացնում:

— Առ խմիր, սա օգնում է:

Յուրայը կուլ է տալիս տաք բուսաջուրն ու նայում կրակին:

— Միշա, այստեղ քեզ մոտ լավ է: Դու ամեն ինչ պատմիր նրանց, քեզ կհավատան: Ասում են, դու ամեն ինչ գիտես: Ասա, որ նա լավ, հավատարիմ կին է եղել... — Ծուխը կսկծացնում է աչքերը, Հորդուբալի աչքերում արցունքներ են երևում. քիթը բոլորովին սրվել է: — Ե՛ս, միայն ե՛ս գիտեմ, թե նա ինչպիսի կին է: Է՛խ, Միշա: Հենց թեկուզ այս րոպեին նորից Ամերիկա կգնայի, որ նրա համար փող ետ գցեմ...

— Միանգամից խմիր, — ասում է Միշան: — Իսկույն կտաքանաս:

Հորդուբալի ճակատը ծածկվում է առատ քրտինքով: Հանելի թուլությունը համակում է նրան:

— Միշա, ես կարող էի շատ բան պատմել Ամերիկայի մասին, — ասում է նա: — Շատ բան մոռացել եմ, բայց սպասիր, կհիշեմ...

Միշան անշտապ փայտ է գցում խառույկի մեջ, Հորդուբալը շնչում է ընդհատ-ընդհատ ու ինչ-որ մոթմոթում քնի միջից: Անձրևը դադարեց, և միայն եղևնու վրայից ծանր

կաթիլներն ընկնում էին հողիկի տանիքին: Իսկ մշուշը գնալով թանձրանում է: Մերթ ընդ մերթ որևէ եզ բառաչում է, և Չուվայը վագում է այք ածելու նախրին:

Միշան իր մեջքին զգում է Հորդուբայի լարված հայացքը: Յուրայն արդեն մի քանի րոպե է՝ քնած չի ու փոս ընկած աչքերով նայում է Միշային:

— Միշա, — խզխզում է Հորդուբայը: — Մարդն կարո՞ղ է ինքն իրեն վերջ տալ:

— Ի՞նչ:

— Մարդ կարո՞ղ է իրեն վերջ տալ:

— Ինչի՞ համար:

— Որ էլ չմտածի: Այնպիսի մտքեր կան, Միշա, որ... դե, դու ո՞րտեղից հասկանաս... Մտածում ես... օրինակ, որ նա սուտ է ասում... որ հարևանուհու մոտ չի եղել... Յուրայի շրթունքները դողում են: — Դրանցից ո՞նց ազատվես, Միշա:

Միշան մտասույզ լռում է:

— Դժվար բան է: Ավելի լավ է մտածես մինչև վերջ:

— Իսկ եթե վերջում... միայն վե՛րջն է: Մարդ կարո՞ղ է վերջ տալ իրեն:

— Հարկավոր չի, — դանդաղորեն ասում է Միշան: — Ինչի՞ համար: Այնպես էլ կմեռնես:

— Իսկ շուտո՞վ:

— Թե որ կուզես՝ շուտով:

Միշան վեր է կենում ու դուրս գնում հողիկից:

— Հիմի քնիր, — ասում է նա, դռների մեջ շուռ գալով, ու կորչում մառախուղի մեջ:

Հորդուբայը փորձում է տեղից վեր կենալ: Փառք ասածու, արդեն իրեն լավ է զգում, միայն գլուխն ինչ-որ չի կարողանում պահել ու մարմինն էլ ոնց որ քուրջերից լինի՝ թույլ է, ջլատ:

Յուրայը դուրս է գալիս հողիկից: Չորս կողմ մշուշ է, ոչինչ չի երևում, լսելի է միայն զանգակների ծնգոցը. հազարավոր եզներ արածում են ամպերում ու զնգացնում զանգակները: Յուրայը քարշ է գալիս չգիտես ուր: «Հարկավոր է տուն վերադառնալ», — մտածում է նա:

Գնում է Յուրայը, ուր այքը կկտրի: Երբեմն նրան թվում է, թե սարնիվար՝ ասես գործում է անդունդ: Երբեմն էլ ասես սարնիվեր, — և այդ այնպես դժվար է, շունչը կտրվում է: Է, միևնույնն է, միայն թե տուն հասնի: Եվ Յուրայ Հորդուբայը թաղվում է մառախուղի մեջ:

## XXIV

Հաֆյան հորը գտավ գոմում: Կովերն անհանգիստ բառաչում էին, և Պոլանան աղջկան ուղարկեց իմանալու, թե ինչ է պատահել: Հորդուբայը պառկել էր խոտերի վրա ու խռխռում էր:

Երբ Պոլանան նրան խրճիթ էր տանում, Հորդուբալն արդեն չէր դիմադրում, միայն հոնքերն էր բարձրացրել մի տեսակ ճիգով ու տարակուսանքով: Կինը նրա շորերը հանեց ու դրեց անկողին:

— Յուրայ, ի՞նչ կուտես:

— Ոչինչ, — մոմռաց նա ու նորից ընկավ ինքնամոռացության մեջ: Ինչ-որ երագներ էր տեսնում, ափսոս, անժամանակ արթնացրին: Բայց այդ ինչ էր: Չէ, Հերիչը Ամերիկայում չի եղել... Էլի ամեն ինչ խառնվեց, պետք է նորից սկսել: Է՛իս, կուրծքը ո՞նց է ճնշում: Երևի, Չուվայ շնիկն է պառկել կրծքիս: Յուրայն անհանգիստ շոյում է մազոտ կուրծքը: Քնիր, քնիր, բրդոտ, սիրտդ ինչպե՛ս է զարկում: Ա՛իս, համա՛ թե ծանր ես, սրիկա:

Հորդուբալը երկար չնիրհեց, իսկ երբ արթնացավ, տեսավ Պոլանան կանգնել է դռների մեջ ու սևեռուն հայացքով նայում է նրան:

— Ո՞նց ես:

— Լավ եմ, աղավնյակս: — Նա սիրտ չի անում խոսել, վախենալով, որ հարազատ տունը կչքանա, և ինքը նորից կհայտնվի Ռոնսթոնի ծակուռում: Այո, այո, այստեղ ասես քո սեփական տանն ես՝ նախշուն սնդուկ, կաղնեթայտե սեղան, աթոռներ: Հորդուբալի սիրտն ավելի ուժգին է բարախում: Վերջապես տանն եմ: Աստված իմ, ի՛նչ երկար ճանապարհ էր՝ տասնչորս օր լուրերդեկում, հետո էլ գնացքում: Մարմինն ասես ջարդված լինի: Միայն չպետք է շարժվել, թե չէ ամեն ինչ նորից կչքանա: Ավելի լավ է փակել աչքերն ու մտածել՝ ահա ես այստեղ եմ, տանը:

Նորից ամեն ինչ խառնվեց. մայներները Ջոնսթոնում, Հարչարը, ծեծկոտուքը, — այն ժամանակ Հորդուբալին լավ տուր տվին: Յուրայը վագում է բովանցքով, խույս է տալիս, հանքահորում թռչում է սանդուղքի վրա, մազլցում վերև: Իսկ վերևից սրընթաց կերպով ցած է ընկնում ամբարձիչը. ահա ուր որ է կջնջիս, էն աստված, կջնջիս: Հորդուբալն արթնանում է սեփական տնքոցից:

Չէ, պետք չի քնել, այսպես ավելի հանգիստ է: Հորդուբալն աչքերը չած դիտում է սենյակի կահկարասին: Այսպես ավելի հանգիստ է: Հորդուբալը մատով գծագրում է օդի մեջ ու Միշային պատմում Ամերիկայի մասին:

Ես, եղբայր, միշտ էլ գնում էի ամենածանր աշխատանքին: Բավական է ձայն տային՝ «Այո, Հորդուբալ, ու ես գնում էի: Մի անգամ բովանցքում փլուզում եղավ, նույնիսկ հյուսները հրաժարվեցին ցած իջնել: Այդ օրը ես քսան դոլար վաստակեցի: Ինքը ինժեները ձեռքս սեղմեց: Այո, Միշա, հենց այդպես, վերցրեց ու սեղմեց...

Հորդուբալին թվում է, թե իջնում է հանքահոր: Ծարունակ ներքև ու ներքև: Հաստիկ հրեուհին և ինչ-որ ծերուկ խստությամբ նրան են նայում: «181 — 182 — 183», — հաշվում է Հորդուբալն ու բղավում. «Ստո՛ւպ, ստո՛ւպ»: Այլևս տեղ չկա: Հանքահորն այստեղ վերջանում է: Սակայն վանդակը պանում է ներքև ու ներքև, անտանելի շոգ է, ուժ չկա շնչելու: Նրանք ո՛րն են գնում: Երևում է, ուղղակի դժոխք: Յուրայը բերանով որսում է օդն ու արթնանում: Լուսանում է: Պոլանան կանգնած է դռների մեջ ու լարված դիտում է ամուսնուն:

— Ես արդեն լավ եմ, — շնջում է Հորդուբալը, և աչքերում քնքշություն է երևում: — Մի բարկանա, Պոլանա, ես շուտով վեր կկենամ:

— Պառկիր, — ասում է Պոլանան ու մոտենում նրան: — Ո՞րտեղդ է ցավում:

— Ոչ մի տեղս: Ամերիկայում էլ է ինձ հետ այսպիսի բան պատահել: Բժիշկն ասում էր՝ ֆլյու:<sup>[35]</sup> Ֆլյու: Երկու օրից կառողջանամ, ոնց որ ձուկ: Վաղը վեր կկենամ, աղավնյակս: Լավ հոգս պատճառեցի քեզ, հը՞:

— Բան ուզո՞ւմ ես:

Հորդուբալը գլուխն է շարժում:

— Այսօր իսկապես, թեթևացել եմ: Այ, լավ կլիներ՝ մի բաժակ ջուր... Ասենք, ես ինքս էլ կարող եմ...

— Հիմի կրե՞րեմ:

Պոլանան գնում է: Հորդուբալն ուղղում է մեջքի տակի բարձերը, շապիկի փեշերն իրար է բերում կրծքի վրա: Թե չէ՝ Պոլանան կտեսնի այսպիսի խրտվիլակին, մտածում է նա: Լավ կլիներ լվացվել և սափրել այս խոզի մազը: Երևի, Պոլանան ուր որ է կգա, ու մինչդեռ ես ջուր կխմեմ, կնստի մահճակալիս վրա: Յուրայր ետ է քաշվում, որպեսզի մահճակալին տեղ ազատի, ու սպասում է: Երևում է, մոռացավ ինձ, մտածում է նա: Գոնե Շտեպանը վերադառնար: Հենց որ հիմա գա, կասեմ. «Պոլանա, ինչ ես ասում, միգուցե Մանյային ետ կանչենք, հ ը՞»:

Ներս է մտնում Հաֆյան՝ ջրի բաժակը ձեռքին: Աղջիկը բերում է այն զգուշությամբ, լարվածությունից փոքրիկ լեզուն դուրս գցած:

— Շնորհակալություն, Հաֆյա, խելոք աղջիկս, — հառաչում է Հորդուբալը: — Քեռի Շտեպանն այստե՞ղ է:

— Չէ:

— Իսկ մայրիկն ի՞նչ է անում:

— Կանգնել է բակում:

Հորդուբալը չզիտի՝ ինչ ասի, նույնիսկ ջուրը մոռացավ:

— Դե, գնա, — մոմռում է նա, և Հաֆյան թափով դուրս է նետվում: Յուրայր հանգիստ պառկել ու ականջ է դնում: Ձիերն ախոռում սմբակներով դոփում են: Տեսնես, Պոլանան, ջուր տվե՞ց նրանց: Չէ, հիմա, երևի, խոզերին է ջրում՝ տես, ի՞նչ ճղճող են գցել: Հապա ինչպես, օրվա ընթացքում տանտիրուհին լավ հոգնում է: Հարկ կլինի Շտեպանին վերադարձնել... Կգնամ Ռիբարի, կասեմ. «Է՛յ դու, թամբալ, գնա ձիերիդ մոտ: Պոլանան մենակ գլուխ չի հանում: Հենց երեկոյան էլ կգնամ», — մտածում է Յուրայր: Նրա աչքերը մթնում են, և ամեն ինչ չքանում է:

Հաֆյան մտնում է սենյակ, դռան մոտ կուչուձիգ անում ու դուրս է փախչում: «Քնած է», — շնջում է նա մորը: Պոլանան լռում է, լարված որոնալով իր մտքերը:

Կեսօրին նորից ոտքի մատների վրա խրճիչ է մտնում Հաֆյան: Հորդուբալը պառկած է, ձեռքերը գլխի տակ, ու նայում է առաստաղին:

— Մայրիկը պատվիրեց հարցնել՝ բան հարկավոր չի՞, — վրա է տալիս նա:

— Պոլանա, — ասում է Յուրայը, — ես կարծում եմ, հարկավոր է Մանյային վերադարձնել:

Հաֆյան տարակուսանքով բացում է բերանը:

— Իսկ ո՞նց եք, թեթևացա՞վ:

— Շնորհակալ եմ, թեթևացավ:

Հաֆյան դուրս է վազում:

— Ասում է, որ լավացել է, — գեկուցում է նա Պոլանային:

— Բոլորովի՞ն:

— Չեմ իմանում:

Կեսօրից հետո բոլորովին խաղաղվում է: Հաֆյան չգիտի՝ ինչով զբաղվի: Մայրը թույլ չի տվել վազվզելու՝ իբր, նստիր տանը, միգուցե տան տերը մի բան կխնդրի: Հաֆյան արտասանդուղքում տիկնիկ է խաղում, որ Շտեպանն է շինել նրա համար:

— Ոչ մի տեղ չգնաս, — պատվիրում է նա տիկնիկին: — Տան տերը պառկած է, իսկ դու բակը հսկիր: Ու մի սոզա, թե չէ ծեծ կուտես:

Եվ Հաֆյան ոտքի մատների վրա գնում է տեսնի, թե խրճիթում ի՞նչ կա: Հորդուբալը նստել է մահճակալին և գլուխն է օրորում:

— Հաֆյա, մայրիկն ի՞նչ է անում:

— Տեղ գնաց:

Հորդուբալը գլխով է անում:

— Ասա նրան, որ Շտեպանին ետ բերի: Իսկ հովատակին կարող է ետ ստանալ: Ուզո՞ւմ ես ճագարներ ունենալ:

— Ուզում եմ:

— Ես քեզ համար ճագարների այնպիսի վանդակ կպատրաստեմ, ինչպես մայներ Ենսենն ուներ: Է՛իս, Պոլանա, Ամերիկայում շատ բաներ կան: Ամեն ինչ կպահենք: — Հորդուբալը գլուխն է օրորում: — Հաֆյա, ուզո՞ւմ ես, քեզ տանեմ վերև, մարգագետինները: Այնտեղ մի այնպիսի զարմանալի գերանակույտ կա, նույնիսկ Միշան չգիտի, թե ինչպես է եղել: Գնա, գնա, մայրիկին ասա, որ Շտեպանը վերադառնում է:

Հորդուբալն ինչ-որ բավարարվածությամբ է զգում: Նա պառկում է ու աչքերը փակում: Մութն է, ոնց որ բովանցքում: Դո՛ւմ-դո՛ւմ, այդ ինչ-որ տեղ քլունգով հարվածում են քարին... Ահա Շտեպանը քնձիծաղում է՝ իբր, քարեր են միայն: Այո, քարեր են: Հիմարի գլուխ, իսկ դու գիտե՞ս, ինչ ասել է աշխատանք: Տղամարդու մասին դատում են աշխատանքով: Այդ ի՞նչ փայտեր են քո բակում, աղավնյակա: Հարթ ու հավասար ծղաններ: Իսկ ես մի ժամանակ կոշտուկոշտ քոթուկներ էի ճղում: Այ, դա տղամարդու գո՛րծ է՝ քոթուկներ ճղել: Կամ հողի տակից քարեր հանել:

Հորդուբալը գոհ է: Պոլանա, ես իմ կյանքում քիչ չեմ աշխատել, աստված վկա. քիչ չեմ աշխատել: Այդ լավ է: Հորդուբալը հանգիստ քնում է, ձեռքերը ծալելով կրծքին:

Նա աչքերը բացեց արդեն երեկոյան դեմ, ծանր աղջամուղջն արթնացրեց նրան:

— Հաֆյա, — ձայն տվեց Հորդուբալը, — Հաֆյա, որտե՞ղ է Պոլանան:

Լռությամբ: Հեռվից գնացոց է լսվում, նախիրները վերադառնում են դաշտից: Հորդուբալը մահնակալից վեր է թռչում ու վարտիքը քաշում ոտքերը: Հարկավոր է Կովերի առաջ դարբասը բացել: Յուրայի գլուխը պատվում է, — երևում է՝ երկար պառկելուց: Նա շոշափելով դուրս է գալիս բակ ու դարբասը բացում: Գլուխը խշշում է, ծանր է շնչում, սակայն փառք աստծու, հաշողվեց մաքուր օդ դուրս գալ: Չանգերի ձայնը մոտենում է, ուժեղանում, տարածվում, ինչպես գետ: Ամեն ինչ լի է այդ զանգերի գնացոցով: Յուրայն ուզում է ծնկի գալ, բոժոժների խողանջը նրա համար հնչում է իբրև չլաված տոնական մի զանգահարություն: Գլուխներն օրորելով ծանրումենք, լիքը կուրծերով բակ են մտնում երկու կով:

Յուրայը հենվում է դարբասին: Նա իրեն լավ է զգում, հանգիստ, ինչպես աղոթելիս:

Վազելով բակ է մտնում Պոլանան, արագ քայլից կարմրատակած:

— Յուրայ, արդեն վե՞ր ես կացել, — բացականչում է Պոլանան: — Իսկ ո՞ւր է Հաֆյան:

— Այո, վեր եմ կացել, — մեղավոր տոնով արդարանում է Հորդուբալը: — Ես ինձ արդեն լավ եմ զգում:

— Գնա, գնա պառկիր, — պնդում է Պոլանան: — Էզուց բոլորովին կլավանաս:

— Ինչպես ուզում ես, աղավնյակս, ինչպես ուզում ես, — հնազանդությամբ ու քաղցրությամբ պատասխանում է Հորդուբալը: — Ես քեզ չեմ խանգարի:

Նա փակում է դարբասը, սողնակը զգում ու դանդաղ գնում դեպի խրճիթը:

Երբ նրան ընթրիք են բերում, նա արդեն քնած է:

## ***Երկրորդ մաս***

### ***I***

Յուրայ Հորդուբալին սպանե՞լ են:

Տանուտեր Հերիչը շապիկն շտապով քաշում է գլխին:

— Տղա, վազիր ոստիկանության ետևից, անապարանքով պատվիրում է նա: — Ասա, թող գան Հորդուբալովների մոտ:

Հոլորդուբալովների բակում Պոլանան ձեռքերը կտրատելով դես ու դեն է ընկնում:

— Ա՛խ, աստված իմ, աստված, — ողբում է նա: — Տեսնես, ո՞վ կարող էր նրան... Սպանեցին, սպանեցին տան տիրոտը:

Վախեցած Հաֆյան սեղմվել է մի անկյուն. ցանկապատի վրայից նայում են հարևանուհիները. մի խումբ տղամարդիկ խռնվում են դռնակի մոտ: Տանուտերը գնում է ուղիղ դեպի Պոլանան ու ձեռքը դնում նրա ուսին:

— Թոզեք, տիրուհի, ի՞նչ է պատահել նրան: Որտեղի՞ց է վիրավորված:

— Չգիտեմ, — ցնցվում է Պոլանան: — Ես այստեղ չեի, ես չեմ կարող...

Տանուտերն ուշադիր զննում է նրան: Պոլանան գունատ է, հուզված. նա ստիպում է իրեն դես ու դեն ընկնել ու ողբալ:

— Իսկ ո՞վ է տեսել նրան:

Պոլանան սեղմում է շրթունքները:

Իսկ ուստիկաններն արդեն ներս են մտնում բակ ու դռները փակում հետաքրքրասերների քթի առաջ: Ուստիկանները երկուսն են. ծեր հաստիկ Հելնայը՝ առանց գենքի ու կոճակներն արձակ, և Բիլը՝ նոր փութաջան մի աշխատակից, նոր-նոր շողշողուն համազգեստով:

— Որտե՞ղ է նա, — կիսաձայն հարցնում է Հելնայը:

Պոլանան գլխով է անում խրճիթի կողմն ու կոծում:

«Ամերիկացի» Հորդուբալը պառկած է անկողնում և ասես քնած է:

Հելնայը հանում է սաղավարտը, քրտինքը սրբում: Տանուտեր Հերիչը, մռայլվելով, մնում է դռների մեջ: Միայն Բիլն է մոտենում անկողնուն գործարար քայլերով ու խոնարհվում դիակի վրա:

— Նայեցեք կրծքին, — ասում է նա, — շատ քիչ արյուն է դուրս տվել: Երևում է նրան ծակել են:

— Տան մարդու գործ է, — փնթփնթում է տանուտերը: Հելնայն անշտապ շուռ է գալիս:

— Հերիչ, դրանով ի՞նչ եք ուզում ասել:

— Հենց այնպես, ոչինչ: — Տանուտերը զլուխն է տարուբերում: «Խեղճ Յուրայ», — մտածում է նա:

Հելնայը ծոծրակն է քորում:

— Նայեցեք, Կարել, պատուհանը ջարդված է:

Սակայն Կարել Բիլը, արձակելով սպանվածի շապկի կոճակները, վերքն է զննում:

— Տարօրինակ է, — ասում է նա ատամների արանքից, — երևում է դանակով չեն սպանել: Արյունն էլ շատ քիչ է...

— Նայեցեք պատուհանին, Բիլ, — կրկնում է Հելնայը: — Դա ձեզ համար հետաքրքրական է:

Բիլը շուռ է գալիս դեպի պատուհանը: Պատուհանը փակ է, միայն մի քառակուսում ապակին հանված է:

— Ահա՛, — ոչ առանց բարկության նկատում է Բիլը: — Այստե՞ղ: Բայց այս անցքից ոչ ոք չի կարող ներս մտնել, Հելնայ: Իսկ ահա ապակու վրա ավմաստի քերծվածքներ կան, բայց դրանք արված են ներսի կողմից: Շատ հետաքրքրական է:

Հերիչը ոտքի մատների վրա մոտենում է մահճակալին: Խեղճ Յուրայ, ինչպես է նիհարել: Իսկ աչքերը փակված են, ասես քնած լինի:

Բիլը ճշտապահությամբ բացում է պատուհանն ու նայում դուրս:



— Այդպես էլ կարծում էի, — ինքնավստահորեն հայտնում է նա: — Ախր ապակու բեկորները թափված են դրսի կողմը, Հելնայ...

Հելնայը խզխզում է:

— Նշանակում է, տան մարդու գործ է, հը՞, տանուտեր, — մտախոհությամբ ասում է նա: — Ի դեպ, որտե՞ղ է Շտեպան Մանյան:

— Անշուշտ Ռիբարիում, իրենց տանը, — տհաճությամբ պատասխանում է տանուտերը:

Այդ միջոցին Բիհլը քիթը խոթում է բոլոր ծակուծուկերը: Իրերը դես ու դեն թափված չեն, ոչ մի տեղ գողության որևէ հետք չկա...

— Կառուշա, սա ինձ դուր չի գալիս, — ասում է Հելնայը:

Բիհլը քմծիծաղում է:

— Շատ հիմար է, այո՞: Սպասեցեք, ես ամեն ինչ կարգի կբերեմ: Հելնայ, ես սիրում եմ պարզ դեպքերը:

Հաստ, վեհատեսիլ Հելնայը ետ ու առաջ է քայլում բակում:

— Հորդուբալովա, մոտ եկեք: Այս գիշեր տանը ո՞վ կար:

— Միայն ես ու աղջիկս՝ Հաֆյան:

— Դուք որտե՞ղ էիք քնած:

— Մառանում, Հաֆյայի հետ:

— Բակի դուռը փակ էր, այնպես չէ՞:

— Իհարկե, փակ էր:

— Իսկ առավոտյան նո՛ւյնպես փակ էր: Ո՞վ բաց արեց դուռը:

— Ես, հենց որ լուսացավ:

— Դիակն առաջինը ո՞վ տեսավ:

Լռություն: Պոլանան սեղմում է շրթունքները:

— Որտե՞ղ է ձեր բատրակը, — անակնկալ վրա է բերում Բիհլը:

— Տանը, Ռիբարիում:

— Ո՞րտեղից գիտեք:

— Դե... ես կարծում եմ:

— Ես չեմ հարցնում, թե դուք ինչ եք կարծում: Դուք ո՞րտեղից գիտեք, որ նա Ռիբարիում է:

— Ես... չգիտեմ:

— Վերջին անգամ նա ե՞րբ է եղել այստեղ:

— Մի տասը օր առաջ... Իր հաշիվն ստացավ:

— Վերջին անգամ դուք ե՞րբ եք նրան տեսել:

— Տասը օր առաջ:

— Ստո՛ւմ եք, — անխնա կտրում է Բիհլը: — Դուք նրա հետ տեսնվել եք հենց երեկ, մեզ ամեն ինչ հայտնի է:

— Ճիշտ չի՛, — վախեցած ճշում է Պոլանան:

— Խոստովանեցեք, Հորդուբալովա, — պնդում է Հելնայը:

— Ո՛չ... Այո... Երեկ մենք հանդիպել ենք...

— Որտե՞ղ, — սեղմում է Բիհլը:

— Տանը չէ:

— Որտե՞ղ «տանը չէ»:

Պոլանան աչքերը թաքցնում է:

— Գյուղից դուրս:

— Ի՞նչ էիք անում այնտեղ: Դե, շուտ, շուտ:

Պոլանան լռում է:

— Դուք տեսակցություն ունեիք նրա հետ, ահա ինչ, — միջամտում է Հելնայը:

— Ոչ, վկա է աստված: Պատահաբար հանդիպեց ինձ...

— Որտե՞ղ, — կրկնում է Բիհլը:

Պոլանայի տանջահար աչքերը կանգ են առնում Հելնայի վրա:

— Պատահաբար հանդիպեցի՞նք... Նա հարցրեց՝ ե՞րբ գա իրերի ետևից: Նրա շորերը մնացել էին այստեղ, ախոռում:

— Ինչպես երևում է, շատ շուտ է հեռացել այստեղից, այո՞: Ինչո՞ւ տան տերը նրան դուրս արեց:

— Վիճեցին:

— Նա ե՞րբ էր ուզում գալ իրերի ետևից:

— Այսօր... Այսօր առավոտյան:

— Եվ չեկա՞վ:

— Ոչ, չեկավ:

— Որովհետև գիշերն է եղել, — բացականչում է Բիհլը:

— Չի՛ եղել, նա այստեղ չի եղել: Թնել է տանը:

— Ի՞նչ գիտեք:

Պոլանան շրթունքներն է կծում:

— Չգիտեմ:

— Հորդուբալովա, եկեք իմ ետևից, — կտրուկ հրամայում է Բիհլը: — Այնտեղ, սպանվածի մոտ, ձեր լեզուն կբացվի:

Պոլանան ետ է ընկրկում:

— Թողեք նրան, — քրթմնջում է տանուտեր Հերիչը: — Նա հղի է:

## II

Հելնայը նստել է բակում, տան խուզարկությունը թողնելով Բիհլին: Սա շարունակ փնտրում է ու փնտրում, աչքերը պարզապես վառվում են եռանդից: Նա արդեն խուզարկել է ախոռը, գոմը, ամեն ինչ տակնուվրա արել, իսկ հիմա բարձրացավ չարդախի: Գոհ է ու անասելի աշխուժացած:

«Այ քեզ գործեր, — մտածում է Հելնայը: — Սակայն ինձ համար բավական է նաև գնչուների հետ եղած գլխացավանքն ու հասարակական կարգի պահպանումը: Թող Կարելը զվարճանա»:

Բժիշկը դուրս է գալիս խրճիթից և ուղղվում դեպի ծորակը՝ ձեռքերը լվանալու: Իսկ Բիհլն արդեն այստեղ է և լի է անհամբերությամբ:

— Դե ի՞նչ, դե ինչպե՞ս:

— Ամեն ինչ կպարզվի դիտարկումից հետո, — ասում է բժիշկը: — Բայց, ըստ իս, հարվածը հասցվել է մեխով կամ դրա նման մի բանով: Մի քանի կաթիլ արյուն... Տարօրինակ է:

Պոլանան նրան սրբիչ է հրամցնում:

— Շնորհակալություն, տիրուհի: Լսեցեք, ձեր ամուսինը ոչ մի բանով հիվանդ չէ՞ր:

— Երեկ պառկած էր: Տենդ ուներ:

— Ահա՛: Իսկ դուք ե՞րբ եք երեխայի սպասում:

— Գարնանը, ձերդ ողորմածություն:

— Գարնա՞նը: Դե ոչ, մամաշա, նոր տարվանը, ահա թե ինչ:

Բիհլը ուրախ նայում է հեռացող Պոլանայի ետևից:

— Ահա ձեզ և պատճառը, Հելնայ: Չէ՞ որ Հորդուբալը Ամերիկայից վերադարձել է միայն հուլիսին:

Հելնայը խզխզում է:

— Հորդուբալովան գտնում է, որ մեկնումեկը եկել է դրսից: Որպես թե մի շաբաթ առաջ նրա ամուսինը պանդուկում կռվել է Ֆեդելեշ Հեյզայի հետ: Ջարդել է նրա գլուխը: Հեյզան կռվարարի մեկն է, և իբրև թե վրեժխնդիր է եղել: Ահա ձեզ ևս մի հիանալի վերսիս, Կառլուշա:

Դոկտորը նույնպես նայում է Պոլանայի ետևից ու ցրված ասում.

— Ավստու: Դուք նրան կձերբակալեք, և ինձ չի հաջողվի տեսնել նրա ծննդաբերությունը: Այստեղ հազվադեպ է պատահում ներկա գտնվել ծննդաբերությանը: Կանայք ծնում են կատունների պես... Իսկ սրա ծննդաբերությունը ծանր կլինի:

— Ինչո՞ւ:

— Պառավ է, նիհար. երևի, քառասուն կլինի՞:

— Ի՞նչ եք ասում, — պատասխանում է Հելնայը, — երեսուն հազիվ լինի:

— Այդպես, ուրեմն, ասում եք՝ մեռնելուց առաջ Հորդուբալը հիվանդ էր: Մեռածին նայելով, ինչպե՞ս կարելի է այդ բանը որոշել:

— Հելնայ, դա բժշկության գաղտնիք է: Բայց ես քեզ կասեմ. մահճակալի տակ լիքը գիշերանոթ կար դրված:

— Իսկ ես չեմ էլ նկատել, — նախանձով բացականչում է Բիհլը:

— Դե, պարոնայք, ողջ լերուք, — ասում է դոկտորը, ոտքից ոտք շուռ գալով: — Իսկ դիահերձման օրվա մասին տեղյակ կպահեք, եղա՞մ:

— Ես ուզում եմ մի անգամ էլ տունն աչքի անցկացնել, — փնթփնթում է Բիհլը: — Իսկ հետո կարելի է Ռիբարի գնալ:

— Կարել, այդ ի՞նչ եք շարունակ փնտրում: Էլի ինչ-որ վերսի՞ա:

— Հանցանշաններ, — չոր-չոր ասում է Բիհլը: — Եվ ոճրագործության զենքը:

— Այ թե ի՞նչ: Հաջողություն եմ ցանկանում:

Հելնայն օրորվելով ուղղվում է դեպի ցանկապատը և խոսքի բռնվում հարևանուհու հետ: Նա այնքան երկար է հոհում ու սեպերը բացում, որ վերջապես գլխին ջնջոցի մի լավ հարված է ստանում ու մի ծաղիկ՝ հիշատակի համար:

Սարսափած Հաֆյան սեղմվում է սարայի անկյունին: Հելնայն այնպես ահավոր կերպով է ծռմռում մոտիցն ու ատամները ցցում, որ Հաֆյան նախ վախենում է, ու հետո սկսում տնազել նրան:

Որոշ ժամանակ հետո Բիհլը դուրս է գալիս ամբարի ետևից: Հաֆյան նստել է ոստիկան Հելնայի ծնկներին ու պատմում է նրան, որ ինքը ճագարների վանդակ է ունենալու:

— Ոչինչ չգտա, — բարկությանը հայտնում է Բիհլը: — Բայց ես դեռ նորից կվերադառնամ այստեղ: Չի կարող պատահել, որ... Դուք Հերիչին պատվիրե՞լ եք՝ սայլակառք պատրաստել Ռիբարի գնալու համար:

— Սայլակառքն արդեն սպասում է, — պատասխանում է Հելնայն ու ձեռքի թեթև հարվածով արձակում Հաֆյային:

— Հելնայ, դուք այս ամենի մասին ի՞նչ եք մտածում:

— Գիտեք ինչ, Բիհլ, — լրջությամբ սկսում է Հելնայը — Ես ընդհանրապես չեմ պատրաստվում այդ մասին մտածել: Բավական է, քսանհինգ տարվա ընթացքում այնքան շատ եմ մտածել: Չզզվեցրել է:

— Բայց ախր սպանությունը հանաք բան չի, — հեղինակավոր տոնով բարբառում է Բիհլը:

— Հենց այդ է որ կա, Կարլուշա, հանաք բան չի, — գլուխն օրորելով, պատասխանում է Հելնայը: — Միայն թե իմացեք, գյուղում կատարված սպանությանը բոլորովին այլ մոտեցում է հարկավոր: Դուք քաղաքի մարդ եք, գլուխ չեք հանում այդ ամենից: Եթե սպանությունը կատարված լիներ կողոպուտի նպատակով, ես ինքս էլ կփնտրեի ու կհոտոտեի ձեզ պես: Բայց սպանությունը կատարված է ընտանեկան հանգամանքների պատճառով... Ես կասեմ ձեզ, Բիլի, բոլորովին էլ զարմանալի չէ, որ Հորդուբալին սպանել են:

— Ինչո՞ւ:

— Նա ծնվել էր այդպիսի դժբախտ աստղի տակ: Աղավնյակս, այդ բանը գրված էր նրա քթին:

— Ինչպե՞ս, թե՛ քթին, — ծիծաղում է Բիլիը: — Երիտասարդ բատրակը քնել է նրա անկողնում՝ ահա և ողջ պատմությունը: Ամեն ինչ շատ պարզ է, սիրելի Հելնայ:

— Ինչպե՞ն չէ, — մոթմոթում է Հելնայը: — Ոչ, այսպիսի դեպքերը երբեք պարզ չեն լինում: Այ կտեսնեք, Կարել: Փողի համար մարդուն մորթելը հասարակ բան է. մեկ-երկու, և վերջ: Իսկ հիմա մտածեցեք՝ օրեր ու շաբաթներ մտադրությունը թաքցնել իր մեջ, գիշեր-ցերեկ ծանրութեթև անել... Գիտեք, Բիլի, այդ նույնն է, թե դժոխքը դիտեք: Ձեզ համար ամեն ինչ պարզ է, որովհետև դուք այստեղ նորեկ եք, իսկ ես բոլորին էլ գիտեմ, Կարլուշա, երեքին էլ: Է՛, ինչ խոսես, գնացի՞նք Ռիբարի:

### III

— Շտեպանը տա՞նն է:

— Չէ, գնաց քաղաք:

Բիլիը Միհայ Մանյային հրում է մի կողմ ու ներս ընկնում տուն: Այդ միջոցին Հելնայը ծերուկ Մանյայի ու Միհայի հետ խոսքի է բռնվում եղանակի, նապաստակների ու այն մասին, թե ինչու է նրանց աղբահորի ջուրը հոսում ճամփի վրա:

Բիլիը վերադառնում է: Նրա հետ է Շտեպանը՝ գունատ, ամբողջովին խոտերի մեջ ու դիմադրում է:

— Իսկ ասում էիք՝ տանը չի՛, — Միհայի վրա է հարձակվում Բիլիը:

— Նա առավոտից ասում էր, որ քաղաք է գնալու, — մոթմոթում է Միհայը: — Ես նրան պահակ եմ, ինչ է:

Իսկ սա թաքնվել էր մարագում: Ինչո՞ւ էիք թաքնվել, հը՞:

— Ես չէի թաքնվել, — նոթերը կիտելով, — ասում է Շտեպանը: — Ինչո՞ւ պիտի թաքնվեի: Քնել էի:

— Երևում է, գիշերը քուններդ չե՞ք անել:

— Առել եմ, ինչու չէ:

— Ուրեմն, ինչո՞ւ էիք հիմա քնել:

— Որովհետև... գործ չկար, ահա թե ինչու: Բատրակություն անելով հայումաշ եղա, հերիք է:

— Երեկ սա աշխատում էր, աստված վկա, աշխատում էր, ամբողջ օրը վար էր անում, — հասպնեպորեն պաշտպանում է ծերուկ Մանյան:

— Օ՛խ-օ՛խ-հո՛, — հառաչում է Հելնայր: — Ուրեմն, Շտեպան, դուք ի՞նչ կասեք այն մասին, ինչ պատահել է Հորդուբալին:

— Ես այդտեղ ոչ մի մեղք չունեմ, — դուրս է թռչում Շտեպանի շրթունքներից:

— Ուրեմն, արդեն գիտե՞ք, որ նա սպանված է, — հաղթականորեն բացականչում է Բիհլը: — Այդ որտեղի՞ց է հայտնի ձեզ:

— Ոչ մի տեղից: Պարզապես որ ոստիկան տեսա, իսկույն մտածեցի, որ Հորդուբալին մի վատ բան է պատահել:

— Ինչո՞ւ հենց հատկապես Հորդուբալին:

— Որովհետև... որովհետև մենք նրա հետ կովեցինք: — Շտեպանը սեղմում է բռունցքներն ու ատամները: — Վռնդեց ինձ տնից, շունը:

Բիհլը թեթևակի հիասթափված է:

— Տեսեք, Մանյա, ուրեմն, դուք խոստովանում եք, որ կռվել եք Հորդուբալի հետ:

Շտեպանը չարությամբ քնծիծաղում է:

— Բոլորն էլ գիտեն այդ:

— Եվ դու ուզում էիր նրանից վրե՛ժ լուծել:

Շտեպանը փնչացնում է:

— Թե որ նա ինձ պատահեր... չգիտեմ ինչ կանեի:

Բիհլը մի րոպե միտք է անում: Շտեպանին այդպես հեշտությամբ վերցնել չես կարող:

— Այս գիշեր որտե՞ղ էիք, — հարցնում է նա շեշտակի:

— Տանն էի, այստեղ: Զնել էի:

— Մենք այդ դեռ կատուգենք: Վկաներ կա՞ն:

— Կան: Միհայր, Դյուլան, իմ ծերուկը: Հարցրեք նրանց.

— Դուք ինձ մի սովորեցրեք, թե ում հարցնեմ, — հարձակվում է նրա վրա Բիհլը: — Երեկ ցերեկը դուք խոսել եք Հորդուբալովայի հետ, ինչի՞ մասին:

— Ես նրա հետ չեմ խոսել, — հաստատ ու կտրական հայտարարում է Շտեպանը: — Նույնիսկ չեմ էլ տեսել:

— Ստո՛ւմ եք: Նա ինքը խոստովանեց, որ տեսակցության է եկել ձեզ մոտ: Եվ դուք հարցրել եք, թե երբ գնաք ձեր իրերի ետևից:

— Տասը օր է՛ ես նրան չեմ տեսել, — պնդում է Շտեպանը: — Ինչ նրանց մոտից հեռացել եմ, էլ Կրիվոյում չեմ եղել: Տիրուհուն էլ չեմ տեսել:

Բիհլը կատաղում է:

— Սպասեք, ես ձեզ կսովորեցնեմ ճշմարտությունն ասել: Գնանք, ցույց տվեք, թե այսօր որտե՞ղ եք քնել:

Շտեպանը, ուսերը թոթվելով, Բիհլին առաջնորդում է խրճիթ, չեղնայր ծեծում է պատուհանը:

— Է՛յ, ծերուկ, եկեք այստեղ:

Ծերուկ Մանյան դուրս է գալիս, աչքերը երկչոտությամբ թարթելով:

— Շնորհ արեք, ի՞նչ է պատահել:

— Չեղնայր թափ է տալիս ձեռքը:

— Այս գիշեր Հորդուբալին ծեծ էն, փայտով հասցրել մռութին: Լսեք, հայրիկ, հո այդ Շտեպանը չի՞ արել:

Ծերուկը տարուբերում է գլուխը:

— Ամոթ չլինի ասելը, չէ: Շտեպանը չէր կարող, Շտեպանը տանն էր, իր տեղում քնած: չէ՛յ, Միհալ, էստեղ արի: Ասա, ես գիշեր Շտեպանը որտե՞ղ էր:

Միհալն սկզբում լռում է, ապա անշտապ ասում.

— Որտե՞ղ պիտի լիներ: Դյուլայի ու ինձ հետ քնած էր վերևում:

— Այդպես, այդպես, — գլխով է անում չեղնայր: — Ես այդպես էլ կարծում էի: Իսկ Հորդուբալին գլուղում չէ՞ին սիրում: Հարստացած ետ էր եկել Ամերիկայից և նույնիսկ հարևաններին չէր հյուրասիրել:

Ծերուկ Մանյան ձեռքը բարձրացնում է վեր:

— Օ՛հ, համա՛ թե հարստացել էր: Մի քսակ ուներ վզից կախ, մեջը լիքը դուարներ...

— Դուք տեսե՛լ եք:

Դե, իհարկե, ծեր Մանյան տեսել է, ախր Հորդուբալը եկել էր նրա կալվածը գնելու և ցույց տվեց փողերը: Ամոթ չլինի ասելը, յոթ հարյուր դուարից ավելի: Իսկ գլուղում, — ինչ որ ճիշտ է, ճի՛շտ է, — նրան չէին սիրում: Գոռոզ մարդը բարեկամ չի ունենա:

Չեղնայր լրջությամբ գլխով է անում:

— Մանյա, այդ ինչո՞ւ է ձեր դուռը ամբողջովին ծակծկոտված:

— Մախաթից է: Չամբյուղ գործելու մախաթը էնտեղ ենք խրում: Կլոր տարին ցցված է լինում էնտեղ:

— Մի ցույց տաք, տեսնեմ, այդ ինչպիսի՞ մախաթ է, — հետաքրքրվում է չեղնայր: — Առաջին անգամ եմ լսում, որ զամբյուղները մախաթով են գործում:

— Շիվերը այ էսպես են գործում: — Մանյան ձեռքով գծում է օղի մեջ: — Դեռ երեկ մախաթն էստեղ էր, — բարկանում է նա: — Ո՞ւր կորավ, հը՞, Միհալ:

— Դե լավ, — անտարբերությամբ ասում է Հելնայր: — Մի ուրիշ անգամ որ այստեղ գամ, կտեսնեն: Իսկ որ կեղտաջուրը հոսում է ճամփի վրա, այդ լավ չի, Մանյա: Ճանապարհը պետական է:

— Ներող կլինեք: Հենց որ գոմաղբը դաշտ տանելու եղանք, բոլորը կկրենք...

— Պետք է իսկական հոր պատրաստել, ցեմենտով: Երևի տնտեսության մեջ փողը պակասում է:

— Օհ, պակասում է, ծիծաղում է ծերուկը: — Հարկավոր է նոր ամբար շինել: Միևուր հիմար տղա է: Շտեպանը նրանից շատ ավելի խելոք է. այ թե ով պիտի լիներ տնտեսության գլուխը:

Դյուլան դաշտից վերադառնում է՝ սայլի մեջ մի խտիտ խոտ, բայց աղմուկն այնքան շատ է, որ ասես ամպրոպ է բերում:

— Մոտ արի, երիտասարդ, — հայրաբար կանչում է նրան Հելնայր: — Կարգի համար քեզ էլ հարցաքննեն: Այս գիշեր Շտեպանը որտե՞ղ էր:

Դյուլան, բերանը լայն բացած, հարցական նայում է ծերուկին ու Միհայլին: Բայց ոչ որ հոնքն էլ չի շարժում:

— Էստեղ էր, — փնթփնթում է Դյուլան, — Միհայլի ու ինձ հետ քնել էր չարդախում:

— Ապրես, — գովում է Հելնայր: — Իսկ դու կուզեի՞ր ծառայել հեծելազորում:

Պատանու աչքերը փայլում են:

— Էն էլ ո՛նց:

Բիհլը դուրս է գալիս խրճիթից, կամացուկ հայհոյելով:

— Այստեղ եկեք, Հելնայ: Ես մի փոքր հասցրի Շտեպանի մոռութին ու փակեցի խրճիթում:

— Այդ չի թույլատրվում, — նկատում է Հելնայր: Անձի անձեռնմխելիություն և նման բաներ:

Բիհլը անհարգալից քմծիծաղում է:

— Ես թթել եմ քո այդ անձի անձեռնմխելիության վրա: Վատն այն է, որ ես ոչինչ չգտա: Իսկ դո՞ւք ինչպես:

— Կարելի, ինչպես շուռ ես տալիս, ալիբի է: Ամբողջ գիշեր շնթռել է խոտանոցում, ինչպես օրինակելի մի տղա:

— Ստո՛ւմ են, — բացականչում է Բիհլը:

— Պարզ է, փչում են: Բարեկամս, այդ բանը նստած է նրանց արյան մեջ:

— Դատարանում կխոսեն, — չարանում է Բիհլը:

— Դուք սրանց վատ եք ճանաչում: Կիրաժարվեն ցուցմունքներից կամ սուտ երդում կտան: Ասես ոչինչ էլ չի եղել: Կարելի, դա գյուղում մի տեսակ ժողովրդական սովորույթի նման բան է:



— Ուրեմն, ի՞նչ անենք, — խոժոռվում է Բիհլը: — Ինչ եք կարծում, Հելնայ, Շտեպանին չձերբակալե՞նք: Կարելի է գլխով երաշխավորել, որ այդ նա է...

Հելնայը գլխով է անում:

— Պարզ է: Միայն տեսեք, Բիհլ...

Նա չվերջացրեց: Ինչ-որ տեղ թեթև գնգաց ապակին:

— Կանգնի՛ր, — բղավեց Բիհին ու նետվեց դեպի տան անկյունը: Հելնայը հետևեց նրան: Երկու մարդ թավալ էին տալիս գետնին: Ի վերջո Բիհլը հայտնվեց վերևում:

— Տվեք, ես նրան բռնեմ, Կարել, — առաջարկեց Հելնայը:

Բիհլը բարձրանում է տեղից և, Շտեպանի ձեռքերը ոլորելով, քարշ է տալիս իր ետևից:

— Շարժվիր, շարժվիր, — խոխոռում է նա: — Վեր կաց: Ես քեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում փախչել:

Շտեպանը, ծանր շնչելով, ցավից կնճռոտվում է:

— Թողեք, — խռպոտ փնթփնթում է նա: — Ես ուզում էի միայն Կրիվոյ գնալ... իրերի ետևից:

Դյուլան նետվում է նրանց միջև:

— Բաց թողեք նրան, — բղավում է նա: — Թե չէ, ես...

Հելնայը բռնում է Դյուլայի ուսից:

— Կամաց, կամաց, փոքրիկ: Իսկ դուք, Միհայ, մի խառնվեք ձեզ չվերաբերող գործի մեջ: Շտեպան Մանյա, օրենքի անունից դուք ձերբակալված եք: Դե գնա, հիմար, գնա:

Շտեպան Մանյային տանում են քաղաք: Նա արդեն ձիու վրա չէ, չի թռչում հպարտորեն վեր բարձրացրած գլխով, բայց և այնպես մարդիկ կանգ են առնում նայելու նրան: Կողքերին ոստիկաններ են, հրցանները պահած ոտքերի արանքը: Շտեպանի գլխարկը չի թեքված ծոծրակին, նա չի նայում դեպի հովիտ՝ ահա այնտեղ գետն է, այնտեղ ձիերն են արածում, եղեգների ետևից ճահճուտն է երևում... Շտեպանը նստել է լուռ, հայացքը հառել ձիու շիկակարմիր մեջքին:

Հելնայն արձակում է զգեստի կոճակներն ու Շտեպանի հետ բարեկամական գրույցի բռնվում: Հորդուբալի մասին ոչ մի խոսք, մի գլուխ տնտեսության մասին, Ռիբարիի տան ու ձիերի մասին: Սկզբում Շտեպանը խրտնում է, հետո տարվում խոսակցությամբ:

Այո, այո, լավ հովատակ էր: Տերը իզուր ծախեց նրան, աստված գիտե՛ ում և ինչու: Նրա համար կարելի էր ութ հազար վերցնել, ծախել ձիաբուծարանին, իսկ դրանից առաջ բաց թողնել այն սև զամբիկի վրա: Է՛խ, պարոն, կուզեի մտիկ տալ նրանց... Մանյայի աչքերը վառվում են: Այդպիսի ձին տերը վաճառեց, մեղք է, ուրիշ ոչինչ: Հարկավոր էր ծախել մալած ձին կամ զամբիկը, այ թե ինչ: Եվ ոչ թե հովատակը... Շտեպանն անկեղծորեն հուզված է:

«Ձերբակալվածի հետ խոսել չի թույլատրվում, բացի գուտ պաշտոնական խոսակցությունից», — վշտացած մտածում է Բիլիը:

— Այ թե կթողներ մեզ այն հովատակը, — ասում է Շտեպանը ասես ինքն իրեն, — սանձերը ես ինքս կվերցնեի... Է՛իս, համա՛ թե կգրոսնեիք...

## IV

— Տեսեք, Հելնայ, — ասաց երեկոյան Բիլիը, — սա յուրայիններից մեկն ու մեկն է: Պատուհանը ներսից դուրս է սեղմված, որպեսզի կոտրելու նման լինի: Դռնով անհնար էր խրճիթ ընկնել, դուռը փակված էր սողնակով: Ուրեմն, արդեն երեկոյից մարդասպանը տանն է եղել...

— Չի եղել, — առարկում է Հելնայը: — Հաֆյան ինձ ասաց, որ քեռի Շտեպանը երեկոյան նրանց մոտ չի եղել:

— Լավ: Ուրեմն, տնեցիներից մեկն է գիշերը ներս թողել նրան: Շտեպանն այստեղ հինգ տարի բատրակություն է արել: Ամբողջ գյուղը գիտե, որ այդ ժամանակաշրջանում նա սիրային կապի մեջ է եղել տանտիրուհու հետ:

— Սպասեցեք: Նախ՝ ընդամենը միայն չորս տարի: Առաջին անգամ այդ բանը պատահել է մարագում: Հետո նա ամեն գիշեր գնացել է ախոռ: Ես այս ամենը Հաֆյայից իմացա, Կարել:

— Ձեր այդ Հաֆյան ինչ-որ շատ բան գիտի, — ծիծաղեց Բիլիը:

— Այո, գյուղական բոլոր երեխաներն էլ այդպես են...

— Հիմա շարունակենք. անշուշտ Հորդուբալովան հղի է Շտեպանից: Չէ որ Հորդուբալը միայն հուլիսին է վերադարձել Ամերիկայից: Կինը գիտեր, որ այդ ամենը կբացվի: Հորդուբալը չէր պատրաստվում կնոջը որևէ մեկի հետ բաժանել:

Հելնայը բացասաբար շարժեց գլուխը:

— Հագիվ թե, Բիլի: Հորդուբալը քնում էր գոմում, իսկ կինը չարդախում կամ մառանում: Ես այդ իմացա հարևանուհուց:

— Այնուամենայնիվ, գնացել է բատրակի մոտ:

— Դժվար է ասել, — մտախոհ ասաց Հելնայը: — Հաֆյան կարծում է, թե չի գնացել: Ճիշտ է, վերջին ժամանակներս Պոլանան բացակայել է տնից: Հարևանուհին նկատել է, թե նա ինչպես է գնացել դուռից դուրս ինչ-որ տեղ:

— Այ քեզ մա՛րդ, — զարմանում է Բիլիը: — Պառավ կնկա պես բամբասանքներ էր հավաքել: Իսկ ես աշխատում եմ պատկերը տրամաբանորեն վերստեղծել:

— Ա՛իս, այդպե՛ս: Իսկ ավելի լավ չի, Կարլուշա, որ մտքիդ մեջ զբաղվես այդ բանով:

— Ոչ, բարձրաձայն ավելի լավ է ստացվում: Եվ այսպես. այդ դրում Հորդուբայն այնքան է վատահել Շտեպանին, որ անչափահաս Հաֆյային նշանել է նրա հետ: Հելնայ, մտածեցեք միայն, ախր սա իսկական միջնադար է՝ երեխային նշանել:

Հելնայը ուսերն է թոթվում:

— Բայց հետո, ինչպես երևում է, Հորդուբայը գլխի է ընկել, որ կինը դավաճանում է իրեն, և Շտեպանին վռնդում է:

Հելնայը փնչացնում է դժգոհությամբ:

— Ի՞նչ եք պատմում, Բիլի: Նախ Շտեպանն է հեռանում նրանց մոտից, և հետո միայն Հորդուբայը նրան նշանում է Հաֆյայի հետ: Հարցրեք գյուղում ուզածդ կնկան:

— Հը՛մ, — Շփոթվում է Բիլիլը: — Ուրեմն, այդ ամենն ինչպե՞ս կապել իրար հետ:

— Չգիտեմ Կարել, չգիտեմ: Ես չեմ կարողանում կազմել այդ... ինչպես ասացիր... տրամաբանական պատկերները: Այդ ամբողջ գործը ընտանեկան ողբերգություն է, և բոլորովին ոչ պարզ մի դեպք: Դե, չի էլ կարող պարզ լինել: Դուք ընտանիք չունե՞ք, Բիլի: Այ, բանն էլ հենց այդ է:

— Բայց ախր ամեն ինչ պարզ է, Հելնայ, ինչպես երկու անգամ երկու՝ չորս: Պոլանան ուզում է ամուսնուց ազատվել, Շտեպանը դեմ չէ մտնել ընտանիքի կազմի մեջ իբրև փեսա: Նրանք պայմանավորվում են, և պատրաստ է: Երեկ այդ կինը վազել է նրա ետևից...

Հելնայը գլուխն է օրորում:

— Նորից այն չէ: Հաֆյան ասում է, որ երեկ հայրն է ուղարկել նրան. գնա, Շտեպանին կանչիր, թող ետ գա: Բայց, ասենք, իմ ինչ գործն է: Լսեցեք, Բիլի, հանգուցյալի վզին փողի քսակ չկա՞ր կապած:

— Ի՞նչ քսակ, — զարմանում է Բիլիլը: — Ոչինչ էլ չկար:

— Այ տեսնում եք, — ասում է Հելնայը: — Իսկ քսակում ավելի քան յոթ հարյուր դոլարի մի գումար է եղել: Փնտրեցեք, Կարել:

— Դուք կարծում եք, թե այդ սպանությունը կատարվել է կողոպուտի նպատակով:

— Ես ոչինչ էլ չեմ կարծում: Բայց փողերը հո չքացել են: Ծերուկ Մանյան մի անգամ տեսել է դրանք Հորդուբայի մոտ: Իսկ Մանյաների ընտանիքը փողի կարիք է զգում: Նրանք ուզում են նոր ամբար կառուցել:

Բիլիլը կամացուկ սուլում է:

— Այդպե՛ս: Ուրեմն, իսկական պատճառը փո՞ղն է:

— Հնարավոր է, — համաձայնում է Հելնայը: — Սովորաբար այդպես է լինում: Կամ վրեժխնդրություն, Բիլի: Դա ևս լուրջ վերսիա է: Հորդուբայը Շտեպանին դուրս է շարտել ցանկապատի վրայով: Ուղիղ եղինջների մեջ: Այդպիսի գործի համար գյուղում դանակով են վրեժ լուծում, Կարել: Այնպես որ կարող եք ընտրել ուզածդ վերսիան, որն ավելի հարմար է ձեր ճաշակին:

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել, — խոժոռվում է Բիլիլը:

— Ուզում եմ օգնել ձեզ՝ պատկերը տրամաբանորեն վերստեղծելու, — անմեղորեն նկատում է Հելնայը: — Լիովին հնարավոր է նաև, որ Մանյան Հորդուբալին սպանած լինի հովատակի համար:

— Դե, այդ արդեն հիմարություն է:

— Հենց այդ է որ կա: Միրելի Բիլի, ընտանեկան գործերում հենց հիմարությունից էլ սպանում են:

Բիլիը նեղացած լռում է:

— Մի բարկանաք, Կարյուշա, — ասում է Հելնայը: — Ուզո՞ւմ եք ասեմ, թե Հորդուբալն ինչով է սպանված: Չամբյուղ գործելու մախաթով:

— Ի՞նչ գիտեք:

— Երեկ Մանյայի մախաթը կորել է: Փնտրեք այն, Բիլի:

— Իսկ դա ի՞նչ տեսք ունի:

— Չգիտեմ: Երևի մեծ ասեղի նման մի բան է: Ահա և բոլոր նորությունները, Բիլի, — եզրափակում է Հելնայը, սկսելով կենտրոնացած թափ տալ ծխամորճը: — Բացի, թերևս, նրանից, որ Մանյաները պիտի գոմաղբը դաշտ կրեն:

## V

Հելնայն ու Բիլիը, գինի խմելով, սպասում են դիահերձման ավարտին:

— Բիլի, ապակի կտրելու այդ ավմաստը որտե՞ղ գտաք:

— Հորդուբալովների մառանում: Սրան ի՞նչ կասեք:

— Այ թե ինչ մարդիկ են այդ գյուղացիները, — վշտացած ասում է Հելնայը: — Նա ափսոսում է իրը դեն նետել, եթե դա նույնիսկ հանցանշան է: Հասկանում եք, պետք կգա տնտեսության մեջ: — Հելնայը թքում է վարպետությանը: — Գծուծներ:

— Հորդուբալովյան հավատացնում է, որ ավմաստը վաղուց են ունեցել, դեռևս մինչև Հորդուբալի Ամերիկա գնալը: Բայց ապակեգործ Ֆարկաշը հիշեց, որ սրանից մի ամիս առաջ ավմաստը Շտեպանն է իրենից գնել:

Հելնայը շվկացրեց:

— Ամբողջ մի ամիս: Բիլի, այ տեսնում եք, թե ինչ տարօրինակ բան է. նրանք այդ ամենը մտածել են մի ամիս առաջ: Մեկնումեկին, թերևս, ես կարող եմ տաքացած ժամանակ հանկարծ սպանել: Բայց ահա այդպես պատրաստվել երկար, կամաց-կամաց... Իսկ դուրսները, ասում եք, չգտնվեցի՞ն:

— Ոչ: Բայց մառանում, բացի դրանից, կար նաև էլեկտրական մի լապտեր: Հիմա ես կպարզեմ, թե Շտեպանը երբ և որտեղից է գնել այն: Նույնպես իրեղեն ապացույց է, հը՞: Իմ կարծիքով, կան բավականաչափ հիմքեր, որպեսզի իշխանությունները

Հորդուբալովային ձերբակալելու օրդեր տան: Իսկ նրանք պահանջում են, որ մենք էլի ինչ-որ լուրջ հանցանշաններ գտնենք:

Հելնայը շուռումուռ է գալիս աթոռի վրա:

— Կարել, ես էլ որոշ բաներ ունեմ: Շտեպանի փեսան, ոմն Յանոշ, պատմում է, որ իբր Շտեպանը մի շաբաթ առաջ եկել է նրա մոտ արտը և ասել. «Յանոշ, դու կարող ես մի լավ նվեր ստանալ՝ մի գույգ եզ, որոնց ինքդ կընտրես շուկայում, և այդ ամենը, իբր, մի թեթև գործի համար՝ եթե վերջ տաս Յուրայ Հորդուբալին»:

— Լավ է, — հիանում է Բիհլը: — Իսկ Յանոշն ի՞նչ է պատասխանում:

— «Գնա գործիդ, — իբր ասել է Յանոշը: — Քեզ այդքան փող որտեղի՞ց»: — «Ես չունեմ, — պատասխանում է Շտեպանը, — դրա փոխարեն տիրուհին ունի: Իսկ մենք պայմանավորվել ենք ամուսնանալ, հենց որ Հորդուբալից ազատվենք»:

— Ուրեմն, բռնվեցին, — խորը հառաչում է Բիհլը: — Երկուսով միատեսակ խառն են գործի մեջ:

Հելնայը գլխով է անում:

Դոկտորը դուրս է գալիս: Նա դիահերձումը վերջացրել ու շտապում է, արագ-արագ փոխելով կարճիկ տոտիկները և կարճատես աչքերը շուրջը հաճելով:

— Պարոն դոկտոր, — ձայն է տալիս նրան Հելնայը, — չէի՞ք կարող մի բույս սպասել:

— Ա՛, — արձագանքում է դոկտորը: — Դե, ենթադրենք: Ինձ մի գավաթ սալորօղի: Խեղճն արդեն հոտում է: Հանելի աշխատանք չի: — Նա մի թափով դատարկում է գավաթն ու կոնչում: — Պարոնայք, իսկ գիտեք, որ նրանք սպանել են հանգուցյալին:

— Բիհլը չոում է աչքերը:

— Ի՞նչ...

— Համարյա հանգուցյալին: Նա արդեն հագիվ շնչելիս է եղել: Հոգևարք: Ամենաուժեղ կարգի թոքերի բորբոքում: Հանգուցյալը նույնիսկ մինչև առավոտ չէր ապրի:

— Ուրեմն, սպանությունը անտեղի՞ է եղել, — դանդաղ ասում է Հելնայը:

— Այո: Բացի դրանից, արտայի վրա բռնցքաչափ մի ուռուցք կա: Նույնիսկ եթե թոքաբորբը չլիներ, բավական էր մի թեթև ցնցում, և վերջ: Թշվա՛ռ:

Ոստիկանները ընկճված թում են: Վերջապես Բիհլը հագում է ու հարցնում.

— Իսկ մահվան պատճա՛ռը, դոկտոր:

— Սպանություն: Սրտի ծակում ձախ խորշի շրջանում: Շատ քիչ արյուն է հոսել, որովհետև մարդն արդեն հոգևարքի մեջ է եղել:

— Ձեր կարծիքով, վերքն ինչո՞վ է հասցված:

— Չգիտեմ: Մեխով, մախաթով, պարկ կտրելու մեծ ասեղով: Կարճ ասած՝ մոտ տասը սանտիմետրանոց մետաղյա բարակ, սրածայր, կողավոր գործիքով, որն ունի լայնակի, ձվաձև կտրվածք... Բավարարվա՛ծ եք:

Հելնայը բաժակը շուռումուռ է տալիս հաստ մատների մեջ:

— Դոկտոր, իսկ ինչ կասեիր... չի՞ կարելի համարել, որ նա... մեռել է թոքերի բորբոքումից: Գիտեք, եթե նրան վիճակված էր մեռնել... արժե՞ այս ամբողջ աղմուկը բարձրացնել:

— Ո՛չ, Հելնայ, այդպես չի կարելի, — բղավում է Բիլիր: — Ախր սպանությունն առկա է:

Դոկտորը փայլեցնում է ակնոցը:

— Այդ ցավալի կիներ, պարոնայք: Դեպքը հույժ հետաքրքրական է: Ասեղով կամ դրա նման մի բանով սպանություն հազվադեպ է պատահում: Ես, սպանվածի սիրտը կդնեմ սպիրտի մեջ և կուղարկեմ, — դոկտորը ճառագայթում էր, — կուղարկեմ Պրագա՝ նշանավոր մի փորձագետի: Այնպես որ դուք կստանաք ամենահեղինակավոր մի եզրակացություն: Ինչ արած՝ սա սպանություն է, այդպես է ասում օրենքը: Բայց, աստված իմ, ի՞նչ անտեղի սպանություն:

— Ինչ արած, — կրկնում թ Հելնայը: — Իսկ մի ավանակ գտնում է, որ սա պարզ դեպք է...

## VI

Այն բանկան, որի մեջ դրված էր Հորդուբալի սիրտը, ճանապարհին ճաքեց, և ամբողջ սիրտը հոսեց: Սիրտը գիտնական այրի լաբորատորիա հասավ անչափ վատ վիճակում:

— Նորի՞ց ինչ-որ բան են ուղարկել, — վրդովվեց փորձագետը, ճերմակահեր մի պարոն: — Ի՞նչ է գրված այդ թղթի մեջ: «Հայտնաբերված է ծակոտված վերք»: Ա՛խ, այդ գյուղական հեքիմները:

Գիտնական հեղինակությունը հառաչեց վշտացած ու հեռվից-հեռու աչքերը տնկեց Հորդուբալի սրտի վրա:

— Գրեցեք, ծակոտված վերքը բացառվում է, անցքը շատ է փոքր: Սրտամկանը խոցված է փոքրակալիքր գնդակով: Եվ շուտ աչքիցս չքացեք:

— Համեցեք, նամակ Պրագայից, — ողջունեց Հելնայը Ռիբարիից վերադարձած Բիլիին: — Ի գիտություն ձեզ, Կարել Հորդուբալը ոչ թե ծակված է, այլ սպանված փոքրակալիքր հրացանով: Այ թե բանն ինչ է:

Բիլիի ձեռքերը թուլացան:

— Իսկ ի՞նչ է ասում մեր դոկտորը:

— Ինչ է ասո՞ւմ: Սաստիկ հայիոյում է: Ինչ է, չգիտե՞ք նրան: Եվ իրենն է պնդում: Այսպես, ուրեմն, փոքրակալիքր հրացան: Փնտրեցեք փոքրակալիքր հրացան ունեցող մարդուն, Բիլի:

Բիլիը սաղավարտը շարտեց անկյուն:

— Հելնայ, ես այսպես չեմ թողնի, — սպառնաց նա: — Ոչ ոքի թույլ չեմ տա այս գործը խնճել: Աստված իմ, համարյա ամեն ինչ պատրաստ էր, ամեն բան համընկնում էր, և ահա,

խնդրեմ: Մի՞թե սրանով կարելի է դատարան գնալ: Միրելի մարդ, ո՞րտեղից ճարենք փոքրակալիքը հրացան:

Հելնայը ուսերն է թոթվում:

— Այ տեսնում եք: Եվ այդ բոլորն այն պատճառով, որ դուք թույլ չսովիք խեղճ Հորդուբալին հոգին աստծուն ավանդել թոքերի բորբոքումից: Ինքներդ եք մեղավոր՝ դուք և դոկտորը:

Բիլը կատաղած նստում է պռոռին:

— Այդ անիծյալ նամակն իմ ամբողջ բավականությունը փչացրեց: Ամենամեծ բավականությունը այս օրերի ընթացքում:

— Այդ ո՞րը:

— Ես գտա դոլարները, ավելի քան յոթ հարյուր դոլար: Եվ քսակը: Ռիբարիում, չարդախի գերանի տակ:

Հելնայը զարմանքից մինչև իսկ ծխամորճն է բերանից հանում:

— Այ դա հիանալի՛ է, Կարլուշա, — հավանությամբ ասում է նա:

— Բայց այ թե երկար փնտրեցի: — Բիլը շունչը ետ է բերում: — Գիտե՞ք որքան քաշ եկա Ռիբարիում: Քառասունվե՛ց ժամ: Հաշվեցի: Ոչ մի շյուղ հանգիստ չեմ թողել, տակնուվրա եմ արել ամեն ինչ: Շտեպանն իր ալիքիով տապալվեց: Ինչ եք կարծում, Հելնայ, սա երդվյալների համար բավական չէ՞: Փողը գտնվեց, Շտեպանի գնած ավմաստը նույնպես վատ ապացույց չէ, բացի դրանից, ցուցմունքների հակասականությունը: Ստացվում է ավարտված վերսիա, հը՞:

— Նույնիսկ չորս վերսիա, — համաձայնում է Հելնայը:

Բիլը ձեռքն է թափ տալիս:

— Ի՞նչ չորս: Առկա է սովորական, շարքային, զգվելի մի սպանություն՝ ի սեր դրամի: Հելնայ, ես ձեզ կպատմեմ ամեն ինչ, ինչպես որ եղել է: Հորդուբալը գիտեր, որ Մանյան իր կնոջ սիրելեանն է, ու վախենում էր նրանից: Ահա թե ինչու էր նա փողերն իր մոտ պահում, ահա թե ինչու Մանյային նշանեց իր Հաֆյայի հետ, ահա թե ինչու վերջիվերջո վռնդեց նրան ու փակվեց գոմում: Միանգամայն պարզ մի դեպք է:

Հելնայը մտախոհ թարթում է աչքերը:

— Կարլուշա, իսկ ես շարունակ մտածում եմ ձիերի մասին: Շտեպանը ձիեր սիրում է... Նրա գլխում մի միտք կա միայն՝ ինչպես հող գնել ու երամակ պահել: Իսկ այստեղ, Հորդուբալի մարգագետինների կողքին, մի հողամաս էր վաճառվում: Մանյան, երևի, ուզում էր, որ Հորդուբալը գնի այն, իսկ նա՛ չէ որ չէ: Եվ փողերը թաքցնում է թևի տակ: Ես չեմ զարմանա, եթե պարզվի, որ իսկական պատճառը հենց սա է:

Դե, գիտեք, էլը չէ, պոչն է: Այսպես թե այնպես, ստացվում է, որ փողի համար է: Միայն ո՛չ Գոլանայի սիրուց:

— Ո՞վ գիտե...

— Չէ, թողեք այդ, Հելնայ: Դուք հին, ջանասեր աշխատող եք ու ճանաչում եք գյուղը, իսկ ես երիտասարդ եմ և, գրողը տանի, մի քիչ գլուխ եմ հանում կանանցից: Ես այդ Պոլանային տեսել եմ՝ լղար, ոչ գեղեցիկ կին է, հետն էլ պառաված: Ճիշտ է, նրանց միջև կապ եղել է, բայց ես կարծում եմ, որ այդ կնոջ վրա թանկ է նստել: Հելնայ, Հորդուբալը նրա համար չէր գոհվի, նրա համար Շտեպանը սպանության չէր գնա: Իսկ դրամի համար՝ այո: Դա ցերեկվա լույսի պես պարզ է: Հորդուբալը գյուղական ժատ էր: Պոլանան չէր համբերում ժառանգությունն ստանալու, որպեսզի սիրեկանին պահեր, իսկ Շտեպանը փողի սիրահար է՝ ահա և բոլորը: Հելնայ, ասում եմ ձեզ, որ այստեղ ռոմանտիկայի նշույլ անգամ չկա: — Բիհլը ճթացնում է մատները: — Կեղտոտ ու միանգամայն պարզ պատմություն է, բարեկամս:

— Հիանալի կերպով սիստեմի է բերված, կեցցեք, Բիհլ, — գովեց Հելնայը: — Ավելի վատ չի, քան պարոն դատախազի սիստեմը: Ձեզ մոտ ամեն ինչ այնպես հասարակ է ստացվում...

Բիհլը լայն ժպտաց, շոյված գգալով իրեն:

— ... Բայց և այնպես, Կարել իմ կարծիքով ավելի հասարակ կլիներ, եթե Հորդուբալը մեռներ աստծու կամքով: Թորերի բորբոքում, և ամեն: Այրին կամուսնանար Շտեպանի հետ, երեխա կունենային... Բայց այսպիսի հասարակ տարբերակը ձեզ չի գոհացնում, Բիհլ:

— Ոչ: Ինձ գոհացնում է ճշմարտությունը, Հելնայ: Հասնել ճշմարտության՝ այս է իսկական տղամարդու խնդիրը:

Հելնայը մտախոհ աչքերն է թարթում:

— Իսկ դուք համոզվա՞՞ծ եք, Կարել, որ գտել եք այն, այդ իսկական ճշմարտությունը:

— Է՛ի, թե մախաթն էլ գտնեի...

## ***Երրորդ մաս***

— ... Դատական նիստը՝ գործով Շտեպան Մանյայի, քսանվեց տարեկան, բատրակ, ամուրի, դավանանքը՝ ռեֆորմատորական, և Պոլանա Հորդուբալովայի, ծնյալ Դուրկոլովա, այրի, երեսունմեկ տարեկան, դավանանքը՝ հռոմեակաթողիկական, որոնք մեղադրվում են իբրև գործակիցներ Կրիվոյ գյուղի բնակիչ Յուրայ Հորդուբալի կանխավ մտածված սպանության մեջ, հայտարարում եմ բացված:

Մեղադրյալ Մանյա, ոտքի՛: Դուք լսեցիք մեղադրական եզրակացությունը: Ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք:

Մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչում: Յուրայ Հորդուբալին չի սպանել, այն գիշեր քնել է իր տանը, Ռիբարիում: Գերանի տակ եղած փողերն ստացել է տիրոջից իբրև



Հաֆյայի օժիտ: Ապակեգործից պմաստ չի գնել: Տանտիրուհու հետ կապի մեջ չի եղել: Ուրիշ ասելիք չունի:

Մեղադրյալ Հորդուբալովան իրեն մեղավոր չի ճանաչում: Մպանության մասին ոչինչ չի իմացել, միայն առավոտյան... Այն հարցին, թե որտեղից գիտեր, որ ամուսինն սպանված է, հայտնում է, որ տեսել է միայն ջարդված պատուհանը: Բատրակի հետ կապի մեջ չի եղել: Ամաստը մի քանի տարի առաջ գնել էր ինքը տան տերը: Մարդասպանը ավելի շուտ ներս է մտել պատուհանից, որովհետև դուռն ամբողջ գիշեր փակ է եղել:

Մեղադրյալը նստում է՝ տգեղացած, դեղնած, հիիության վերջին շրջանում, որի պատճառով ստիպված եղան նույնիսկ գործի քննությունը արագացնել:

Դատական պրոցեսը ձգձգվում է, ենթարկվելով դատավարության անողորմ հնամոլությանը: Ընթերցվում են արձանագրություններ ու եզրակացություններ, թղթերը խշխշում են, երգվյալները ջանում են ուշադիր ու բարեպաշտ ունկնդիրների տեսք ընդունել: Մեղադրյալ կինը նստած է անշարժ, ինչպես արձան, միայն աչքերն են անհանգիստ պսպղում: Ժամանակ առ ժամանակ Շտեպան Մանյան սրբում է ճակատի քրտինքն ու աշխատում գլուխ հանել բոլոր յսածներից: Ով գիտե՞ ինչ խոչընդոտներ կան այստեղ, գործն ինչպես շուտ կտան այս ծանրակշիռ պարոնները: Գլուխը հարգալիր խոնարհած, Շտեպանը լսում է ու շրթունքները շարժում, ասես յուրաքանչյուր բառը մտքում կրկնելով:

Դատարանն անցնում է վկաների հարցաքննությանը:

Կանչվում է Վասիլի Հերիչը, Կրիվոյ գյուղի տանուտերը, բարձրահասակ, թիկնեղ մի մարդ: Նա անշտապ ու լուրջ կրկնում է երդման խոսքերը:

Վկան առաջիններից մեկն է տեսել հանգուցյալին: Ծի՞շտ է, որ այդ ժամանակ նա ասել է՝ «տան մարդու գործ է»:

— Ծիշտ է:

— Իսկ ինչո՞ւ:

— Այնպես, ենթադրությամբ, ձերդ ողորմածություն:

— Վկա Հերիչ, ձեզ հայտնի՞ է, որ Պոլանա Հորդուբալովան կապի մեջ է եղել Շտեպան Մանյայի հետ:

Վկային հայտնի է, դեռևս մինչև Հորդուբալի վերադարձը նա դրա համար հանդիմանել է Պոլանային:

— Արդյոք Հորդուբալը չի՞ նեղացրել իր կնոջը:

— Ձերդ ողորմածություն, դրա համար լավ քոթակել էր հարկավոր նրան, — բռնկվում է Վասիլի Հերիչը, — քամին գլխից հանել: Նա չէր ուզում նույնիսկ ամուսնու համար ճաշ պատրաստել:

— Արդյոք Հորդուբալը կնոջից զանգատվո՞ւմ էր:

— Ոչ, չէր զանգատվում, միայն մարդկանց աչքից թաքնվում էր ու մոմի պես հավվում:

Պոլանան նստել է շիփ շիտակ ու նայում է տարածության մեջ:

Ոստիկանական հեծելավագ Հելնայր ցուցմունք է տալիս համաձայն մեղադրական եզրակացության: Նա ուշադրություն է հրավիրում իրեղեն ապացույցների վրա: Ահա հանգուցյալի խրճիթի ապակին, որը ներսի կողմից քերծված է ավմաստով: Այն օրը ցեխ էր, և հենց պատուհանի տակ ջրագուբ կար, մինչդեռ խրճիթում ցեխի ոչ մի հետք չի հայտնաբերված, և պատուհանի փոշին էլ մնացել էր անվթար:

Մեծ մարդը կարո՞ղ է այդ անցքից ներս մտնել:

— Ոչ, չի կարող: Գուլխը միայն կանցնի, իսկ իրանը կլռվի-կմնա:

Հարցաքննվում է կրտսեր ոստիկան Բիհլը: Նա կանգնած է ինչպես շքահանդեսում, համակված պաշտոնեական եռանդով: Նրա ցուցումները ճշտորեն համապատասխանում են մեղադրական ակտին: Այնաստը նա գտել է փակ արկղում: Մեղադրյալ Հորդուբալովան չուզեց բանալին տալ, հավատացնելով, թե բանալին կորել է: Արկղը կտրեցին, իսկ բանալին հետագայում գտնվեց վարսակով լցված դուլյի հատակում: Վկան Ռիբարիում գտել է նաև հանգուցյալի փողերը:

— Բացի դրանից, — ձայնը բարձրացնում է Բիհլը, — պարոն դատավոր, ես ինձ թույլ եմ տվել ևս մի բան բերել: — Բիհլը բացում է թաշկինակը: — Ես սա գտա երեկ, երբ Մանյայի գոմադրը դաշտ էին փոխադրում: Սա նետված էր աղբահորը:

Բիհլը դատավորի սեղանին է դնում մի բարակ սրածայր մետաղյա առարկա՝ ձվաձև կտրվածքով, մոտ տասնհինգ սանտիմետր երկարությամբ:

— Սա ի՞նչ է:

— Հանեցեք նկատել, սա զամբյուղ գործելու մախաթ է: Պատկանում է Մանյաների ընտանիքին և անհետացել էր սպանության օրը:

Բիհլը իրեն պահում է անխռով կերպով, սակայն ընդհանուր ուշադրությունից հոգու խորքում ցնծում է ու հրճվում: Հինգ շաբաթ նա փնտրում էր այդ անիծյալ մախաթը և, վերջապես, ահա այն:

— Մեղադրյալ, այս առարկան ծանոթ է ձեզ:

— Ոչ, ծանոթ չի:

Մռայլ, համառոտ Շտեպանը նստում է իր տեղը:

Ցուցմունք է տալիս դոկտորը: Նա պնդում է, որ սպանությունը կատարվել է ձվաձև կտրվածքի բարակ, սրածայր առարկայով: Եթե Հորդուբալը գնդակահարված լիներ, գնդակը կմնար մարմնի մեջ: Մինչդեռ գնդակի ոչ մի հետք չի հայտնաբերվել: Դոկտորը երկար-բարակ բացատրում է ծակող և հրազենային վերքերի տարբերությունը: Բացի դրանից, այդքան փոքր կալիբրի դեպքում կրակոցը պետք է կատարվի համարյա դիմահար, այնպես որ մաշկի վրա այրվածք կլիներ, կամ համենայն դեպս շապիկը կլիանձվեր:

— Վերքը կարո՞ղ էր հասցվել այս առարկայով:

— Այո, կարող էր: Չի կարելի համոզված ասել, թե հենց հատկապես սրանով, բայց համենայն դեպս այս առարկան այնքան բարակ է ու սուր, որ կարող էր այդպիսի վերք հասցնել: Խիստ հարմար իր է, — գնահատում է դոկտորը: — Այո, մահը վրա է հասել վայրկենապես:

Եվ իմպուլսով դոկտորը վազելով վերադառնում է իր տեղը:

Ցուցմունք է տալիս բանտային բժիշկը: Բոլոր նշաններից երևում է, որ Պոլանա Հորդուբալովան գտնվում է հղիության ութերորդ ամսվա մեջ:

— Մեղադրյալ, — ասում է դատավորը: — Կարող եք ոտքի չկանգնել: Ո՞վ է այն երեխայի հայրը, որին դուք սպասում եք:

— Յուրայը, — աչքերը խոնարհելով, շնջում է Պոլանան:

— Այսօր լրացավ Հորդուբալի վերադարձի հինգ ամիսը: Ուրեմն երեխան ո՞ւմն է:

Պոլանան լռում է:

Ծերուկ Մանյան հրաժարվում է ցուցմունք տալուց: Ծտեպանը նստել է, ձեռքերով երեսը ծածկած, ծերուկը կուլմաչե թաշկինակով սրբում է արցունքները:

— Ի դեպ, Մանյա, այս առարկան ծանոթ է ձեզ:

Ծեր Մանյան գլխով հաստատական նշան է անում:

— Ախր սա մեր մախաթն է, մենք սրանով զամբյուղ ենք գործում: — Եվ նա ուզում է մախաթը գրպանը խոթել:

— Ոչ, ոչ, ծերուկ, մախաթը կմնա այստեղ:

Միհայրը և Դյուլյան նույնպես հրաժարվում են ցուցմունքեր տալուց: Դատավորը կանչել է տալիս Մարիա Յանոշովային:

— Ցուցմունքներ կտա՞ք:

— Կտամ:

— Ծի՛շտ է, որ ձեր եղբայր Ծտեպանը դրդել է ձեր ամուսնուն՝ սպանելու Յուրայ Հորդուբալին:

— Ծի՛շտ է, ձերդ ողորմածություն: Բայց իմ ամուսինը այդպիսի բան անողը չի: Թեկուզ հարյուր ջուխտ եզ տաս նրան:

— Ծտեպանը տանտիրուհու հետ սիրային կապերի մեջ եղե՞լ է:

— Հապա ո՞նց, հենց ինքն էր տանը պարծենում: Ձերդ ողորմածություն, Ծտեպանը վատ մարդ է: Լավ բան չէր նրան նշանել փոքր երեխայի հետ: Փառք ասածու, որ ամեն ինչ խանգարվեց:

— Վկա, իսկ ինչ կասեք, ձեր եղբայրը շա՞տ չարացավ, երբ Հորդուբալը դուրս արեց նրան:

Մարիան երեսին խաչ է հանում:

— Ա՛խ, տեր աստված, ման էր գալիս ոնց որ սատանա, ոչ ուտում էր, ոչ խմում, նույնիսկ ծխելը թողեց...

Վկային արձակում են, նա դռների մեջ, արտասովելով, շուռ է գալիս:

— Ա՛խ, ձերդ ողորմածություն, ինչքա՛ն եմ խղճում Ծտեպանին: Թույլ կտա՞ք մի քիչ փող թողնեմ նրան սնունդի համար:

— Ոչ, ոչ, մայրիկ, նրան փող հարկավոր չի: Գնացեք աստուծով:

Դատարանը կանչում է վկա Յանոշին:

— Յուցմունքեր կտա՞ք:

— Ինչպես պարոնները կհրամայեն:

— Ճիշտ է, որ Շտեպանը առաջարկել է ձեզ՝ սպանել Հորդուբալին:

Վկան աչքերն է թարթում շփոթված:

— Ճիշտ է, Շտեպանը մի բանի մասին ակնարկեց ինձ: Իբրև դու աղքատ ես, Յանոշ, բայց կարող ես հարստանալ:

— Ինչպե՞ս հարստանալ:

— Ի՞նչ իմանամ, ձերդ ողորմածություն: Ախր վաղուցվա բան է, ամեն ինչ մարդու միտ կմնա՞: Փողի մասին խոսք եղել է: Շտեպանը միշտ էլ փող ունեցել է: Ինչո՞ւ պիտի ամեն տեսակ հիմարությունների հիշեմ: «Դու հիմար ես», — ասում է: Թող հիմար լինեմ: Հիմարության համար մարդուն կախաղան չեն հանում:

— Վկա, իսկ դուք հարբած չե՞ք:

— Ձերդ ողորմածություն, մի թաս խմել եմ՝ սրտապնդվելու համար: Պետերի հետ խոսելը վախենալու է:

Դատական նիստը հետաձգվում է հաջորդ օրվան:

Շտեպանն աշխատում է հայացքով հանդիպել Պոլանային, սակայն Հորդուբալի այրին, ասես ոսկրից պատրաստած արձան, չի նայում Շտեպանին, գնում է՝ լղար, տզեղ, անճարակի: Շտեպանի վրա ոչ ոք չի նայում, միայն Պոլանայի: Շտեպանն ի՞նչ: Թխամորթ մի երիտասարդ: Մե՛ծ բան՝ տղամարդը տղամարդ է սպանել: Իսկ ահա երբ սեփական կինն է սպանում ամուսնուն, — տե՛ր իմ աստված: Ի՞նչ կյանք է, եթե նույնիսկ կնոջդ չես կարող հավատալ: Մարդ իր տանը, սեփական անկողնում էլ չի կարող հանգիստ լինել. մեկ էլ տեսար սպանեցին, ոնց որ անասուններին սպանդանոցում:

Հորդուբալի այրին անցնում է ասես ատելության պարիսպների միջով, որոնք միանում են իրար նրա ետևում, ինչպես պիքներ:

— Է՛հ, Հորդուբալը պիտի կացնահար աներ սրան, ոնց որ թալակն ընկած գելին: Կախել է հարկավոր, — հուզվում են կանայք:

— Թե որ Պոլանային չկախեն, կնշանակի աշխարհում արդարություն չկա:

— Կնանիք, ձեններդ կտրեք, — փնթփնթում են գյուղացիները: — Կնանքանց չեն կախում: Բանտ կդնեն մինչև մեռնելը:

— Եթե կանայք դատելու լինեին, կկախեին այդ զիբիլին:

— Ես ինքս օղակը նրա վիզը կզցեի:

— Թո՛ղ, Մարիկա, եղ կնկա գործ չի: Իսկ այ Շտեպկային հաստատ կկախեն:

— Այ կտեսնես, Շտեպկային կկախեն, բայց ախր նա սպանել է օտար մարդու: Չէ, թե որ Պոլանային չկախեն, բոլոր կնանիք կսկսեն մարդկերանց սպանել:

— Դե, նրան ո՞նց կախեն, ախր երեխի է սպասում:

— Չէ մի, երեխի՛: Սատանա կծնի, ոչ թե երեխա:

Դատարանը կանչում է վկա Միմոն Ֆազեկեշին, մականվանյալ Լեցա: Սպանության օրը նա Պոլանային տեսել է Շտեպանի հետ: Մեղադրյալները կանգնած էին առվի ափին:

— Շտեպան Մանյա, դուք շարունակում եք պնդել, որ այն օրը Կրիվոյում չեք եղել ու չե՞ք տեսնվել Պոլանա Հորդուբալովայի հետ:

— Չեմ եղել, ձերդ ողորմածություն:

— Մեղադրյալ Հորդուբալովա, Մանյան խոսե՛լ է ձեզ հետ առվի ափին:

— Չէ, չի խոսել:

— Իսկ ոստիկաններին ասել եք՝ այո:

— Նրանք ստիպեցին ինձ:

Ցուցմունքներ է տալիս Յուլիանա Վարվարինովան, Հորդուբալի հարևանուհին:

— Այո, Հորդուբալին շատ անգամ եմ տեսել: Ման էր գալիս գլուխը կորցրած: Երբ նա Շտեպանին արձակեց, Պոլանան նրան հաց էլ չէր տալիս: Իսկ բատրակի համար, պատահում էր, հավեր էր տապակում ու խոճկորներ: Ամեն գիշեր քարշ էր գալիս նրա մոտ, ախոռ: Տեր աստված, ողորմա նրան, — դժգոհությամբ թքում է հարևանուհին, — միայն թե, հենց որ Հորդուբալը վերադարձավ, աստված գիտի, թե նա որտեղ էր հանդիպում իր սիրեկանի հետ: Էլ քարշ չէր գալիս ախոռ: Վերջին ժամանակները Հորդուբալը շարունակ ման էր գալիս — լապտերով, երևում է՝ հետևում էր:

— Լսեցեք, վկա, դուք տեսե՛լ եք, թե ինչպես Հորդուբալն Շտեպանին շարտեց ցանկապատի վրայով: Այն ժամանակ Շտեպանի հագին պիջակ կա՞ր:

— Պիջակ չկար, ձերդ ողորմածություն, միայն շապիկ-վարտիքով էր:

— Այդպես, առանց պիջակի՞ գնաց:

— Էդպես է, էդպես, ձերդ ողորմածություն:

— Հետևաբար, պիջակը, որ հիմա նրա հագին է, մյուս իրերի հետ մնաց Հորդուբալի տա՛նը: Շտեպան Մանյա, դուք ե՛րբ գնացիք Կրիվոյ պիջակի ետևից:

Շտեպանը վեր է կենում տեղից, շփոթված աչքերը թարթելով:

— Դուք պիջակը տարաք այն գիշեր, երբ Յուրայ Հորդուբալն սպանվեց: Կարող եք նստել:

Եվ դատախազը հաղթական դեմքով ինչ-որ բան է նայում իր թղթերում:

— Մեղադրյալներին դուրս տարեք, — կարգադրում է դատարանի նախագահը: — Վկա Հաֆյա Հորդուբալովա:

Ներս են բերում կապուտաչյա, սիրունիկ մի աղջնակի: Լռություն, ոչ մի շունչ:

— Մի վախենա, փոքրիկ, այստեղ արի, — հայրաբար ասում է դատարանի նախագահը: — Եթե չես ուզում, կարող ես ցուցմունքներ չտալ: Դե, ինչպես, կպատասխանե՛ս:

Աղջնակը տարակուսանքով նայում է քղամիդ հագած շուրջ պարոններին:

— Ուզո՞ւմ ես պատասխանել:

Հաֆյան հնազանդորեն գլխով է անում:

— Հա:

— Մայրիկդ գնո՞ւմ էր ախոռ, երբ Շտեպանն այնտեղ էր:

— Գնում էր, ամեն գիշեր:

— Դու նրանց միասին տեսն՞ել ես:

— Տեսել եմ: Մի անգամ քեռի Շտեպանը գրկեց նրան ու զցեց դարմանի վրա:

— Դե, իսկ տան տերը, քո հայրիկը, երբևէ մայրիկիդ հետ եղե՞լ է:

— Դե, չի եղել, միայն քեռի Շտեպանը:

— Իսկ երբ հայրիկդ Ամերիկայից վերադարձավ, դրանից հետո մայրիկդ քեռի Շտեպանի հետ եղե՞լ է:

Հաֆյան գլուխը շարժում է բացասաբար:

— Իսկ ո՞րտեղից գիտես:

— Ախր տան տերը եկել էր, — ասում է աղջնակը լուրջ ու համոզված: — Էն ժամանակ քեռի Շտեպանն ասաց. «Է, ձեզ մոտ չեմ մնա. ամեն ինչ ուրիշ ձևով գնաց»:

— Տան տերը լա՞վ մարդ էր:

Հաֆյան անորոշ ուսերն է թոթվում:

— Իսկ Շտեպա՞նը:

— Հա, Շտեպանը լավն էր:

— Մայրիկը հայրիկի հետ սիրալի՞ր էր:

— Չէ, սիրալիր չէր:

— Իսկ քե՞զ հետ: Նա քեզ սիրո՞ւմ էր:

— Չէ: Չէր սիրում: Նա միայն քեռի Շտեպանին էր սիրում:

— Նրան լա՞վ էր կերակրում:

— Հա: Քեռի Շտեպանն ինձ էլ էր տալիս:

— Իսկ դու ամենից շատ ո՞ւմ ես սիրում:

Աղջնակը շփոթված կուչուձիգ է անում:

— Քեռի Շտեպանին:

— Հաֆյա, պատմիր այն վերջին գիշերվա մասին, երբ հայրիկդ մեռավ: Դու որտե՞ղ էիր քնել:

— Մայրիկի հետ քողտիկում:

— Գիշերը դու չարթնացա՞ր:

— Արթնացա: Մեկը թրխկացրեց լուսամուտը, իսկ մայրիկը նստել էր անկողնում:

— Իսկ հետո ի՞նչ եղավ:

— Հետո ոչինչ: Մայրիկն ասաց. «Քնիր, թե չէ ծեծ կուտես»:

— Եվ դու քնեցի՞ր:

— Իհարկե, քնեցի:

— Եվ այլևս ոչինչ չսեցի՞ր:

— Ոչինչ: Միայն մեկը բակում ման էր գալիս, մեկ էլ մայրիկը անկողնում չէր:

— Իսկ ո՞վ էր այնտեղ ման գալիս, չգիտե՞ս:

Հաֆյան զարմանքով բացում է բերանը:

— Ո՛վ: Հայտնի բան է, քեռի Շտեպանը: Էլ ո՞վ կլիներ մայրիկի հետ:

Դահլիճում այնպիսի լռություն է, որից մարդու շունչ է կտրվում:

— Հայտարարում եմ ընդմիջում, — շտապով ասում է նախագահը և ինքն էլ Հաֆյայի ձեռքից բռնած, դուրս է տանում նրան դահլիճից. — Դու խելոք ես, փոքրիկ, — մոմռում է նա: — Խելոք ու լավ աղջիկ ես: Քո բախտից է, որ ոչինչ չես հասկանում:

Երդվյալները գրպաններն են խառնշտորում, որպեսզի մի բան նվիրեն Հաֆյային, և խմբվում են աղջկա շուրջը, գլուխը շոյում:

— Իսկ Շտեպանն ո՞ւր է, — զրնգուն ձայնով հարցնում է Հաֆյան:

Ծանր շնչելով, նրան է մոտենում հաստիկ Հելնայը:

— Գնանք, փոքրիկ, գնանք: Ես քեզ տուն կտանեմ:

Միջանցքները լեփ-լեցուն են հասարակությամբ: Ամեն ինչ խորթում են Հաֆյայի ձեռքը՝ մեկը խնձոր, մյուսը ձու, երրորդը մի կտոր քաղցր բուլկի. բոլորը հուզված քիթներն են մաքրում թաշկինակների մեջ, կանայք առաջ են նետվում համբուրելու աղջկան ու արտասվում են: Հաֆյան շղաձգորեն կառչում է Հելնայի հաստ մատից ու քիչ է մնում ինքն էլ տոգա:

— Տես, լաց չլինես, — հորդորում է աղջկան Հելնայը: — Ես քեզ համար կոնֆետ կառնեմ:

Աղջիկն ուրախությունից վեր-վեր է ցատկում:

Դատական հետաքննությունը շարունակվում է: Գործն ասես խորամանկորեն կապած հանգույց լինի, հարկ է լինում քանդել այն մեկեն մի քանի ձեռքերով:

Դատարանը լսում է Հուսար մականվյալ Անդրեյ Պյոսայի, Ալեքսի Վորոբեցի ու նրա կնոջ՝ Աննայի, ապա հարևան Հերպակի կնոջ ցուցմունքները: Բոլորն էլ վկայում են Պոլանայի դեմ: Աստված իմ, մարդիկ ինչե՛ր ասես միայն որ չգիտեն իրար մասին: Պարզապես խայտառակություն: Հարկ չկա, որ աստված մարդկանց դատի, նրանց դատում են իրենց մերձավորները:

Ինչ-որ Միշա-տավարած ցանկություն է հայտնում հանդես գալ իբրև վկա:

— Խոսեք, վկա: Կարող եք չերդվել:

— Ի՞նչ:

— Քանի՞ տարեկան եք:

— Չեմ իմանում... Ինչի՞ս է հարկավոր: Հանուն հոր և որդու և հոգուն սրբո: Յուրայ Հորդուբալը հայտնում է ձեզ, որ Պոլանան բարի ու հավատարիմ կին է եղել նրա համար:

— Սպասեք, Միշա, ինչպե՞ս թե հայտնում է: Այդ ե՞րբ է նա ձեզ ասել:

— Ի՞նչ:

— Ե՞րբ է նա ձեզ այդ բանն ասել:

— Ա՛, երբ... Միտս չի: Էն ժամանակ անձրև էր: Նա էլ ինձ ասաց՝ Միշա, ասա նրանց, նրանք քեզ կհավատան:

— Աստված ձեզ հետ, հայրիկ, և դրա համար էլ Կրիվոյից վեր եք կացել ու եկե՛ր:

— Ի՞նչ:

— Գնացեք, գնացեք աստծով, դուք այլևս հարկավոր չեք:

— Հա՛: Դե շնորհակալ եմ: Փառք աստծու:

Ցուցմունք է տալիս ապակեգործ Ֆարկաշը:

— Շտեպան Մանյան այդ ավաստն ինձանից է գնել:

— Դուք ճանաչո՞ւմ եք այն:

— Ո՞նց չճանաչեմ: Հրես, դեղին խալով:

— Մեղադրյալ Մանյա, ոտքի: Խոստովանո՞ւմ եք, որ ավաստը գնել եք այս վկայից: Չե՞ք խոստովանում: Կարող եք նստել: Ուրանալով դուք ձեզ չեք օգնի:

Ցուցմունք են տալիս Բարանովան, Հրիցովան, Ֆեոդոր Բոբալի կինը: Է՛խ, Պոլանա, ինչպիսի՞ խայտառակություն: Բոլորը մատները քեզ վրա են տնկում, մերկացնում քո անառակությունը, ամեն մի կին քար է նետում քեզ վրա, իբրև անհավատարիմ կնոջ: Շտեպանի մասին բոլորը մոռացել են: Իզուր ես աշխատում, հսկայական փորդ չես կարող ձեռքերով ծածկել, չես կարող թաքցնել ամոթդ: Շտեպանն սպանել է, իսկ դու մեղք ես գործել: Այդ անամոթին նայեք, գլուխն էլ չի կռացնում, մի կաթիլ արցունք չի թափում, չի թավալվում գետնին: Ասես ուզում է ասել՝ դուրս տվեք, դուրս տվեք, ինձ ինչ:

— Մեղադրյալ Հորդուբալովա, ուզո՞ւմ եք որևէ բան ավելացնել վկա Մարթա Բոբալովայի ցուցմունքներին:

— Ոչ:

Ու նստեց, ինչպես արձան, առանց գլուխը խոնարհելու, առանց ամոթից կարմրելու:

Այլևս վկաներ չկան: Հիանալի: Հայտարարվում է դատական նիստի ընդմիջում մինչև հաջորդ օրը: Բայց ի՞նչ խելացի էր պատասխանում փոքրիկ Հաֆյան, հը՛, կոլեգա: Փոքրիկ երեխա, և ամեն բան տեսել է: Սարսափելի է, սարսափելի: Բայց և այնպես, նրա



պատմությունը, ոնց որ ջինջ առվակ: Այնպիսի պարզություն, ասես ոչ մի վատ բան չի էլ եղել: Մինչդեռ ամբողջ գյուղը Պոլանայի դեմ է: Ողջ չարիքը նրա մեջ է: Անշուշտ, Շտեպանն էլ է մեղավոր, սակայն Շտեպանն ինչ է, պատահական ֆիգուր: Այո, այո, կոլեգա, գյուղը հասկանում է, որ այստեղ խնդիրը թևակոխել է էթիկայի ասպարեզը: Կարելի է ասել, որ Կրիվոյ գյուղը վրեժխնդիր է լինում ոտնահարված բարոյականության համար: Այստեղ կատարվել է ոչ թե սոսկ դավաճանություն, — դավաճանությունների հանդեպ գյուղը ներողամիտ է: Եվ Պոլանան էլ մեղավոր է ոչ միայն ամուսնական դավաճանության համար: Այստեղ կատարվել է մի շատ ավելի վատ բան:

— Հատկապես ի՞նչ:

Պոլանան իր դեմ գրգռել է հասարակական զայրույթը, ամբողջ գյուղի ատելությունը:

Թող անիծվի Պոլանան: Բոլորը տեսան, թե նա ինչպես էր նստել, գլուխը վեր տնկած: Խայտառակությունից էլ չի վախենում: Երբ Բորալովան ասաց, թե կնանիք ուզում էին անառակության համար ջարդել նրա լուսամուտները, նա նույնիսկ ծիծաղեց: Այո, այո, գլուխն ավելի վեր բարձրացրեց ու քնծիծաղեց, ասես դրանով պարծենում էր: Ի՞նչ եք ասում, հարևան: Ափսոս, ես չտեսա: Գոնե լավի՛կն է: Լավի՛կ: Աստված հեռու տանի: Ասում եմ ձեզ, նա Շտեպանին կախարդել է, աչքերը կուրացրել: Նիհա՛ր-նիհար, իսկ աչքերը ոնց որ ածուխի կտորներ: Օ՛յ-օ՛յ-օ՛յ, համա թե չար կնիկ է, ասեմ ձեզ: Իսկ նրանց աղջիկը, մի տեսնեիք նրան: Ոնց որ պատկեր: Բոլորս լաց էինք լինում: Խեղճ որբուկ: Պատկերացնում եք, այդ կինը երեխայից էլ չի քաշվել: Անառակություն է արել սեփական աղջկա աչքի առաջ: Ասում եմ ձեզ, վիուկ է, վիուկ: Հարևան, ես էլ եմ ուզում տեսնել նրան:

Թողեք մեզ, բարի մարդիկ, թողեք առաջ գնանք, մենք էլ ենք ուզում այդ անամոթ կնկան տեսնել: Ոչինչ, ոչինչ, մի քիչ սեղմվեք, մի կերպ դուրս կպրծնենք, ոնց որ զատկին եկեղեցում, միայն թողեք: Է՛, ժողովուրդ, մի սեղմեք, ձեր քուրքերից էնպիսի գարշահոտություն է փչում, որ հարգելի դատավորները կխեղդվեն: Մի կողմ քաշվեք դռնից:

Ահա նա, տեսնո՞ւմ եք: Այն լղարը, որ նստել է շիփ-շիտակ: Ո՞վ կարող է մտածել, որ այդ նա է: Կին է, ոնց որ բոլոր կնանիք: Իսկ ո՞ւր է Շտեպանը: Հրեն, միայն ուսերն են երևում: Իսկ այս մեկը, որ վեր կացավ, քղամիդ հագած բարձրահասակ այդ մարդը դատախազն է: Կամաց, կամաց, թողեք լսենք:

— Պարոնայք երդվյալ ատենակալներ: Ամփոփելով սույն գործի բոլոր հանգամանքները, որ հաջողվեց պարզել շնորհիվ ոստիկանական մարմինների փայլուն աշխատանքի (դահլիճում Բիլլը բոթում է Հելնային), այլև հավասար չափով վկաների ցուցմունքների, ես իմ կողմից պարտք եմ համարում շնորհակալություն հայտնել սրանց և նրանց: Իմ ամբողջ երկարամյա դատական պրակտիկայի ընթացքում ես դեռևս չեմ հանդիպել մի դատավարության, որի ընթացքում վկաների ցուցմունքները համակված լինեին արդարության գործի հաղթանակի հանդեպ այսպիսի խոր, այսպիսի ջերմ մասնակցությամբ: Ամբողջ գյուղը, Կրիվոյի ողջ ժողովուրդը՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ հանդես եկան այստեղ մեր առջև ոչ միայն իբրև վկաներ, այլև իբրև այս անառակ կնոջը աստծու և մարդկանց առաջ մերկացնողներ: Նրան մեղադրում եմ ոչ թե ես, օրենքի ներկայացուցիչս, այլ ամբողջ ժողովուրդը: Հանցագործության համար դուք կդատեք համաձայն օրենքի տառի: Բայց այս մեղքի համար դատեք ժողովրդի խղճի օրենքով:

Դատախազը, լիովին վստահ լինելով իր նկատմամբ, մի ակնթարթ տատանվեց: «Ի՞նչ եմ խոսում մեղքի մասին: Այո, արարքներ, բայց մի՞թե դրանք հողում չեն ծնվում... Չգուշացիր, ճառող կմտցնես փակուղի. խոսիր ավելի հասարակ, չե՞ որ գործն այնպես պարզ է:

— Հարգելի պարոն երդվյալ ատենակալներ: Այս դեպքը, որ դուք պետք է քննեք, միանգամայն պարզ է, իր պարզության մեջ սարսափելի պարզ: Մեր առջև կանգնած են երեք ֆիզուրներ: Առաջինը գյուղացի Յուրայ Հորդուբալն է՝ պարզամիտ, բարեհոգի և, հավանորեն, փոքր-ինչ ծանրամիտ մի մարդ: Նա ապրում է Ամերիկայում, ծանր աշխատանքով վաստակում օրական հինգ-վեց դոլար, որոնցից չորսն ուղարկում է տուն, կնոջը, որպեսզի սա լավ ապրի: — Դատախազի ձայնը սուր կոկորդային շեշտավորում է ստանում: — Եվ արյուն-քրտինքով վաստակած այդ փողերով նրա կինը վճարում է բատրակ-սիրելեանին, որը չի խորշում ապրել պառավող տանտիրուհու հաշվին: Փողի համար ինչ միջոցի ասես, որ չի դիմի Շտեպան Մանյան: Քայքայել էմիգրանտի ընտանիքը, երեխային կտրել մորից, իսկ հետո իր սիրուհու սաղրանքով սպանել քնած տիրոջը՝ Մանյան ամեն ինչի գնում է ի սեր մի կապ դոլարների: Ինչպիսի՞ ոճրագործություն, շահամոլական ինչպիսի՞ մեղսագործություն: (Դատախազը թեթևակի տատանվում է: Այն չի, այն չի: Ոճրագործությունն ու մեղքը տարբեր բաներ են: Ախր սա դատական պրոցես է և ոչ թե աստծու դատաստան):

— Երկրորդ ֆիզուրը Հորդուբալի կինն է: Ահա նա նստած է ձեր առջև՝ սառը, խստասիրտ, հաշվենկատ: Նրա և երիտասարդ մշակի միջև չի կարող սեր լինել, անգամ մեղսական սեր, միայն անառակություն, միայն անբարոյականություն, միայն մեղք և մեղք... Կինը նրան պահում է իբրև իր վավաշոտության խաղալիք, երես է տալիս, մոռանալով սեփական աղջկան: Դրա համար աստված պատժեց նրան՝ իր անառակության պահին նա հղիացավ: Եվ ահա ամուսինը վերադառնում է Ամերիկայից: Ասես ինքը ամենաբարձրյալն է նրան ուղարկում՝ իր սեփական տան մեջ պատժելու շնությունը: Բայց Յուրայ Հորդուբալը բարեսիրտ մարդ է: Ես կարծում եմ, այստեղ ներկա գտնվող տղամարդկանցից ոչ մեկը չէր հանդուրժի այն, ինչը լռությամբ տանում է այդ հույժ համբերատար ու թուլական ամուսինը: Ինչպես երևում է, տան խաղաղությունը նրա համար ամեն ինչից թանկ էր: Հորդուբալի վերադարձից հետո դոլարների հոսանքը դադարում է: Այժմ արդեն տանտիրուհին չի կարող երիտասարդ ձրիակերին պահել, և Շտեպան Մանյան թողնում է իր մեղքի ծառայությունը: Եվ ի՞նչ: Գլխի չընկնող բարի Հորդուբալը, ակնհայտորեն կնոջ ճնշման տակ, իր աղջկա ձեռքն է առաջարկում նրան: Խոստանում է և՛ տուն, և՛ դրամ, միայն թե նա վերադառնա... Դատախազը կոկորդի մեջ զգվանքի ջղաձգություն է զգում: — Բայց այդ էլ դեռ քիչ է: Ինչպես երևում է, Շտեպանը Հորդուբալին շանտաժի է ենթարկում, ինչ-որ բանով սպառնում նրան, և այն ժամանակ նույնիսկ հույժ համբերատար այդ մարդը այլևս չի դիմանում: Նա վճռում է անպատկառ ձրիակերին: Այդ պահից Հորդուբալին պաշարում է իր կյանքի համար ունեցած վախը: Նա փորձում է ինչ-որ հեռու տեղերում, սարերից այս կողմ, աշխատանք գտնել, գիշերները թափառում է լապտերով, խուզարկելով բակը: Մակայն չարամիտ ծրագիրն արդեն կազմված է: Ծեր ամուսինը շատ է խանգարում ցանկասեր կնոջն ու ազահ բատրակին: Անառակությունն ու շահամոլությունը դաշն են կնքել նրա դեմ: Հորդուբալը հալից ընկնում է, նա այլևս չի կարող հսկել տանը, չի կարող պաշտպանվել: Եվ առավոտյան նրան գտնում են խոցված սրտով: Սպանված է: Սպանված քնած տեղը:

Եվ սա ավա՛րտ է: Դատախազն ինքն էլ է զարմանում: Մի՞թե նա չէր նախապատրաստել փայտուն, համոզիչ մի եզրափակում: Բայց դա մտքից մի տեսակ դուրս թռավ և ահա՛ վերջ: Դատախազը նստում է, ինքն էլ չիմանալով, թե դա ինչպես ստացվեց, և հարցականորեն նայում է դատարանի նախագահին: Վերջինս գլխով հավանության նշան է անում: Երդվյալները քչփչում են, քիթները ֆսֆսացնում, երկուսը բացահայտորեն սրբում են արցունքները: Դատախազը խոր հառաչում է:

Ոտքի է կանգնում Մանյայի փաստաբանը, նշանավոր իրավագետ, հզոր կազմվածքի տեր մի մարդ:

— Պարոն դատախազն իր ուժեղ ճառի վերջում հիշատակեց Յուրայ Հորդուբալի սիրտը: Թող պարոնայք երդվյալ ատենակալները թույլ տան ինձ այդ սիրտը կոչել իմ պաշտպանյալի արդարացման գործին...

Ու խոսե՛ց, խոսե՛ց... Իբր, նույնիսկ մեղադրող կողմն ընդունում է, որ դատական էքսպերտիզայի կարծիքներում տեղի ունի տարաձայնություն: Յուրայ Հորդուբալի սիրտը ծակվա՞ծ է, թե գնդակով խոցվա՞ծ: Ո՞րտեղ է հանցագործության իրական գործիքը. Մանյայի տնտեսության այդ ողորմելի մախա՛թը, թե անհայտ մարդասպանի հրազենը: Մենք մեր կողմից կգերադասեինք հավատալ նշանավոր գիտնականի հեղինակությանը, որը լիակատար որոշակիությամբ հայտարարում է փոքրակալիբր հրազենի հասցրած վերքի առկայության մասին: Եվ այսպես, պարոնայք, եթե Յուրայ հորդուբալը գնդակահարված է, ապա լիովին ակնբախ է, որ մարդասպանը Շտեպան Մանյան չէ...

Եվ այլն, և այլն... Հաստ ձեռքը թափահարելով, նշանավոր փաստաբանը քայլ առ քայլ ջախջախում է մեղադրության փաստարկները:

— Չկա իմ պաշտպանյալի մեղավորության և ոչ մի ապացույց: Մեղադրական ամբողջ ակտը անընդմեջ մի հետևություն է: Անգամ չդիմելով հարգարժան պարոնայք երդվյալների զգացմունքներին, մենք համարձակվում ենք վստահություն հայտնել, որ պարոնայք երդվյալները չեն կարող մեղադրական ակտի և դատական հետաքննության նյութերի հիման վրա Շտեպան Մանյային մեղավոր ճանաչել:

Եվ նշանավոր իրավագետը հաղթական տեսքով ու ծանրությամբ բազմում է իր բազկաթոռին:

Ճիշտ ինչպես սատանան տուփից, այդպես դուրս է ցատկում մի նոր սև ֆիգուր՝ Պոլանա Հորդուբալովայի երիտասարդ, սիրունատես փաստաբանը:

— ... Յուրայ Հորդուբալի սպանության մեջ իմ պաշտպանյալի հանցակցության և ոչ մի ուղղակի ապացույց չկա: Բոլոր ապացույցները ենթադրություններ են լոկ՝ հետևությունների եղանակով հանված գործի երկրորդական հանգամանքներից, մեղադրության հորինած վարկածային կապուկից: Պարոնայք երդվյալ ատենակալներ: Այդ ամբողջ վարկածը հիմնված է այն ենթադրության վրա, որ Պոլանա Հորդուբալովան շահագրգռված էր ամուսնու մահվամբ, կամ որ նա անհավատարիմ էր նրան: Ես կարող էի ասել՝ եթե ամուսնական անհավատարմությունը բավարար հիմքեր է տալիս սպանության համար, ապա այստեղ ներկա գտնվող տղամարդկանցից ու կանանցից, գյուղերում ու քաղաքներում ապրող մարդկանցից քանի՛-քանիսներն այժմ ողջ չէին լինի... Հարց է ծագում՝ մենք որտեղի՞ց գիտենք Պոլանա Հորդուբալովայի անհավատարմության մասին: Ճշմարիտ է, այստեղ մեր առջև տողանցեց ամբողջ գյուղը, ցուցմունք տալով ընդդեմ

մեղադրյալի: Սակայն մտածեցեք, պարոնայք, մեզանից ո՞վ է համոզված իր մերձավորների ու հարևանների նկատմամբ: Ձեզանից ո՞վ գիտե, թե շրջապատողները նրա մասին ինչեր են ասում: Թերևս, շատ ավելի վատ բաներ, քան այս դժբախտ կնոջ մասին: Անգամ ամենաանբասիր վարքը ձեզ չի պաշտպանի անճիշտ մեկնություններից ու նվաստացուցիչ բամբասանքից: Մեղադրող կողմը բաց չթողեց ոչ մի վկայի, որը կուզենար սևացնել անպաշտպան կնոջը...

— Ես բողոքում եմ վկաներին վիրավորելու դեմ, — բացականչում է դատախազը:

— Այո, այո, դա անհարկի է, — նկատում է դատարանի նախագահը: — Պարոն պաշտպան, խնդրում եմ ձեռնպահ մնալ նման հարձակումներից:

Սիրունատես պարոնիկը քաղաքավարությամբ ու շտապ գլուխ է տալիս:

— Խնդրեմ: Եվ այսպես, դատարանը լսեց բոլոր վկաներին, որոնք ցանկացան հանդես գալ Պոլանա Հորդուբալովայի դեմ: Սակայն դատարանը մոռացել է ևս մեկ, ես կասեի՝ գլխավոր վկայի: Այդ վկան սպանված Յուրայ Հորդուբալն է: — Սիրունիկ պարոնը օդի մեջ մի թուղթ է ճոճում: — Պարոնայք երդվյալ ատենակալներ: Մահվանից տասն օր առաջ Կրիվոյ գյուղի բնակիչ Յուրայ Հորդուբալը ստորագրել է ահա այս կտակը: Նա ասես կանխագգացել է, որ կպահանջվի իր միջամտությունը, և պատվիրել է կտակում գրել հետևյալ խոսքերը: — Երիտասարդ պաշտպանը կարդում է բարձր, պաթետիկ ձայնով. «Իմ ամբողջ ունեցվածքը՝ շարժական ու անշարժ, կտակում եմ կնոջս՝ Պոլանա Հորդուբալովային, ծնյալ Դուրկոյովա, նրա սիրո և ամուսնական հավատամտության համար»: Այսպիսին է Յուրայ Հորդուբալի կտակը, այդպիսին է նրա ցուցմունքն այս գործում: Այսօր լսեցի՞ք տավարած Միշայի խոսքերը: «Յուրայ Հորդուբալը հայտնում է ձեզ, որ Պոլանան բարի և հավատարիմ կին է եղել նրա համար»: Խոստովանում եմ, ես ինքս ցնցվեցի այդ խոսքերից, դրանք հնչեցին ինչպես այն աշխարհից եկած ձայն: Իսկ այդ խոսքերն ահավասիկ այստեղ են, ձեր առջև, թղթի վրա: Վկայությունը այն միակ մարդու, որն իրոք ճանաչում էր Պոլանանյին: Բատրակ Մանյան պարծեցել է քրոջը, թե կապված է տանտիրուհու հետ: Ահա թե ինչ է դուրս տվել բատրակը, և ահա (կտտոց կտակին) Պոլանայի ամուսնու խոսքերը ամենաբարձրյալի առաջ: Պարոնայք, ինքներդ որոշեցեք, թե ո՞ւմ հավատալ...

Երիտասարդ փաստաբանը մտխոհ խոնարհում է գլուխը:

Եվ այսպես, եթե մեջտեղից վերանում է իմ պաշտպանյալի անհավատարմության վերսիան, դրանով իսկ վերանում են նաև ամուսնուց ազատվելու ամեն կարգի դրդապատճառները: Բայց ախր նա ութամյա հղիության մե՞ջ է, — կառարկեն ինձ: Ա՛խ, պարոնայք, կարելի է բերել բազմաթիվ բժշկական հեղինակությունների վկայություններ, որոնք նշում են, թե որքան սխալներ են պատահում հղիության ժամկետները որոշելիս: — Եվ ճարպիկ պարոնիկը թվարկում է ամբողջ մի շարք հեղինակություններ ու գիտական կարծիքներ:

Շտեպանի ընկած-ելած փաստաբանը գլուխն է օրորում: Է՛հ, գործը փչացրեց: Երդվյալները գիտնական փաստարկներ չեն սիրում: Բայց կտակի հանգամանքը ճարպիկ է մտածված:

— Պարոնայք երդվյալ ատենակալներ, պատկերացրեք, որ դուք դատեցիք այս կնոջը, և Յուրայ Հորդուբալի երեխան, Պոլանայի հավատարմության ու ամուսնական սիրո

կենդանի ապացույցը, աշխարհ եկավ բանտում, գրանցվեց իբրև անառակի որդի... Պարոնայք երդվյալ ատենակալներ, այն ամենի անունով, ինչը մեզ համար սուրբ է, նախագգուշացնում են ձեզ դատական սխալից, որը կարող է կործանել դեռևս չծնված մանկանը:

Միրունիկ պարոնը նստում է ու անուշահամ թաշկինակով քրտինքը սրբում:

— Ծնորհավորում են, կոլեգա, — փսփում է նրա ականջին դատական խոշոր գայլը: — Վատ չէր, վատ չէր:

Մինչդեռ դատախազն արդեն բարձրանում է ռեպիկի համար: Նրա դեմքը կաս-կարմիր է կտրել, ձեռքերը դողում են:

— Երեխա՛ որ երեխա, — բացականչում է նա խռպոտ ձայնով: — Կոլեգա պաշտպան: Այստեղ խոսեց Յուրայ Հորդուբալի երեխան՝ Հաֆյան: Պետք է ենթադրել, որ դուք նրա խոսքերը չե՞ք անվանի (բռունցքի հարված սեղանին) զրպարտություն: Հուսո՛վ են: (Միրունիկ փաստաբանը ուսերը թողնելով, գլուխ է տալիս): Սակայն ես ձեզանից շնորհակալ եմ Յուրայ Հորդուբալի կտակի համար: Դա միակ բանն է, որ պակասում էր այստեղ, — դատախազն ուղղվում է ողջ հասակով մեկ, — ավարտելու համար իսկական դիվային կերպարանքը այս կնոջ, որը, արդեն կազմելով իր բթավուն ու թուլական, բարի ամուսնու սպանության ծրագիրը, ի պաշտպանություն իրեն հորինում է նաև այս վերջին նուրբ ուրվագիծը: Ստիպել դժբախտին իր ողջ կարողությունը կտակել միայն նրան, միաժամանակ բարոյական ալիքի նման ինչ-որ բան տալով այս կնոջը: «Նրա սիրո՛ւ և ամուսնական հավատարմության համար: Եվ բարի մարդը հնազանդորեն ստորագրում է այն: Պատրաստ է: Այժմ արդեն ոչ մի հատիկ գելլեր չի հասնի փոքրիկ Հաֆյային, ամեն ինչ ընկավ անառակուհու ձեռքը՝ սիրելանի համար, իր մեղսալից կրքերին հագուրդ տալու համար...

Դատախազը գայրույթից խեղդվում է: Հիրավի, այդ արդեն դատավարություն չէ, այլ աստծու դատաստան, ուր նշավակում են մարդկային մեղքերը: Լսելի է, թե հասարակ աստվածավախ ժողովուրդն ինչպես է ծանր ու լարված շնչում դահլիճում:

— ... Եվ ահա ամենուր թափանցող ճառագայթն ընկավ Յուրայ Հորդուբալի գործի վրա: Այն ցինիկ, անդգա, շահախնդիր կամքը, որ անգրագետ Հորդուբալին հարկադրել էր երեք խաչ դնել այս սարսափելի մերկացնող կտակի տակ, նույն ահավոր կամքը, պարոնայք, ուղղություն է տվել մարդասպան Մանյայի ձեռքին: Գյուղական այս ողորմելի ալֆոնսը եղել է ոչ միայն անառակության գործիք: Սակայն ամեն ինչի մեղավորը այդ կինն է, — բացականչում է դատախազը, մատնացույց անելով Պոլանային: — Այս կտակով նա մերկացված է: Միայն սատանան կարող էր այսպիսի դժոխային ծաղրուծանակ հորինել: «Նրա սիրո՛ւ և ամուսնական հավատարմության համար»... Հեզաբել Հորդուբալովա, վերջապես խոստովանո՞ւմ եք, որ սպանել եք Յուրայ Հորդուբալին:

Պոլանան բարձրանում է տեղից կապտության աստիճան գունատված, հղիությունից այլանդակված: Նրա ատամները շարժվում են անձայն:

— Լռե՛ք, տիրուհի, լռե՛ք, — անակնկալ հնչում է մի խռպոտ, ընդհատվող ձայն: — Ես ինքս ամեն ինչ կասեմ:

Շտեպան Մանյան կանգնել է, հոգեկան լարվածությունից կորացած:

— Հարգ... հարգելի դատավորներ, — կակազում է մեղադրյալը և հանկարծ անզուսպ հեկեկանքը ցնցում է նրան:

Դատախազը որոշ զարմանքով թեքվում է դեպի Շտեպանը:

— Հանգստացեք, Մանյա, դատարանն ուրախ կլինի ձեզ լսելու:

— Այդ ես... այդ ես... — հեծկտում է Շտեպանը: — Ես... ես... ուզում էի վրեժ լուծել նրանից... նրա համար որ... ինձ դուրս նետեց... ցանկապատի վրայով... Մարդիկ ծիծաղում էին ինձ վրա... Ես չէի կարողանում քնել... շարունակ մտածում էի... թե ոնց վրեժ լուծեմ... Ու գնացի...

— Դուռտ ձեր առաջ տանտիրուհի՞ն բացեց, — ընդհատում է նախագահը:

— Չէ, տանտիրուհին... տանտիրուհին ոչինչ չգիտեր: Ես երեկոյան... ոչ ոք չտեսավ... տան տերը պատկել էր խրճիթում...

Դահլիճում Բիկը վրդովմունքով բոթում է Հելնային:

— Սուտ է, սուտ: — Բիկը կորցրել է իրեն: — Նա չէր կարող չարդախ ընկնել, եգիպտացորենը ներսից լցված է դռան ետևը: Հելնայ, ես առավոտյան եղել եմ այնտեղ: Հենց հիմա դատարանին կհայտնեմ...

— Նստիր, — մռայլվում է Հելնայն ու քաշում Բիկի թևքից: — Համարձակվիր միայն խցկվել, տխմար:

— ... Իսկ գիշերը, — կակազելով շարունակում է Շտեպանը, աչքերն ու քիթը սրբելով, — գիշերը... ցած իջա այնտեղից... ու մտա խրճիթ: Տան տերը քնած էր, իսկ ես այդ մախաթով... Ոչ մի կերպ... չէր մտնում... իսկ նա պատկել ու չէր շարժվում... — Շտեպանն օրորվում է, ուղեկցորդը մի բաժակ ջուր է տալիս նրան: Շտեպանն ազահորեն խմում է ու ճակատի քրտինքը սրբում: — Իսկ հետո... ավաստով ապակին կտրեցի... ու փողերն առա, որ կողոպտելու նման լինի... Եվ նորից բարձրացա չարդախ ու լուսամուտից իջա ցած... Շտեպանը չունչը ետ է բերում: — Իսկ հետո... տիրուհու լուսամուտը թակեցի... իբր, եկել եմ պիջակի համար:

— Պոլանա Հորդուբալովա, դա ճիշտ է:

Պոլանան վեր է կենում, շրթունքները սեղմելով:

— Ծիշտ չի: Նա չի թակել:

— Տիրուհին ոչինչ չի իմացել, — խառնաշփոթ ձևով պնդում է Շտեպանը: — Եվ մեր մեջ բան էլ չի եղել: Ծիշտ է, մի անգամ ուզեցի գցել դարմանի վրա, բայց նա դիմադրեց... իսկ այդ ժամանակ ներս եկավ Հաֆյան: Եվ էլ ոչինչ չի եղել: Էն աստված, ոչինչ:

— Շատ լավ, Շտեպան, — ասում է դատախազն ու ամբողջ մարմնով առաջ թեքվում: — Բայց ես էլի մի հարց ունեմ: Ես դա պահել էի մինչև հարմար բոլակն, առաջ դա ինձ հարկավոր չէր: Պոլանա Հորդուբալովա, արդյոք ճիշտ է, որ մինչև Շտեպան Մանյան դուք ունեցել եք ուրիշ սիրելան՝ բատրակ Պավել Դրևոտան:

Պոլանան բերանով ջղաձգորեն օդ է որսում ու բռնում է գլուխը: Ուղեկցորդները, թևի տակ մտած, նրան դուրս են տանում դահլիճից:

— Դատական նիստն ընդհատում եմ, — հայտարարում է նախագահը: — Նոր հանգամանքների կապակցությամբ, որոնք պարզվեցին շնորհիվ մեղադրյալ Մանյայի խոստովանության, դատարանը վաղը կմեկնի ոճրագործության վայրը:

Հորդուբալի բակում Բիլին սպասում է դատարանի ժամանելուն: Ահա գալիս են նրանք, կարևոր պարոնները: Բիլը հանդիսավորությամբ պատվի է առնում: Ցանկապատի վրայով աչքերը չռած նայում են ճամփին հավաքված մարդիկ, ասես սպասելով աստված գիտե ինչ հրաշքի:

Այսօր Բիլի համար մեծ օր է:

Նա երդվյալներին առաջնորդում է չարդախ:

— Խնդրեմ: Չարդախը նույն վիճակում է, ինչ այն ժամանակ. սպանության օրվանից այստեղ ոչ ոք ոտք չի դրել: Դեռևս այն ժամանակ եզիպտացորենի ամբողջ մի կույտ թափված էր դռան ետևում: Եթե որևէ մեկը փորձեր դուռը բացել, եզիպտացորենը կթափվեր աստիճանների վրա:

Բիլը սեղմում է դուռը, և չարդախից եզիպտացորենի ոսկի անձրև է տեղում:

— Պարոնայք, հուսով եմ, որ ձեզ համար դժվար չի լինի վերև բարձանալ, — քաղաքավարությամբ ասում է Բիլը:

Չարդախը լցված է եզիպտացորենով. մարդ ուզում է փովել դրա վրա ու վեր-վեր ցատկել: Ահա և պատուհանը: Մանյան իբր դրա միջով դուրս է եկել:

— Բայց ախր պատուհանը ներսից փակված է սողնակով, — ասում է երդվյալներից մեկը, գործարար եղանակով զննելով չարդախը: — Եթե սպանության օրվանից ոչ ոք այստեղ չի եղել, ապա Մանյան չէր կարող այս պատուհանից դուրս գալ:

Եվ իսկապես էլ չէր կարող. լուսամուտագոգին շարված է, անշուշտ, տարիներով հավաքված ինչ-որ փոշոտ սրվակների ու թիթեղյա տուփերի ամբողջ մի մարտկոց: Գյուղացիներն ինչեր ասես, որ չեն պահում: Պատուհանից դուրս գալուց առաջ Մանյան նախ պետք է մի կողմ դներ այդ անպետք բաները, այնպես չէ՞: Դե, իհարկե: Իսկ ի՞նչ կա այնտեղ ներքևում, պատուհանի տակ:

— Մեր ներքևում այն սենյակն է, ուր տեղի է ունեցել սպանությունը, իսկ խրճիթի առջև փոքրիկ պարտեզն է: Խնդրեմ, հետևեք ինձ:

Դատարանը հանդիսավորությամբ հետևում է դեպի պարտեզը: Պատուհաններից մեկի շրջանակը հանված է:

— Ահա այստեղ ապակին կտրված էր: Ուղիղ մեր վերևում չարդախի պատուհանն է, որտեղից իբր թե Մանյան դուրս է թռել: — Եվ Բիլը համեստորեն ավելացնում է. — Սպանությունից անմիջապես հետո ես ուշի-ուշով զննել եմ պարտեզը և պատուհանի տակ ոչ մի հետք չեմ հայտնաբերել: Իսկ մարդերը հենց նոր էին փորված, նախորդ օրը անձրև էր եկել...

Դատարանի նախագահը հավանությամբ գլխով է անում:

— Շտեպանը ակնհայտորեն ստում է: Սակայն դուք պետք է սպանությունից անմիջապես հետո զննեիք պարտեզը:

Բիհլը շրիկացնում է կրուկները:

— Պարոն դատավոր, ես չեի ուզում եզիպտացորենը շաղ տալ: Բայց ապահովության համար չարդախի դուռն անմիջապես մեխեցի, այնպես որ ոչ ոք չէր կարող այնտեղ ընկնել: Այսօր առավոտյան ես այդ մեխերը հանեցի, իսկ դռանն ամրացրի մի կտոր թել:

— Հիանալի է, հիանալի. ես տեսնում եմ, որ դուք ամեն ինչի մասին հոգացել եք, պարոն... պարոն...

— Կրտսեր ոստիկան Բիհլ:

Գլխի ևս մի ողորմած նշան:

— Պարոնայք, մեր մեջ ասած, ոչ մի կասկած չկա, որ Մանյան ստում է: Սակայն քանի որ մենք այստեղ ենք, երևի ձեզ համար անհետաքրքիր չի լինի նայել խրճիթը:

Սեղանի մոտից վեր է կենում մի բարձրահասակ, թիկնեղ, դանդաղաշարժ գլուղացի: Ընտանիքը ճաշում է:

— Սա Միհայ Հորդուբալն է, հանգուցյալի եղբայրը: Նա ժամանակավորապես տնտեսությունը վարելու գործն իր վրա է վերցրել...

Միհայ Հորդուբալը խոր գլուխ է տալիս պարոններին:

— Ակսենա, Հաֆյա, պարոններին աթոռներ տվեք, դե շուտ:

— Պետք չի, տան տեր, պետք չի: Իսկ ինչո՞ւ նոր շրջանակ չեք դնում, ախր ցուրտ է, պատուհանից միջանցիկ քամի է փչում:

— Ինչո՞ւ նորը: Շրջանակը դատարանում է, ափսոս է ուրիշն առնել:

— Հը՛մ, այդպես... Տեսնում եմ, որ դուք հոգում եք Հաֆյայի մասին: Նա խելոք երեխա է, լավ պահպանեցեք նրան, որբուկին: Սա ձեր կինն է, այնպես չէ՞:

— Այդպես է, պարոն, այդպես է: Անունը Դեմետրա է, մահուրիցեցի Իվան Վարիվոդյուկի աղջիկը:

— Տեսնում եմ, որ դուք սպասում եք ընտանիքի ավելանալուն:

— Սպասում ենք, սպասում ենք, թե որ աստված կամենա:

— Կրիվոյը ձեզ դո՞ւր է գալիս:

— Դուր է գալիս, — ասում է Միհայն ու ձեռքը թափ տալիս: — Ներեցեք, պարոն, իսկ չի՞ կարելի, որ ես էլ Ամերիկա գնամ աշխատելու:

— Ինչպես Յուրա՛յր:

— Ինչպես նա, հանգուցյալը, թող տերը երկնային արքայություն պարգևի նրան:

Եվ Միհայը պարոններին ուղեկցում է դեպի դարբասը:

Դատարանը վերադառնում է քաղաք (հե՛յ, ձիուկներ, հե՛յ, դուք կարևոր տեղեկություններ եք տանում: Իսկ գլուղը նման է Բեթղեհեմին, էն աստված):



Դատավորը դառնում է դատախազին:

— Կոլեգա, դեռևս ուշ չէ: Այս գործը երեկոյան նիստին չավարտե՞նք: Ախր այսօր ավելի քիչ ճառեր կլինեն, քան երեկ...

Դատախազը թեթևակի կարմրում է:

— Ես էլ չգիտեմ, թե երեկ ինձ հետ ինչ կատարվեց: Խոսում էի ասես տրանսի մեջ: Ասես ես դատախազ չեմ, այլ վրիժառու: Ուզում էի թնդացնել, քարոզ կարդալ...

— Ինձ թվաց, թե տաճարում եմ, — մտախոհ ասում է նախագահը: — Ամբողջ հասարակությունը շունչը պահել էր: Տարօրինակ մարդիկ են... Ինձ էլ թվաց, թե մենք դատում ենք շատ ավելի մի մեծ բան, քան ոճրագործությունը — մենք դատում ենք մեղքը...

Փառք աստծու, այսօր դահլիճը դատարկ կլինի: Սենսացիան անցավ: Ամեն ինչ կընթանա իրեն-իրեն:

Ամեն ինչ ընթացավ իրեն-իրեն: Այն հարցին, թե արդյոք Շտեպան Մանյան մեղավոր է Յուրայ Հորդուբալի կանխամտածված սպանության մեջ, — երդվյալները ութ ձայնով պատասխանեցին «այո» և չորս ձայնով «ոչ»:

Եվ այն հարցին, թե արդյոք Պոլանա Հորդուբալովան մեղավոր է սպանության մասնակցության մեջ, — բոլոր տասներկու ձայնով պատասխանեցին «այո»:

Երդվյալների այդ վճռի հիման վրա դատարանը Շտեպան Մանյային դատապարտեց ցմահ աքսորի, իսկ Պոլանա Հորդուբալովային, ծնյալ Դուրկոլովա, — աքսորի՝ տասներկու տարի ժամկետով:

Պոլանան կանգնած է, ասես անկենդան, գլուխը վեր բարձրացրած: Շտեպան Մանյան բարձրաձայն հեծկտում է:

— Տարե՛ք դրանց:

Յուրայ Հորդուբալի սիրտը կորավ և այնպես էլ չթաղվեց հողում:



1. ↑ waiter — մատուցող (անգլ.):
2. ↑ ice-cream — պաղպաղակ (անգլ.):
3. ↑ damn — սատանան տանի (անգլ.)
4. ↑ job — աշխատանք (անգլ.):
5. ↑ miner — հանքափոր (անգլ.)
6. ↑ յոթ (անգլ.):
7. ↑ jes, sir — այո, սեր (անգլ.):
8. ↑ You are a swine — դուք խոզ եք (աղավաղվ. անգլ.):
9. ↑ train — գնացք (անգլ.):
10. ↑ you bet — հանգիստ եղեք (անգլ.):
11. ↑ well — լավ (անգլ.):
12. ↑ employment — աշխատանք (անգլ.):
13. ↑ pit հանքահոր (անգլ.):
14. ↑ leave — արձակույժ (անգլ.):
15. ↑ factory — ֆաբրիկա (անգլ.):
16. ↑ Ոչ, սեր: Ես գրել չգիտեմ, սեր (անգլ.):
17. ↑ Լոնգեք, սեր (անգլ.):
18. ↑ Չէ, շնորհակալ եմ (անգլ.):
19. ↑ lowerdek — ներքևի տախտակամած (անգլ.):
20. ↑ էյ, դուք, նեգրե՛ր (անգլ.):
21. ↑ railing — այստեղ՝ ճաղեր, որոնք պահպանում են մայթը փողոցային երթևեկության ամենաբանուկ տեղերում (անգլ.):
22. ↑ mine — հանքափոր (անգլ.):
23. ↑ տղերք (անգլ.):
24. ↑ Teddi-bear — խաղալիք-արջ (անգլ.):
25. ↑ պայուսակ (անգլ.):
26. ↑ գրպանի լապտեր (անգլ.):
27. ↑ Suitcase — ճամպրուկ (անգլ.):
28. ↑ Ֆելիքս կատուն (անգլ.):
29. ↑ all right — ճիշտ է(անգլ.):
30. ↑ tin — թիթեյա տուփ (անգլ.):
31. ↑ advertisement — ռեկլամ (անգլ.):

32. ↑ car — ավտոմոբիլ (անգլ.):
33. ↑ vessel — աման, այստեղ բիդոն (անգլ.):
34. ↑ fight — կռիվ, ծեծկռտուք (անգլ.):
35. ↑ flue — գրիպ (անգլ.)